MINISTÈRE
DE L'INTÉRIEUR
Liberté
Égalité
Fraternité

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիայում օտարերկրացիների հարցերով զբաղվող գլխավոր վարչություն



Ֆրանսիայում ապաստան հայցողի ուղեցույցը

gDA սեպտեմբեր 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Պաշտպանության տարբեր տեսակները 5

1.1. Փախստականի կարգավիճակը. 5

1.2. Օժանդակ պաշտպանությունը. 5

2. Մուտքը ընթացակարգ ու ապաստան ստանալու դիմումի գրանցումը 6

2.1. Ապաստան հայցողների առաջին ընդունելությունը. 6

2.2. Ապաստան ստանալու դիմումի գրանցումը միակ պատուհանում (կենտրոնում). 7

2.2.1. Առաջին փուլ. Պրեֆեկտուրայի կողմից ապաստան ստանալու ձեր դիմումի գրանցումը. 8

- Ապաստանի ձեր հայցի քննության համար պատասխանատու Պետության նշանակումը. 8
- Ապաստան ստանալու ձեր դիմումի որակավորումը. 9
- OFPRA-ում հարցազրույցի լեզվի ընտրությունը. 10
- Ապաստան հայցելու դիմումի վկայականի տրամադրումը. 11
- Կացության իրավունքի համար դիմելու հնարավորությունը՝ ապաստանից տարբեր այլ հիմքերով. 12

2.2.2. Երկրորդ փուլ. Կարիքների գնահատումն ու OFII-ի կողմից աջակցությունը. 13

- Միակ պատուհանի կողմից ձեր առանձնահատուկ կարիքների հաշվի առնելը. 13
- Առաջարկվող աջակցությունը. 13

2.3. Ուղեկցումը՝ միակ պատուհանն անցնելուց հետո 14

3. Ապաստանի համար դիմումի քննման պայմանները 15

3.1. Գործի քննումը Փախստականների ու հայրենազուրկների պաշտպանության Ֆրանսիական գրասենյակի (OFPRA) կողմից. 15

- OFPRA-ի ձևաթղթի լրացումը. 15
- OFPRA -ի գործի ուղարկումը. 16
- OFPRA - ի կողմից հայցի գրանցման ապացույցը. 17
- Հայցի քննումը նորմալ ընթացակարգով կամ արագացված ընթացակարգով. 17
- OFPRA - ում անհատական հարցազրույցը. 18
- Բժշկական հետազոտությունը. 19
- OFPRA - ի որոշումը. 19
- OFPRA - ի որոշման բողոքարկումը. 21
- Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը ՝ OFPRA -ի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո. 21

3.2. Գործի քննումը Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարանի (CNDA) կողմից. 22

- Բողոքարկման ժամկետը. 22
- Փաստաբանի օգնությունը. 22
- Բողոքարկումը. 23
- Բողոքարկման ընդունման մասին անդորրագիրը 24
- Բողոքարկման հետաձգողական բնույթը. 24
- Գործի լսումը CNDA - ում. 26
- CNDA - ի որոշումը. 27
- Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը՝ CNDA -ի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո. 27

3.3. Ապաստան ստանալու փակ դիմումի վերաբացումը. 28

3.4. Վերաքննումը. 28

4. Ապաստան հայցողի ընդունման նյութական պայմաններն ու իր իրավունքները....30

4.1. Ապաստան հայցողի բնակեցումը. 30
- Բնակեցման վայրերը. 30
- Ուղղորդումը դեպի բնակեցում. 31
- Ընդունելությունն ու մեկնումը բնակության վայրից. 31

4.2. Ապաստան հայցողներին տրամադրվող նպաստը (ADA). 32
- Նպաստից օգտվելու պայմանները. 32
- Հայցի ձևակերպումը. 33
- Նպաստի չափը. 33
- Վճարումը. 33
- Բողոքարկումը. 33

4.3. Հասանելիությունը կրթությանը. 34

4.4. Հասանելիությունը բուժօգնությանը. 35
- Որտե՞ղ ստանալ բուժօգնություն 35
- Ինչպե՞ս ստանալ փոխհատուցումը ձեր բժշկական ծախսերի համար 36

4.5. Հասանելիությունը աշխատանքային շուկա. 38

5. Ապաստանի հայցի մերժման հետևանքները պետության տարածքում մնալու իրավունքի վրա 38

5.1. OFPRA---ի կամ CNDA---ի մերժման որոշումը. 39
- Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը՝ OFPRA -ի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո. 39
- Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը՝ CNDA -ի որոշման ընթերցումից կամ դրա ծանուցումը ստանալուց հետո. 41

5.2. Սեփական երկիր վերադառնալու համար տրամադրվող օգնությունը. 42

5.3. Դեպի սեփական երկիր հարկադրված վերադարձը. 43

6. Պաշտպանություն ստացած անձանց իրավունքները 43

6.1. Կացությունը Ֆրանսիայում. 44

6.2. Ընտանիքի կացությունը. 44
- Ձեր ընտանիքի անդամների կացության իրավունքը. 44
- Ընտանիքի վերամիավորման իրավունքը. 45

6.3. Ինտեգրացման ուղին 46
- Ընդունման և ինտեգրացման պայմանագրի ստորագրումը Ներգաղթի ու Ինտեգրացիայի Ֆրանսիական Գրասենյակի հետ (OFII). 46

6.4. Սոցիալական իրավունքները. 47
- Բնակարանի հասանելիությունը. 47
- Հասանելիությունը աշխատանքային շուկա 47
- Բուժօգնության հասանելիությունը. 48
- Սոցիալական ու ընտանեկան նպաստները. 48

6.5. Ճանապարհորդությունը դեպի արտասահման. 499

6.6. Քաղաքացիության ստացումը (Նատուռալիզացիա). 50

6.7. Պաշտպանության ավարտը. 50

ՀԱՎԵԼՎԱԾ . Օգտակար հասցեներ....52

1. Հասցեներ պետության ողջ տարածքի համար 52
- Հաստատություններ 52

■ Միջազգային կազմակերպություններ 52
■ Ասոցիացիաներ 52
2. Տեղային հասցեներ 53
■ Միակ պատուհաններ 53
■ Պրեֆետուրաներ 55
■ Ներգաղթի ու Ինտեգրացիայի Ֆրանսիական Գրասենյակի տարածքային վարչություններ (OFII) 57

1. Պաշտպանության տարբեր տեսակները

Եթե դուք ապաստան ստանալու համար հայց եք ներկայացնում, որի քննության համար պատասխանատու երկիրը Ֆրանսիան է, ապա ձեր հայցն ուսումնասիրում է պաշտպանության համար իրավասու մարմինը՝ փախստականների ու հայրենազուրկների պաշտպանության Ֆրանսիական գրասենյակը (OFPRA)՝ Ապաստանի իրավունքի ազգային դատարանի (CNDA) իրավական հսկողության ներքո:

Ապաստան ստանալու հայցի ուսումնասիրությունից հետո պաշտպանության համար իրավասու մարմինները կարող են ձեզ շնորհել պաշտպանություն՝ ապաստանի տեսքով. ձեզ շնորհվում է փախստականի կարգավիճակ, կամ տրամադրվում է օժանդակ պաշտպանություն:

1.1. Փախստականի կարգավիճակը.

Փախստականի կարգավիճակը կարող է Ձեզ շնորհվել 3 հիմքերով.

- Համաձայն փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի հուլիսի 28-ին ընդունած **ԺՆԱՅԱՆ Համաձայնագրի.** Փախստականի կարգավիճակ է շնորհվում «ցանկացած այն անձի, ով (...) *իր ռասսայական, կրոնական, ազգային պատկանելության, սոցիալական որոշակի խմբին պատկանելու կամ իր քաղաքական գաղափարների պառճառով հիմնավորած վախ կրելու կապակցությամբ գտնվում է այն երկրի տարածքից դուրս, որի քաղաքացին է նա, և չի կարող կամ այդ վախի պատճառով անհնար է օգտվել այդ երկրի պաշտպանությունից*»;
- **« սահմանադրական » ապաստան կոչվող** ապաստանի հիմքում ընկած է 1946 թվականի Սահմանադրության առաջաբանի 4-րդ պարբերությունը : Փախստականի կարգավիճակ շնորհվում է « *ցանկացած այն անձի, ով հետապնդվում է ի օգուտ ազատության կատարած իր գործունեության պատճառով* » ;
- **Միացյալ Ազգերի փախստականների հարցերով Բարձրագույն Հանձնախմբի (HCR) մանդատի համաձայն**. եթե Դուք փախստական եք ճանաչվել Փախստականների հարցերով Բարձրագույն Հանձնախմբի կողմից՝ իր կանոնադրության 6-րդ և 7-րդ հոդվածների հիման վրա:

1.2. Օժանդակ պաշտպանությունը.

Օժանդակ պաշտպանություն է շնորհվում ցանկացած այն անձի, ով չի բավարարում փախստականի կարգավիճակ ստանալու համար պայմանները, բայց ում պարագայում գոյություն ունեն լուրջ և հիմնավորված պատճառներ, որոնք թույլ են տալիս կարծել, որ նա իր երկրում ունի հետևյալ լուրջ վտանգներից մեկի իրական սպառնալիքը.

- մահապատիժ կամ մահվան դատավճիռ;
- խոշտանգում կամ անմարդկային ու ստորացուցիչ պատիժ կամ վերաբերմունք ;
- քաղաքացիական անձանց դեպքում՝ լուրջ և անձնական սպառնաիք իրենց կյանքի կամ իրենց անձի նկատմամբ այնպիսի բռնության պատճառով, որի զոհ կարող են դառնալ քաղաքացիները՝ առանց հաշվի առնելու իրենց անձնական իրավիճակը, և որը նեքին կամ միջազգային ռազմական հակամարտության արդյունք է:

Հայրենազուրկի կարգավիճակը

Ըստ հայրենազուրկներին վերաբերող 1954 թ-ի սեպտեմբերի 28-ին ընդունված Նյու-Յորքյան Համաձայնագրի՝ հայրենազուրկի կարգավիճակ կարող է շնորհվել ցանկացած այն անձի, *« որին ոչ մի պետություն չի ճանաչում որպես իր քաղաքացի՝ սեփական օրենսդրության հիման վրա »:*

Այս կարգավիճակը տարբերվում է վերը նկարագրված պաշտպանության մյուս տեսակներից և կապված չէ ապաստան ստանալու հայցի հետ: Ուստի, դուք պետք է դիմեք ոչ թե պրեֆեկտուրային, այլ պետք է անմիջապես դիմեք OFPRA, որը, ձեր դիմումն ուսումնասիրելուց հետո, կարող է ձեզ շնորհել սույն կարգավիճակը՝ վարչական դատարանի իրավասության ներքո:.

2. Մուտքը ընթացակարգ ու ապաստան ստանալու դիմումի գրանցումը

Ֆրանսիայում ապաստանի հայց ներկայացնելու համար դուք պետք է նախ և առաջ դիմեք ապաստան հայցողների առաջին ընդունման համար պատասխանատու կառույցներից մեկին (SPADA), որը և ձեզ կծանոթացնի ապաստանի ընթացակարգին ու ձեզ համար հանդիպում կնշանակի ապաստան հայցողների՝ տարածքային իրավասության միակ պատուհանում:

Այդ միակ պատուհանը կգրանցի ապաստան ստանալու համար ձեր հայցը, կորոշի, թե որ ընթացակարգով է ուսումնասիրվելու ապաստանի համար ձեր հայցը, կգնահատի, թե որքանով եք դուք խոցելի և որոշ պայմանների առկայության դեպքում ձեզ կառաջարկի ընդունման նյութական պայմանները (բնակեցում, ապաստան հայցողներին տրամադրվող նպաստ):

Կացության ինչպիսի՞ պայմաններում եք դուք կարող ապաստանի հայց ներկայացնել

Դուք կարող եք ապաստան հայցել՝ անկախ այն բանից, թե կացության իրավունքի տեսանկյունից դուք օրինական թե անօրինական կարգավիճակ ունեք: Եթե դուք Ֆրանսիա մուտք եք գործել անօրինական ճանապարհով, դա արգելք չի հանդիսանում՝ ապաստան ստանալու հայց ներկայացնելու համար:

Ձեզ խորհուրդ է տրվում ապաստան ստանալու համար ձեր հայցը ներկայացնել Ֆրանսիայի տարածք մուտք գործելուց հետո հնարավորինս շուտ, նույնիսկ եթե դուք մտել եք Ֆրանսիա մի վիզայով, որը դեռ ուժի մեջ է : Եթե դուք ձեր հայցը չներկայացնեք Ֆրանսիա մտնելուց հետո՝ 90 օրվա ընթացքում, ապա ձեր հայցի գրանցումը կարող է մերժվել:

2.1. Ապաստան հայցողների առաջին ընդունելությունը.

Ապաստան հայցողների միակ պատուհան (GUDA) դիմելուց առաջ դուք պետք է ներկայանաք ապաստան հայցողների առաջին ընդունման համար պատասխանատու կառույցներից մեկին (SPADA). Սովորաբար ասոցիացիաների կողմից ղեկավարվող առաջին ընդունելության այս կառույցները պարտավորվում են ձեզ ուղեկցել ապաստանի ընթացակարգի շրջանակներում ձեր գործողություններում:

Առաջին ընդունելության համար պատասխանատու կառույցների հանձնարարություններն են՝

- ձեզ ծանոթացնել ապաստանի ընթացակարգին;
- ձեր կարգավիճակի մասին առկա տեղեկությունների հիման վրա՝ ձեզ ծանոթացնել թվայնացված ձևաթղթին, որը և հիմք կհանդիսանա՝ ապաստանի ձեր հայցը գրանցելու համար;

- հանդիպում վերցնել միակ պատուհանում և ձեզ տալ հանդիպման մասին ծանուցագիրը: Այս ծանուցագրում նշված են լինելու այն վայրը, ամսաթիվն ու ժամը, երբ դուք պարտադիր պետք է ներկայանաք միակ պատուհան: Սովորաբար այդ հանդիպումը նշանակվում է առաջին ընդունելության համար պատասխանատու կառույց ձեր ներկայանալու պահից ամենաշատը 3 օր անց: Այդ հանդիպումը կարող է նշանակվել մինչև 10 օր անց՝ բազմաթիվ հայցերի դեպքում ;
- վերցնել միակ պատուհանում պահանջվող անձնական լուսանկարները:

Ձեր գործն ամբողջությամբ միակ պատուհան է ուղարկվում թվայնացված տեսքով:

<u>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.</u> Դուք պետք է պարտադիր կարգով ներկա գտնվեք ծանուցման մեջ նշած օրն ու ժամին: Ուշացման դեպքում ձեզ այլևս չեն ընդունի, ու դուք պետք է նորից ներկայանաք առաջին ընդունելության համար պատասխանատու կառույց՝ նոր հանդիպում ստանալու համար:

Հարկ է նշել, որ առաջին ընդունելության համար պատասխանատու կառույցների (SPADA) հանձնարարություններից է նաև ձեզ բնակեցնելը, եթե միակ պատուհանում ձեզ գրանցելուց հետո ձեզ չի տրամադրվել կացարան ապաստան հայցողների ընդունման կենտրոնում (CADA) կամ կայուն կացարանով ապահովող մեկ այլ կառույցում (տե՛ս "Ինչպե՞ս հիմնավորել կացարան ստանալու ձեր կարիքը" խորագիրը՝ կետ 2.2.1):

2.2. Ապաստան ստանալու դիմումի գրանցումը միակ պատուհանում.

Ապաստանի ձեր հայցը գրանցելու համար դուք պետք է ներկայանաք միակ պատուհան՝ համաձայն այն ծանուցման, որը ձեզ է տվել առաջին ընդունելության համար պատասխանատու կառույցը (SPADA) (տե՛ս 2.1.):

Միակ պատուհանը բաղկացած է ձեզ ընդունելիությունն ապահովելու համար հատուկ հավաքված պրեֆեկտուրայի աշխատակիցներից և Ներգաղթի ու Ինտեգրացիայի Ֆրանսիական Գրասենյակի (OFII) աշխատակիցներից:

Ֆրանսիայի մետրոպոլիայի տարածքում գոյություն ունեն 33 միակ պատուհաններ (ցուցակին կարող եք ծանոթանալ հավելվածում):

Միակ պատուհանում հանդիումները բաժանվում են երկու փուլի՝

- առաջին փուլը՝ պրեֆեկտուրայի աշխատակիցների մոտ՝ ապաստանի համար ձեր հայցը գրանցելու համար (2.2.1) ;
- երկրորդ փուլը՝ Ներգաղթի ու Ինտեգրացիայի Ֆրանսիական Գրասենյակի (OFII) աշխատակիցների մոտ՝ ձեր հատուկ կարիքները գնահատելու և ձեզ տրամադրվող օգնության պայմանները սահմանելու համար (2.2.2):

Պարտադի՞ր է արդյոք փոստային հասցե ունենալ՝ ապաստանի ձեր հայցը գրանցելու համար

Պարտադիրդ չէ փոստային հասցե ունենալ՝ ապաստանի ձեր հայցը գրանցելու համար:

Սակայն դա անհրաժեշտ կլինի՝ ապաստան հայցողի ձեր վկայականը նորացնելու համար (տե՛ս "ապաստան հայցողի վկայականի տրամադրումը" խորագիրը, 2.2.1):

2.2.1. Առաջին փուլ. Պրեֆեկտուրայի կողմից ապաստան ստանալու ձեր դիմումի գրանցումը.

Ձեզ ուղեկցում են ձեր անչափահաս երեխանե՞րը

Եթե ձեզ ուղեկցում են ձեր անչափահաս երեխաները, ապա իրենք էլ են դիտարկվում որպես ապաստան հայցողներ, ու իրենց էլ են գրանցելու ապաստան հայցողի ձեր վկայականում: Եթե երկու ծնող էլ ապաստան հայցող են, ապա երեխաների անունները գրանցվելու են մոր վկայականում, որը և կդիտարկվի որպես խնամատար ծնող գործընթացի ողջ ընթացքում: Սույն տեղեկանքը չի վկայում ձեր ընտանիքի կազմի մասին, այլ վկայում է, թե ովքեր են ընթացիկ ապաստան հայցողները:.

■ Ապաստանի ձեր հայցի քննության համար պատասխանատու Պետության նշանակումը.

Ընդունելության առաջին կառույցի կողմից միակ պատուհան փոխանցած բոլոր փաստաթղթերը հաստատելուց հետո պրեֆեկտուրայի աշխատակիցը կորոշի, թե արդյոք Ֆրանսիան է պատասխանատու ապաստանի ձեր հայցի համար:

Այդ անելու համար, այն պահից սկսած, երբ դուք 14 տարեկան եք կամ ավել, նա ձեր տասը մատների մատնահետքերը կվերցնի ու ձեզ հետ անհատական հարցազրույց կանցկացնի, որի ընթացքում դուք պետք է պատմեք ձեր ողջ անցած ուղին՝ սկսած ձեր երկրից, ու հարցազրույցի ընթացքում այդ աշխատակիցը կփորձի պարզել այն հնարավոր, օրինակ ընտանեկան կապերը, որոնք դուք կարող եք ունենալ այլ անդամ Պետություններից մեկում:

Եվ հենց այս տեղեկությունների ամբողջության հիման վրա կհաստատվի ապաստանի Ձեր հայցի քննման համար պատասխանատու երկիրը՝ համաձայն 2013 թ. հունիսի 26-ին Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի թիվ 604/2013 կանոնակարգի, որը կոչվում է Դուբլին III:

Դուբլին III-ին հարող Պետությունները

Խոսքը գնում է Եվրոպական Միության 28 անդամ երկրների և 4 համագործակից երկրների մասին՝ Գերմանիա, Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Դանիա*, Իսպանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լիտվա, Լատվիա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Չեխիայի Հանրապետություն, Ռումինիա, Միացյալ Թագավորություն, Սլովակիա, Սլովենիա, Շվեդիա, բայց նաև որպես համագործակից երկրներ՝ Իսլանդիա, Նորվեգիա, Շվեյցարիա և Լիխշտեյնշտեյն:

* *Դանիան չի ենթարկվում «Դուբլին III»--ին, բայց շարունակում է կիրառել 1990 թ. հունիսի 15--ին ստորագրած Դուբլինի համաձայնագիրը :

Իրականում, հնարավոր է, որ ապաստանի ձեր հայցի համար պատասխանատու երկիրը հանդիսանա ոչ թե Ֆրանսիան, այլ եվրոպական մեկ այլ Պետություն, օրինակ՝

- եթե մեկ այլ անդամ Երկիր ձեզ տրամադրել է կացության իրավունք կամ վիզա, որը դեռ ուժի մեջ է;
- եթե հաստատվի, որ դուք անդամ այլ Պետության արտաքին սահմանը ցամաքով, օդով կամ ծովով անցել եք անօրինական կերպով;

- եթե դուք Եվրոմիության տարածք եք մտել՝ առաջինը հատելով այն ադամ Պետության սահմանները, որտեղ դուք վիզայի կարիք չունեք;
- եթե դուք արդեն ապաստան եք հայցել որևէ այլ անդամ երկրում :

Ապաստանի ձեր հայցի ուսումնասիրությունը կարո՞ղ է արդյոք լինել մեկ այլ անդամ երկրի իրավասության ներքո

"Դուբլին III" կոչվող ընթացակարգն ի կատար է ածվել: Այս դեպքում պրեֆեկտուրան միջոցներ կձեռնարկի ու այդ անդամ երկրին կդիմի, որպեսզի վերջինս ձեզ ընդունի ու քննի ապաստանի ձեր հայցը: Նման պարագայում ձեզ տրվում է ապաստան հայցողի տեղեկանք՝ մեկ ամիս վավերականությամբ: Այն կարող է երկարացվել 4 ամիս ժամկետով: Այդ վկայականը ձեզ հնարավորություն կտա մնալ Ֆրանսիայի տարածքում այնքան ժամանակ, մինչև կկազմակերվի ձեր տեղափոխումն այն Պետություն, որը կհամաձայնի ձեզ ետ վերցնել:.

Ձեր տեղափոխումն այդ երկիր կազմակերպելու են պրեֆեկտուրայի աշխատակիցները, որոնք ձեզ ծանուցելու են ձեր տեղափոխման հետ կապված որոշման ու ձեր մեկնման պայմանների հետ: Ձեզ տրամադրվելու է 15 օր ժամանակ՝ սույն որոշումը վարչական դատարանում բողոքարկելու համար:

■ Ապաստան ստանալու ձեր դիմումի որակավորումը.

Եթե ապաստանի ձեր հայցի համար պատասխանատու երկիրը Ֆրանսիան է, ապա այդ հայցի քննման համար իրավասու է OFPRA-ն՝ լինի դա նորմալ ընթացակարգով, թե արագացված ընթացակարգով: Արագացված ընթացակարգի դեպքում քննության տևողությունը կրճատվում է ու տևում է սովորաբար 15 օր, բայց դուք օգտվում եք նույն երաշխիքներից, ինչ նորմալ ընթացակարգի ժամանակ:

- **Ապաստանի ձեր հայցն անմիջապես քննվում է արագացված ընթացակարգով**՝ հենց միակ պատուհանից սկսած, երկու դեպքում.
  - եթե Դուք ապահով երկիր համարվող մի երկրի քաղաքացի եք (այդ երկրների ցանկին կարող եք ծանոթանալ պրեֆեկտուրայում կամ OFPRA-ի ինտերնետային կայքում);
  - եթե դուք ապաստանի առաջին հայց եք ներկայացրել, որը վերջնականապես մերժվել է, ու եթե դուք վերաքննության հայց եք ներկայացնում:

- **Ապաստանի ձեր հայցը կարող է քննվել արագացված ընթացակարգով**՝ հենց միակ պատուհանից սկսած, հետևյալ դեպքերում :
  - եթե դուք հրաժարվում եք տալ ձեր մատնահետքերը;
  - Եթե դուք փորձում եք իշխանություններին խաբեության մատնել՝ կեղծ փաստաթղթեր ներկայացնելով, կեղծ տեղեկություններ տալով կամ որոշ տեղեկություններ թաքցնելով;
  - եթե դուք բազմաթիվ հայցեր եք ներկայացրել՝ տարբեր ինքնությունների ներքո;
  - Եթե դուք ուշացրել եք Ֆրանսիա մուրք գործելուց հետո ապաստան հայցելը (ավելի քան 90 օր ու ավելի քան 60 օր՝ Գյուաննայում) ;
  - եթե դուք ապաստան եք հայցում միայն երկրից ձեզ հեռացնելու որոշումը խաթարելու համար;

- եթե ձեր ներկայությունը հասարակական կարգի, հասարակական անվտանգության ու պետական ապահովության համար լուրջ սպառնալիք է ներկայացնում:

OFPRA-ն կարող է վերավորակավորել ի սկզբանե արագացված ընթացակարգով գրանցված ձեր հայցը նորմալ ընթացակարգի՝ բացառությամբ այն դեպքերի, եթե ձեր հայցը գրանցվել է արագացված ընթացակարգով՝ հասարակական հիմունքներով:

Եթե ապաստանի ձեր հայցն ուսումնասիրվում է արագացված ընթացակարգով, ապա ձեզ կտրամադրվի տեղեկատվական գրքույկի մի քանի օրինակ: Մեկ օրինակ պետք է ուղարկել OFPRA՝ ձեր հայցը ներկայացնելու ժամանակ, մեկ այլ օրինակ՝ CNDA, եթե դուք բողոքարկում եք OFPRA-ի որոշումը:

Առանձնահատուկ դեպք. Վարչության կամ դատարանի կողմից ձեզ՝ երկրից հեռացնելու մասին կամ երկրի տարածք մտնելու արգելքի մասին որոշու՞մ է ընդունվել

Եթե երկրից ձեզ հեռացնելու մասին որոշում է ընդունվել, դա ապաստան հայցելու համար արգելք չի հանդիսանում:

Եթե ապաստանի ձեր հայցն ուսումնասիրելու համար պատասխանատու պետությունը Ֆրանսիան է, ապա, հնարավոր է, որ դուք տնային կալանքի ենթարկվեք կամ կալանավորվեք:

Նման պարագայում OFPRA-ն ուսումնասիրում է ձեր հայցը շատ կարճ ժամկետում (96 ժամ)՝ տնային կալանքի ենթարկելու կամ կալանավորման մասին որոշմումն ընդունելուց հետո: Եթե ձեր հայցը մերժվում կամ անընդունելի է համարվում, ապա վերջ է դրվում երկրի տարածքում ձեր մնալու իրավունքին: Նման պարագայում դուք 48 ժամվա ընթացքում պետք է դիմեք վարչական դատավորին՝ ձեզ երկրից հեռացնելու որոշման ի կատար ածելը հետաձգելու համար այնքան ժամանակով, մինչև CNDA-ն քննության առնի ձեր բողոքարկումը: (տե՛ս կետ 5.1).

■ OFPRA -ում հարցազրույցի լեզվի ընտրությունը.

Եթե ապաստանի ձեր հայցի քննության համար պատասխանատու երկիրը Ֆրանսիան է, ապա ապաստան ստանալու համար ձեր հայցը OFPRA ներկայացնելուց հետո, բացառությամբ որոշ դեպքերի, ձեզ կլսեն OFPRA-ում անհատական հարցազրույցի ժամանակ.

Ապաստանի ձեր հայցը ներկայացնելիս դուք պետք է նշեք այն լեզուն, որով ցանկանում եք, որ ընթանա ձեր հարցազրույցը OFPRA-ում: Ձեզ կտրամադրվի OFPRA-ում հարցազրույցի համար հնարավոր լեզուների ցանկը, որոնց թիվը գերազանցում է 115-ը: Հետագայում դուք ի սկզբանե ձեր նշած լեզուն փոխելու հնարավորություն չեք ունենալու, և հենց այդ լեզվով է ընթանալու ապաստանի հայցի քննության ընթացակարգը:

Եթե ցուցակում նշված լեզուներից ոչ մեկը չեք ընտրել, ապա ձեր լսումը տեղի կունենա այն լեզվով, որի բավարար գիտելիքներ ունեք դուք:

Եթե դուք ցանկանում եք բողոքարկել այն լեզվի ընտրությունը, որն օգտագործվել է ձեր գործընթացի ժամանակ, ապա դուք դա կկարողանաք անել ապաստանի ձեր հայցին տված OFPRA-ի որոշումը CNDA-ում բողոքարկելու ժամանակ:

<u>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.</u> OFPRA-ում հարցազրույցի տևողությունն ու բնույթը պահանջում են մակերեսայինից ավել լեզվի իմացություն: Կարևոր է, որ դուք հասկանաք այն լեզուն, որն ընտրած կլինեք, ու կարողանաք արտահայտվել այդ լեզվով:

■ Ապաստան հայցելու դիմումի վկայականի տրամադրումը.

Ապաստանի ձեր հայցի համար պատասխանատու երկրի նշանակումից ու ապաստանի ձեր հայցի ընթացակարգի որակավորումից հետո ձեզ է տրվելու ապաստան հայցողի վկայական:

Եթե ապաստանի ձեր հայցն ուսումնասիրելու համար կարող է պատասխանատու լինել մեկ այլ երկիր, ապա առաջին վկայականի վավերականության ժամկետը մեկ ամիս է լինելու: Այն նորացվելու է չորս ամիս ժամկետով ամեն անգամ ("տե՛ս "Ապաստանի ձեր հայցի քննության համար պատասխանատու Պետության նշանակումը" խարագիրը՝ կետ 2.2.1).

Եթե ապաստանի ձեր հայցի քննման համար պատասխանատու է Ֆրանսիան, ապա ձեզ է տրվելու ապաստան հայցողի առաջին վկայականը, որը վավերական է լինելու՝

- տաս ամիս ժամկետով, եթե ապաստանի ձեր հայցն ուսումնասիրվում է նորմալ ընթացակարգով ;
- վեց ամիս ժամկետով, եթե ապաստանի ձեր հայցն ուսումնասիրվում է արագացված ընթացակարգով ;

Պրեֆեկտուրան կարող է մերժել առաջին վկայականը ձեզ տրամադրել միայն հետևյալ դեպքերում՝

- դուք ներկայացնում եք վերաքննության մի նոր հայց այն դեպքում, երբ վերաքննության ձեր նախորդ հայցը մերժվել է (տե՛ս 3.4.) ;
- ձեր նկատմամբ ընդունվել է ձեր երկրից բացի դեպի մի այլ երկիր օտարման վերջնական որոշում, կամ եվրոպական ձերբակալման հրամանագրի հիման վրա հանձնման որոշում, կամ միջազգային քրեական դատարանի կողմից հանձնման դիմում:

Ապաստան հայցողի վկայականը հանձնելուց հետո՝ 21 օրվա ընթացքում (8 օր՝ վերաքննության կամ գործի վերաբացման դեպքում, տե՛ս 3.3 և 3.4), դուք պետք է ուղարկեք պրեֆեկտուրայի կողմից ձեզ տրված ապաստանի հայցի ձևաթուղթը OFPRA (տե՛ս 3.1 կետը՝ "Գործի քննումը OFPRA-ում): Եթե ձեր գործն ամբողջական է, OFPRA-ն նամակով հաստատում է դրա ստացումը:.

Ապաստան հայցողի ձեր վկայականի ժամկետը երկարաձգելու համար՝ դուք պետք է ներկայանաք ձեր բնակության վայրի պրեֆեկտուրա: Այդ նոր վկայականի վավերականության ժամկետն երկարաձգվելու է վեց ամսով ինչպես նորմալ, այնպես էլ արագացված ընթացակարգի պարագայում:

Վկայականի ժամկետը երկարաձգելու համար յուրաքանչյուր դիմումի ժամանակ դուք պետք է ձեր դիմումի հետ միասին ներկայացնեք պրեֆեկտուրայի կողմից պահանջվող փաստաթղթերը, հատկապես՝ ձեր բնակության վայրն ապացուցող տեղեկանք: Իսկ ապաստանի ձեր հայցը CNDA-ում բողոկարկումն ապացուցելու համար՝ դուք պետք է ներկայացնեք ձեր բողոքարկման դիմումի ընդունման անդորրագիրը (տե՛ս կետ 3.2՝ "Գործի քննումը Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարանի (CNDA) կողմից"):

Ինչպե՞ս ապացուցել ձեր բնակության վայրի (գրանցման) մասին փաստը

2019 թ-ի հունվարի 1-ից հետո գրանցված ապաստանի հայցի դեպքում դուք կարող եք ապացուցել ձեր բնակության վայրի մասին փատը հետևյալ եղանակներով՝

- եթե դուք բնակեցված եք ապաստան հայցողների ընդունման որևէ կենտրոնում կամ կայուն ապաստան տրամադրող մեկ այլ կառույցում (ինչը բացառում է հյուրանոցային հաստատությունները), ապա կարող եք ներկայացնել բնակության մասին հայտարարագիր;

- եթե դուք բնակեցված եք մի կացարանում, որի սեփականատերն եք դուք, կամ որը վարձակալում եք, կամ եթե այդ կացարանը պատկանում է (վարձակալված է ... կողմից) ձեր ամուսնուն (կնոջը), ձեր երեխային, ծնողին, ապա դուք պետք է ներկայացնեք բնակության մասին տեղեկանք;

- այլ դեպքերում դուք պետք է բնակեցված լինեք առաջին ընդունելության համար իրավասու մարմիններից մեկում ու ներկայացնեք բնակության մասին հայտարարագիր (տե՛ս 2.1).

2019 թ-ի հունվարի 1-ից առաջ գրանցված ապաստանի հայցի դեպքում դուք կարող եք գրանցում ստանալ (բնակեցվել) վերոհիշյալ եղանակներով, ինչպես նաև՝ երորդ անձի մոտ:

Ապաստան հայցողի վկայականի ժամկետը երկարացվելու է երկրի տարածքում մնալու ձեր իրավունքի ողջ ընթացքում: Սովորաբար դուք երկրի տարածքում մնալու իրավունք եք ունենալու ապաստան ստանալու ձեր հայցի քննման ողջ ժամանակահատվածում՝ մինչև OFPRA-որոշման ծանուցումը ստանալը, իսկ OFPRA-ի որոշումը CNDA-ում բողոքարկելու դեպքում՝ մինչև վերջինիս որոշման ծանուցումը ստանալը: Հարկ եղած դեպքում՝ դա կարող է տևել մինչև բաց դատում որոշման ընթերցման օրը:

Այնուամենայնիվ, ապաստան հայցողի ձեր վկայականը կարող են ձեզանից վերցնել կամ այն չերկարաձգել հետևյալ դեպքերում՝

- OFPRA -ն ձեզ ծանուցել է ձեր հայցի մերժման կամ դրա անընդունելի լինելու մասին, ինչը հանգեցնում է երկրի տարածքում մնալու իրավունքի ավարտին (տե՛ս 5.1 կետը՝ "OFPRA-ի կամ CNDA-ի մերժման որոշումը");
- եթե CNDA-ում բողոքարկման համար տրամադրված ժամկետն ակնհայտորեն չի պահպանվել (տե՛ս 3.1՝ "Գործի քննումը Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարանի (CNDA) կողմից"):

<u>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝</u> Ապաստանի հայցի վկայականը ձեզ թույլ չի տալիս ազատ երթևեկել Եվրոմիության մյուս երկրներում:

■ Կացության իրավունքի համար դիմելու հնարավորությունը՝ ապաստանից տարբեր այլ հիմքերով.

Եթե ապաստանի ձեր հայցի համար պատասխանատու երկիրը Ֆրանսիան է, ձեզ կտեղեկացնեն ապաստանից տարբեր այլ հիմքերով կացության իրավունքի համար դիմելու հնարավորության մասին:

Ձեզ կտրամադրվի համառոտ տեղեկագիրը և կտեղեկացվի նման հայց ներկայացնելու համար տրամադրվող ժամկետը: Այդ ժամկետից հետո դուք այլևս չեք կարող կացության համար դիմել՝ բացառությամբ այն դեպքերի, եթե դուք կարողանաք ներկայացնել դիմումը հիմնավորող հանգամանքներ:

2.2.2. Երկրորդ փուլ. Կարիքների գնահատումն ու OFII-ի կողմից աջակցությունը.

■ Միակ պատուհանի կողմից ձեր առանձնահատուկ կարիքների հաշվի առնելը.

Միակ պատուհան ներկայանալու ժամանակ ու ապաստանի ձեր հայցը պրեֆեկտուրայում գրանցելուց հետո OFII աշխատակիցներից մեկը ձեզ անձամբ կընդունի՝ ընդունելության շրջանակներում ձեր հատուկ կարիքները գնահատելու նպատակով:

Այդ հարցազրույցը կոնֆիդենցիալ (գաղտնի) բնույթ է կրում և չի վերաբերում ապաստանի ձեր հայցի դրդապատճառներին: Ձեզ կտրվեն մի շարք հարցեր՝ պարզելու համար, թե արդյոք դուք ընդունելության շրջանակներում հատուկ պայմանների կարիք ունեք, թե ոչ: Եթե ձեր կարգավիճակը դրա կարիքն ունի, OFII աշխատակիցը հաշվի կառնի բոլոր հանգամանքները՝ ձեզ համապատասխան բնակեցման վայր ուղղորդելու համար:

Ձեր հարցաթերթիկին պատասխանելու կամ պատասխանելուց հրաժարվելու որոշումը պատկանում է ձեզ: Պատասխանելուց հրաժարվելու դեպքում իրավասու մարմինը պատասխանատվություն չի կրելու, եթե ձեզ տրամարվող կացարանը չհամապատասխանի ձեր կարիքներին, կամ եթե ձեր կարգավիճակի մասին տեղեկությունը բացակայի OFPRA-ում:

Եթե դուք ժամանել եք Ֆրանսիա՝ ձեր բժշկական գործով, ապա OFII-ի աշխատակիցը ձեր բժշկական գործը կոնֆիդենցիալ ծրարով կուղարկի OFII-ի բժշկին, որը և կորոշի, թե արդյոք ձեր կարգավիճակը պահանջում է ընդունելության հատուկ պայմաներ: Եթե դուք վատառողջ եք, ձեզ կուղարկեն բուժօգնություն տրամադրող որևէ կառույց կամ ամենամոտ հիվանդանոցի շտապօգնության բաժանմունք:

Եթե OFII-ի աշխատակիցը գտնի, որ դուք խոցելի եք, ապա ձեր համաձայնությամբ նա կարող է այդ մասին տեղեկացնել OFPRA-ին: Դրա նպատակն այն է, որ, անհրաժեշտության դեպքում, OFPRA-ի կողմից ապաստանի ձեր հայցի քննման համար հատուկ պայմաններ ստեղծվեն (օրինակ՝ հաշմանդամ անձանց համար հատուկ մուտք պատրաստելը, կամ նշանների լեզվով թարգմանիչ տրամադրելը): OFPRA-ն է գնահատելու հատուկ պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը:

Խոցելի վիճակից բխող կարիքները կարող են հաշվի առնվել ապաստանի ձեր հայցի ուսումնասիրության ողջ ընթացքում՝ բնակության վայրի սոցիալական աշխատակիցների կամ ձեր վարչական ու սոցիալական գործողություններում ձեզ աջակցող ասոցիացիաների կողմից:

■ Առաջարկվող աջակցությունը.

Միակ պատուհանում ձեր հանդիպման ժամանակ OFII-ն ձեզ կառաջարկի աջակցության մի փաթեթ, որը ձեզ թույլ կտա օգտվել ընդունելության նյութական պայմաններից՝ ապաստանի հիմունքներով երկրի տարածքում ձեր գտնվելու իրավունքի ողջ ընթացքում:

Միակ պատուհանում OFII-ի կողմից ձեզ տրված աջակցության այդ փաթեթի փաստաթուղթը վկայում է ձեր ընտանեկան կազմի մասին՝ ընդունելության շրջանակներում ձեզ տրամադրվող նյութական պայմանների չափը որոշելու նպատակով: Այդ փաստաթուղթը վերամշակվում է այն ժամանակ, երբ երեխա է ծնվում, կամ երբ երեխան միանում է իր ծնողներին՝ ընդունելության շրջանակներում ձեզ տրամադրվող նյութական պայմանների չափը վերահաշվարկելու համար՝ հաշվի առնելով երեխայի առկայությունը:

Ինչպես նշված է սույն ուղեցույցի 4-րդ կետում, ընդունելության նյութական պայմանները ձեզ հետևյալ իրավունքներն են տալիս՝

- բնակեցում մի վայրում, որտեղ դուք կուղղորդվեք (տե՛ս 4.1 կետը "Ապաստան հայցողի բնակեցումը"), եթե դուք դեռ բնակեցված չեք ու եթե դուք օժանդակություն ստանալու դիմում եք ներկայացնում;
- ապաստան հայցողի համար տրամադրվող նպաստը (տե՛ս 4.2 կետը՝ "Ապաստան հայցողներին տրամադրվող նպաստը")՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Մարզում կացարանների հագեցածության դեպքում OFII-ն կարող է ձեզ ուղղորդել մեկ այլ մարզ, որտեղ դուք պետք է բնակվեք ապաստանի ձեր հայցի քննության ողջ ընթացքում (տե՛ս 4.1 կետը՝ " Ապաստան հայցողի բնակեցումը՛"):

2.3. Ուղեկցումը՝ միակ պատուհանն անցնելուց հետո.

Միակ պատուհանում ձեր ունեցած հանդիպումից հետո ձեզ ուղեկցում (աջակցություն) կառաջարկվի ձեր բնակության վայրում, եթե խոսքը գնում է ապաստան հայցողների ընդունման կենտրոնի (CADA) կամ կայուն համարվող կացարանով ապահովող մեկ այլ կառույցի մասին (ոչ հյուրանոցային հաստատությունները):

Եթե դուք բնակեցված չեք նման կառույցում, ապա ձեզ կուղեկցի առաջին ընդունման համար պատասխանատու կառույցներից մեկը (SPADA), և OFII-ն ձեզ կուղղորդի դեպի այդ կառույցը (տե՛ս կետ 2.1):

Սոցիալական, իրավաբանական ու վարչական այդ աջակցությունն իր մեջ ներառում է փոստային հասցեի տրամադրումը (տե՛ս "Ինչպե՞ս ապացուցել ձեր բնակության վայրի (գրանցման) մասին փաստը" խորագիրը 2.2.1 կետում), և եթե ապաստանի ձեր հայցի համար պատասխանատու երկիրը Ֆրանսիան է, դուք աջակցություն կստանաք նաև ապաստան ստանալու համար ձեր դիմումը ձևակերպելու հարցում, որը պետք է ուղարկվի OFPRA:

<u>Ուշադրություն.</u> Եթե դուք բնակեցված եք առաջին ընդունման համար պատասխանատու կառույցներից մեկում (SPADA), դուք ինքներդ պետք է պարբերաբար գնաք ձեր նամակները ստանալու համար՝ հետևելով ընդունման համար պատասխանատու կառույցի (SPADA) կողմից նշված ցուցումներին:

3. Ապաստանի համար դիմումի քննման պայմանները

Եթե ապաստանի ձեր հայցի քննման համար պատասխանատու երկիրը Ֆրանսիան է, ապա ձեր հայցը կրուսումնասիրի Փախստականների ու Հայրենազուրկենրի պաշտպանության Ֆրանսիական գրասենյակը (OFPRA)՝ Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարանի (CNDA) իրավական հսկողության ներքո:

3.1. Գործի քննումը Փախստականների ու հայրենազուրկների պաշտպանության Ֆրանսիական գրասենյակի (OFPRA) կողմից.

Ապաստանի ձեր հայցը գրանցելիս պրեֆեկտուրան ձեզ տրամադրել է ապաստանի հայցի ձևաթուղթ, որը դուք պետք է լրացնեք ու փոխանցեք OFPRA, որպեսզի վերջինս կարողանա այն ուսումնասիրել ու կայացնել իր որոշումը:

Եթե OFPRA-ն ապաստանի ձեր հայցը մերժել է, ապա դուք այդ OFPRA-ի որոշումը բողոքարկելու հնարավորություն կունենաք Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարանում (տե՛ս 3.2 կետը՝ "Գործի քննումը Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարանի (CNDA) կողմից):

Ապաստանի հայցի ներկայացման պահին դուք չպետք է նշեք ձեզ համար ցանկալի պաշտպանության տեսակը (փախստականի կարկավիճակ կամ օժանդակ պաշտպանություն): Սա միասնական ընթացակարգ է, որի ընթացքում OFPRA- ն կուսումնասիրի ձեր հայցը նախ և առաջ փախստականի ապաստանի տեսանկյունից, այնուհետև, եթե ձեր կարգավիճակը փախստականի շրջանակների մեջ չի մտնում, OFPRA- ն կուսումնասիրի ձեր հայցը օժանդակ պաշտպանության տեսանկյունից:.

■ OFPRA-ի ձևաթղթի լրացումը.

Ձևաթուղթը պետք է լրացվի ֆրանսերեն լեզվով, այն պետք է լինի ստորագրված ու ուղեկցվի ուժի մեջ գտնվող ապաստանի հայցի վկայականի կրկնօրինակով, 2 լուսանկարով և ձեզ մոտ եղած ճամփորդական փաստաթղթով:

Եթե ապաստանի ձեր հայցն ուսումնասիրվում է արագացված ընթացակարգով, դուք պետք է փոխանցեք նաև այն տեղեկատվական ցուցագիրը, որը ձեզ է տրամադրվել ապաստանի ձեր հայցը գրանցելիս:

Այս բոլոր փաստաթղթերն անհրաժեշտ են՝ ապաստանի ձեր հայցը OFPRA-ում գրանցելու համար:

Եթե ձեզ ուղեկցող ձեր անչափահաս երեխաներին նույնպես անձնական վտանգ է սպառնում, ապա դա նպատակահարմար է ներկայացնել ապաստանի հայցի ձևաթղթում: Եթե երկու ծնողներն էլ ապաստան հայցող են, ապա ծնողներին ուղեկցող անչափահաս երեխայի նկատմամբ առկա սպառնալիքները գրանցվում են երեխայի մոր ձևաթղթում:

Ապաստանի ձեր հայցում առկա տեղեկությունները գաղտնի են (կոնֆիդենցիալ), և այդ տեղեկությունները ոչ մի պարագայում չեն փոխանցվելու ձեր երկրի իշխանություններին:

■ OFPRA -ի գործի ուղարկումը.

Երբ ձեր գործի փաթեթը պատրաստ լինի, դուք այն պետք է ուղարկեք ապաստան հայցողի ձեր վկայականը ստանալուց հետո՝ ամենաուշը 21-րդ օրը (8-րդ օրը՝ գործի վերաբացման դիմումի դեպքում - տե՛ս կետ 3.3 " Ապաստան ստանալու փակ դիմումի վերաբացումը", կամ վերաքննման դեպքում - տե՛ս կետ 3.4 "Վերաքննումը").

Ձեր գործը դուք պետք է ուղարկեք միայն փոստային ճանապարհով ու հետևյալ հասցեով՝

OFPRA
201, rue Carnot
94 136 FONTENAY-SOUS-BOIS CEDEX

Օրինակ. եթե ապաստանի հայցի ձեր վկայականը տրվել է հունվարի 10-ին, ապա դուք պետք է գործի փաթեթը OFPRA ուղարկեք ամենաուշը հունվարի 31-ին: Ուղարկամ ամսաթվի ապացույց է համարվում փոստի կնիքն իր ամսաթվով:

Ձեզ խորհուրդ է տրվում փաթեթն ուղարկել «ցպահանջ նամակով՝ ստացման անդորրագրով»՝ ընթեռնելի կերպով նշելով ձեր անունը «ուղարկող » (« expéditeur ») մասում:

Եթե ձեր գործի փաթեթը ամբողջական չլինի, ապա OFPRA-ն այն ետ կուղարկի ձեզ, և դուք կունենաք 8 լրացուցիչ օր՝ այն լրացնելու և կրկին ուղարկելու համար (4 օր՝ գործի վերաբացման կամ վերաքննման դեպքում): Եթե դուք ձեր գործը այդ ժամանակահատվածում չուղարկեք, ապա OFPRA-ն կփակի ձեր հայցը, վերջ կդրվի երկրի տարածքում ձեր իրավունքին, և ապաստան հայցողի ձեր վկայականը չի երկարաձգվի:

Դուք կարող եք փոստով լրացուցիչ նյութեր ուղարկել OFPRA ցանկացած պահի ու ընթացակարգի ցանկացած փուլում: Պահպանե՛ք OFPRA ուղարկած և OFPRA-ից ստացած բոլոր նամակների կրկնօրինակները, ինչպես նաև այդ նամակների ուղարկման ու ստացման ապացույցները: Այդ դեպքում OFPRA ուղարկած յուրաքանչյուր նամակում չմոռանաք նշել ձեր գործի համարը, որը գտնվում է ապաստանի հայցի գրանցման նամակի վրա, որը ձեզ ուղարկել է OFPRA-ն:

Գործընթացի ընթացքում դուք փոխում եք ձեր հասցե՞ն.

Եթե OFPRA-ին տրամադրած ձեր բնակության հասցեն տարբեր է ձեր գրանցման հասցեից, և եթե դուք փոխում եք ձեր բնակության վայրը, ապա այդ մասին դուք պարտադիր կերպով պետք է տեղեկացնեք OFPRA-ին հնարավորինս շուտ, ու ցանկալի է, որ դուք իրենց տեղեկացնեք էլեկտրոնային հաղորդակցության եղանակով՝ OFPRA-ի ինտերնետ կայքում (www.ofpra.gouv.fr)՝ « Démarches en ligne" խորագրում: Իրենց մոտ վերջին գրանցված հասցեին է OFPRA-ն ուղարկելու ձեր նամակները՝ ծանուցագրերն ու ապաստանի ձեր հայցին իրենց տված պատասխանը:

Եթե դուք բնակվում եք մի կացարանում, որի սեփականատերն եք դուք, կամ որը վարձակալում եք, կամ եթե այդ կացարանը պատկանում է (վարձակալված է ... կողմից) ձեր ամուսնուն (կնոջը), երեխային, ծնողին, ապա հասցեի փոփոխության դեպքում դուք պետք է տեղեկացնեք OFII-ին:

■ OFPRA - ի կողմից հայցի գրանցման ապացույցը.

Երբ ձեր գործի փաթեթն ամբողջական է ու երբ այն ստացվել է սահմանված ժամանակահատվածում, ապա OFPRA-ն ձեզ նամակ է ուղարկում, որով ձեզ տեղեկացնում է Գրասենյակի կողմից ապաստանի ձեր հայցը գրանցելու ու ձեր գործին հատկացված գրանցման համարի մասին:

Այս փաստաթուղթը պաշտոնապես հաստատում է ապաստանի ձեր հայցի գրանցումը OFPRA – ի կողմից:

Հենց այս փաստաթուղթն էլ ձեզ թույլ է տալիս երկարացնել ապաստանի հայցի առաջին վկայականի ժամկետը: (տե՛ս կետ 2.2.1 « Ապաստան ստանալու դիմումի վկայականի տրամադրումը»):

Սովորաբար հարցազրույցին հրավիրելու ծանուցումն ուղարկվում է հայցի գրանցման նամակի հետ միաժամանակ: Նման պարագայում այդ ծանուցումն առկա է գրանցման նամակի հակառակ կողմում: Եթե ծանուցումը առկա չէ հայցի գրանցման նամակի հակառակ կողմում, ապա այն ձեզ կուղարկվի ավելի ուշ՝ առանձին ծրարով:

■ Հայցի քննումը նորմալ ընթացակարգով կամ արագացված ընթացակարգով.

Ապաստան ստանալու համար ձեր հայցն ուսումնասիրում է OFPRA-ն՝ նորմալ ընթացակարգով կամ արագացված ընթացակարգով:

Ինչպես նշվել է 2.2.1 կետում ("Ապաստանի ձեր հայցի որակավորումը" խորագրում), արագացված ընթացակարգի դեպքում քննության տևողությունը կրճատվում է 15 օրվա, բայց դուք օգտվում եք նույն երաշխիքներից, ինչ նորմալ ընթացակարգի ժամանակ: Ձեր հայցը OFPRA-ի կողմից քննվում է արագացված ընթացակարգով, եթե այն որակավորվել է որպես արագացված ընթացակարգ ապաստանի ձեր հայցը միակ պատուհանում գրանցելու ժամանակ: Այնուամենայնիվ, OFPRA-ն կարող է ձեր հայցը վերաորակաորել նորմալ ընթացակարգի, եթե դա գտնի անհրաժեշտ՝ հաշվի առնելով ձեր գործի փաթեթն ու ձեր կարգավիճակի առանձնահանտկությունները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ձեր ներկայությունը հասարակական կարգի, հասարակական անվտանգության ու պետական ապահովության համար լուրջ սպառնալիք է ներկայացնում:

OFPRA-ի կարող է որոշել որակաորել ձեր հայցը արագացված գործընթացում՝ հետևյալ դեպքերում.

- դուք ներկայացրել եք կեղծ փաստաթղթեր, տվել եք կեղծ ցուցումներ կամ թաքցրել եք տեղեկություններ կամ փաստաթղթեր՝ OFPRA-ին մոլորեցնելու նպատակով;
- դուք ներկայացրել եք ապաստանի այլ հայցեր՝ տարբեր ինքնությունների ներքո;
- ապաստանի ձեր հայցի շրջանակներում ներկայացրել եք միայն այնպիսի փաստեր, որոնք ցույց չեն տալիս պաշտպանություն ունենալու անհրաժեշտությունը;
- ձեր հայտարարությունները հիմնավորված չեն, իրարամերժ են (հակասական), ակնհայտորեն կեղծ կամ քիչ հավանական ու հակասում են այն ամենին, ինչը Գրասենյակը գիտի ձեր երկրի վերաբերյալ:

Եթե դուք ցանկանում եք բողոքարկել ձեր հայցը արագացված ընթացակարգով քննելու փաստի դեմ, ապա դուք կարող եք դա անել միայն CNDA-ում բողոքարկման շրջանակներում:

■ OFPRA - ում անհատական հարցազրույցը.

Ձեր հայցը OFPRA-ի կողմից գրանցելուց հետո դուք հարցազրույցի ներկայանալու ծանուցում կստանաք: Հանդիպումից կարող եք ազատված լինել միայն հետևյալ երկու դեպքերում.

- Եթե ապաստանի ձեր հայցի շրջանակներում ներկայացրած տեղեկությունները բավարար են այն բանի համար, որ OFPRA--Ն ձեզ փախստականի կարգավաճակ շնորհի;
- Եթե բժշկական երկարատև պատճառներով ու անկախ ձեր կամքից՝ դուք չեք կարող ներկայանալ ու մասնակցել հարցազրույցին:

Եթե ձեզ հարցազրույցի են հրավիրել, ապա դուք պետք է գնաք Ֆոնտընե-Սու-Բուայում (Fontenay-sous-Bois) գտնվող OFPRA-ի նստավայր: Այնտեղ ձեզ հետ հարցազրույց կվարի «պաշտպանության պաշտոնյա» կոչվող OFPRA –ի աշխատակիցը, անհրաժեշտության դեպքում ներկա գտնվի OFPRA –ի կողմից տրամադրված թարգմանիչն այն լեզվով, որը դուք ընտրել եք միակ պատուհանում ապաստանի ձեր հայցը գրանցելու ժամանակ, կամ մեկ այլ լեզվով, որի բավարար գիտելիքներ ունեք դուք (Տե՛ս 2.2.1 կետը՝ "OFPRA-ում հարցազրույցի լեզվի ընտրությունը" խորագիրը): Այդուհանդերձ, դուք կարող եք ցանկացած պահի խնդրել, որպեսզի ձեր հարցազրույցն ընթանա ֆրանսերեն լեզվով: Այս հարցազրույցի ընթացքում ընտրված լեզուն բողոքարկելու հնարավորություն եք ունենալու միայն CNDA-ում բողոքարկման շրջանակներում:

Եթե դուք չներկայանաք այդ հարցազրույցին, ապա ձեր բացակայությունը կարող է հանգեցնել այն բանի, որ OFPRA-ն ապաստանի ձեր հայցին վերաբերող որոշում կայացնի՝ միայն ձեր գործի հիման վրա, կամ նույնիսկ կարող է հանգեցնել ձեր գործի փակմանը: Ուստի, խոչընդոտող հանգամանքների առկայության դեպքում պարտադիր է տեղեկացնել OFPRA-ին առնըվազն 48 ժամ առաջ, ինչպես նաև տեղեկացնել ցանկացած ուշացման դեպքում՝ ուղարկելով էլեկտրոնային նամակ ձեր ծանուցման մեջ առկա հասցեով:

Ցանկության դեպքում դուք կարող եք ներկայանալ հարցազրույցին փաստաբանի կամ OFPRA-ի կողմից լիազորված մի կազմակերպության հաստատված ներկայացուցչի ուղեկցությամբ, ովքեր կարող են հարցազրույցի վերջում դիտարկումներ կատարել: Սակայն հարցազրույցը չի հետաձգվի, եթե փաստաբանը կամ կազմակերպության ներկայացուցիչը ներկա չլինեն ծանուցման ժամին: Եթե դուք հաշմանդամություն ունեք, ապա կարող եք խնդրել, որ հարցազրույցի ընթացքում ձեզ ուղեկցի առողջական հարցերով ձեզ սովորաբար օգնող աշխատակիցը կամ հաշմանդամ անձանց օգնություն ցուցաբերող ասոցիացիայի ներկայացուցիչը:

Եթե ապաստանի ձեր հայցի դրդապատճառների մասին ձեզ դժվար է խոսելը, քանի որ սեռական բնույթի բռնությունների եք ենթարկվել, ապա, ցանկության դեպքում, դուք կարող եք ձեր հարցազրույցի օրը OFPRA-ին նախապես խնդրել, որպեսզի իրենց աշխատակիցը կամ թարգմանիչը լինեն այս կամ այն սեռի ներկայացուցիչներ:

Հարցազրույցը գաղտնի է: Ձեր կողմից արված հայտարարությունները գրանցվում են հարցազրույցն անցկացնող պաշտպանության պաշտոնյայի կողմից խմբագրած զեկույցում, որը, եթե դուք ցանկանում եք, ձեզ կուղարկվի որոշումն ընդունելուց առաջ (նորմալ ընթացակարգի դեպքում), կամ ամենաուշը որոշման հետ միասին (արագացված ընթացակարգի դեպքում):

Հարցազրույցի աուդիո ձայնագրություն է կատարվում նաև, սակայն դուք այն կկարողանաք ստանալ միայն այն դեպքում, երբ ՈՖՊՐԱ-ն մերժի ձեր դիմումը, ու երբ ցանկանաք մերժման այդ որոշումը բողոքարկել:

Հնարավո՞ր է արդյոք, որ ձեր հարցազրույցը տեղի չունենա Ֆոնտընե--Սու--Բուայում (Fontenay-sous-Bois) գտնվող OFPRA-ի նստավայրում

Հնարավոր է, որ ձեր հարցազրույցը տեղի չունենա Ֆոնտընե--Սու--Բուայում (Fontenay-sous-Bois), այլ աուդիովիզուալ (լսողատեսողական) հաղորդակցման միջոցով՝ ձեր

աշխարհագրական հեռավորության պառճառով (հատկապես եթե դուք գտնվում եք անդրծովյան տարածքում) կամ ձեր իրավիճակի առանձնահատկության պառճառով (եթե առողջական կամ ընտանեկան պատճառներով ձեզ համար անհնար է ներկայանալ, կամ եթե դուք գտնվում եք ազատազրկման մեջ):

Նման պարագայում ձեզ օգնող փաստաբանը կամ ասոցիացիայի ներկայացուցիչը կլինեն ձեր կողքին: Թարգմանիչը կլինի պաշտպանության պաշտոնյայի կողքին:

Եթե դուք գտնվում եք անդրծովյան Ֆրանսիայի տարածքում կամ Ֆրանսիայի որոշ այլ տարածքներում, ապա, հնարավոր է, որ ձեզ նույնպես լսի OFPRA-ի աշխատակիցը կամ OFPRA-ի Կայենի մասնաճյուղում, եթե դուք բնակվում եք Գայանայում, կամ նման այլ տարածքներից մեկում՝ OFPRA -ի շրջիկ առաքելության դեպքում:

■ Բժշկական հետազոտությունը.

OFPRA-ն կարող է ձեզանից պահանջել բժշկական հետազոտություն անցնել: Բժշկական այդ հետազոտությունն անցնելուց հրաժարվելը չի դիտարկվի որպես ձեր հայցի անբավարարվածություն ու արգելք չի հանդիսանա, որպեսզի OFPRA -ն կայացնի իր որոշումը: Եթե դուք անչափահաս եք, ու եթե ձեր անունով ապաստան ստանալու հայց է ներկայացվել այն պատճառով, որ դուք կարող եք սեռական խոշտանգումների զոհ դառնալ, ապա այդ բժշկական հետազոտությունը կֆինանսավորի OFPRA-ն: Բժիշկը OFPRA-ին կփոխանցի բժշկական վկայականը, ինչպես նաև այդ վկայականի մեկ օրինակ առձեռն կփոխանցի ձեր ծնողներին կամ ձեր օրինական ներկայացուցչին:

■ OFPRA-ի որոշումը.

✓ **Ժամկետները**

OFPRA-ի պատասխանը ստանալու ժամկետները տարբեր են. միջինը 15 օր՝ արագացված ընթացակարգի դեպքում և մինչև մի քանի ամիս՝ նորմալ ընթացակարգի դեպքում: Եթե OFPRA-ից երկար ժամանակ պատասխան չստանաք, դա չի նշանակում, որ ձեր հայցը մերժվել է: Եթե OFPRA–ն չկարողանա որոշում կայացնել 6 ամսվա ընթացքում, ապա այդ մասին գրավոր կտեղեկացվի ձեզ: Ուրեմն, դուք պարբերաբար պետք է ստուգեք ձեր փոստային նամակները:

✓ **Դրական որոշումը** (տե՛ս մաս 1 "Պաշտպանության տարբեր տեսակները")

Եթե ապաստանի ձեր հայցին դրական պատասխան տրվի, ապա.

- **Կա՛մ ձեզ փախստականի կարգավիճակ է շնորհվելու,** և OFPRA-ն ձեզ փոխանցելու է փախստականի կարգավիճակի ճանաչման որոշումը;
- **Կա՛մ ձեզ տրամադրվելու է օժանդակ պաշտպանություն**, և OFPRA-ն ձեզ փոխանցելու է օժանդակ պաշտպանության կարգավիճակի ճանաչման որոշումը, ինչպես նաև մի պաշտոնական նամակ, որը դուք կկարողանաք ներկայացնել տարբեր վարչական մարմիններում՝ ձեր կարգավիճակն ապացուցելու համար:

✓ **Բացասական պատասխան**

Ապաստանի ձեր հայցին OFPRA-ն կարող է երեք տեսակ բացասական որոշում տալ.

- **մերժման մասին որոշում,**

Դուք կարող եք բողոքարկել այդ որոշումը CNDA--ում: Ապաստանի հիմունքներով երկրում ձեր մնալու իրավունքին վերաբերող պայմանները նկարագրված են 3.1 կետում՝ "Պետության

տարածքում մնալու իրավունքի ավարտը ՝ OFPRA -ի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո" խորագրում:

- **հայցի՝ անընդունելի լինելու մասին որոշում** կարող է ընդունվել այն ժամանակ,երբ.
- ձեզ արդեն շնորհվալ է պաշտպանություն՝ ապաստանի հիմունքներով Եվրոմիության անդամ որևէ երկրում,
- դուք փախստականի կարգավիճակ կամ այլ տեսակ պաշտպանություն եք ստացել որևէ այլ երկրում, կամ եթե այնտեղ ձեզ համար իրական ընդունելության պայմաններ կան:

Դուք կարող եք բողոքարկել այդ որոշումը CNDA--ում: Ապաստանի հիմունքներով երկրի տարածքում մնալու իրավունք այլևս չունեք, նույնիսկ եթե դուք բողոքարկում եք որոշումը CNDA-ում: (Տե՛ս 3.1 կետը՝ "Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը՝ OFPRA -ի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո" խորագիրը):

- **հայցի փակման մասին որոշում** կարող է ընդունվել, եթե.
- դուք տեղեկացրել եք OFPRA-ին ապաստանի ձեր հայցը ետ վերցնելու ձեր որոշման մասին՝ հարցազրույցի ընթացքում կամ նամակով,
- դուք ձեր հայցը չեք ներկայացրել 21 օրվա ընթացքում, կամ եթե դուք չեք ներկայացել հարցազրույցին,
- դուք դիտավորյալ չեք տրամադրում ապաստանի ձեր հայցի քննման համար կարևոր տեղեկությունները,
- ձեզ հետ հնարավոր չէ կապ հաստատել, քանզի դուք OFPRA -ին չեք փոխանցել ձեր հասցեն ժամանակին,
- ձեր հայցը գրանցվել է միակ պատուհանում, սակայն դուք ձեր գործը չեք ուղարկել OFPRA՝ առանց որևէ հիմնավոր պատճառի:

Դուք կարող եք բողոքարկել այդ որոշումը ոչ թե CNDA-ում, այլ վարչական դատարանում: Ապաստանի հիմունքներով երկրի տարածքում մնալու իրավունք այլևս չունեք: (Տե՛ս "Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը՝ OFPRA -ի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո" խորագիրը՝ 3.1 կետում): Ձեր հայցի քննության փակման դեպքում, փակման որոշման ծանուցումը ստանալուց հետո՝ 9 ամսվա ընթացքում, կարող եք դիմել հայցի վերաբացման համար, և դա ընդամենը մեկ անգամ (տե՛ս կետ 3.3):

✓ OFPRA-ի որոշման ուղարկման եղանակները

OFPRA-ն ձեզ կուղարկի ֆրանսերեն լեզվով խմբագրված իր որոշումը, որը թարգմանված կլինի ձեզ համար հավանաբար հասկանալի լեզվով այն դեպքում, երբ ձեր հայցը մերժվել է:

Կարո՞ղ է արդյոք OFPRA-ն թվայնացված ճանապարհով ձեզ ծանուցել ապաստանի ձեր հայցի գրանցման մասին, ձեզ հարցազրույցի հրավիրել ու ձեզ ծանուցել իր որոշման մասին.

ՕՖՊՐԱ-ն մշակել է մի մեխանիզմ, որի նպատակն է թվայնացված կերպով անձնական էջին ուղարկել ապաստանի հայցի գրանցման մասին ծանուցումը, հարցազրույցին կանչելու ծանուցումն ու իր որոշման մասին ծանուցումը: Այս ապահով եղանակն ամբողջությամբ երաշխավորելու է ապաստանի հայցի գաղտնիությունը:

Եթե այս եղանակը կիրառվի ձեր պարագայում, ապա դուք այդ մասին կտեղեկացվեք ապաստանի ձեր հայցի գրանցման ժամանակ, կամ եթե ապաստանի ձեր հայցի համար պատասխանատու երկիր նշանակվի Ֆրանսիան, ինչը հնարավոր է այն դեպքում, եթե 2.2.1 կետում նկարագրված ձեր Դուբլինյան գործընթացը ձախողվի: Նման պարագայում ձեզ կտրամադրվի այս մեխանիզմի վերաբերյալ տեղեկատվական ձեռնարկ:

■ OFPRA-ի որոշման բողոքարկումը.

Դուք OFPRA--ի կողմից մերժման մասին ծանուցումից հետո մեկ ամիս ժամանակ ունեք՝ այդ որոշումը CNDA-ում (Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարան) բողոքարկելու համար (տե՛ս 3.2 կետը՝ "Գործի քննումը CNDA-ի կողմից"): Եթե այդ մեկ ամիս ժամանակահատվածում դուք բողոքարկման դիմում չեք ներկայացրել CNDA, կամ եթե դուք այդ դիմումը ներկայացրել եք մեկ ամիսը լրանալուց հետո, ապա երկրի տարածքում մնալու ձեր իրավունքն ավարտվում է, ապաստան հայցողի ձեր վկայականը ձեզանից վերցնելու են, կամ այն չի նորացվելու, ու դուք պարտավորվում եք լքել Ֆրանսիայի տարածքը:

Եթե դուք ցանկանում եք ստանալ իրավաբանական օգնություն՝ CNDA-ում ձեր բողոքարկումը կազմելու նպատակով, ապա այդ մասին դուք պետք է հայց ներկայացնեք OFPRA-ի պատասխանի ծանուցումը ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում: Նման պարագայում մեկ ամիս ժամանակահատվածը կառչում է ու այն կրկին սկիզբ է առնելու իրավաբանական օգնության համար ձեր դիմումի պատասխանի ծանուցումը ստանալու պահից (տե՛ս "փաստաբանի օգնությունը" խորագիրը՝ 3.2 կետում):

CNDA-ի որոշումը կարող է բողոքարկվել իր հերթին ձեր կամ OFPRA-ի կողմից՝ Պետական Խորհրդում:

■ Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը ՝ OFPRA -ի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո.

Սկզբունքայնորեն, երկրի տարածքում մնալու իրավունք դուք ունեք ապաստանի ձեր հայցի քննման ողջ ընթացքում՝ իրավաբանական բողոքարկումը ներառյալ:

Այնուամենայնիվ, երկրի տարածքում մնալու ձեր իրավունքը դուք կորցնում եք, եթե OFPRA-ն ձեր նկատմամբ կայացրել է հետևյալ որոշումներից մեկը.

1. հայցի՝ անընդունելի լինելու մասին որոշում, եթե ձեզ արդեն շնորհվել է պաշտպանություն մեկ այլ անդամ երկրում, իսկ եթե այդ երկիրը Եվրոմիության անդամ չէ, ապա այն դեպքում, եթե այնտեղ կարող է իրականացվել ձեր ընդունելությունը (տե՛ս կետ 3.3),
2. գործի փակման մասին որոշում (տե՛ս կետ 3.3.),
3. արագացված ընթացակարգով քննվող ապաստանի հայցը մերժելու մասին որոշում այն հիմքով, որ դուք ապահով երկիր համարվող երկրի քաղաքացի եք,
4. արագացված ընթացակարգով քննվող ապաստանի հայցը մերժելու մասին որոշում այն հիմքով, որ ձեր ներկայությունը պետության տարածքում հասարակական կարգին լուրջ վնաս է սպառնում,
5. որպես ընդունելի դիտարկված վերաքննության դիմումի մերժման մասին որոշում,
6. որոշում, համաձայն որի վերաքննության առաջին դիմումը համարվում է անընդունելի,
7. անընդունելի լինելու մասին կամ մերժման որոշում այն դեպքում, երբ ձեզ երկրից հեռացնելու կամ երկիր մուտք գործելու վարչական կամ իրավական արգելքի մասին որոշում է կայացվել, ու երբ ձեզ արգելվում է լքել տարածքը կամ երբ դուք կալանքի տակ եք (տե՛ս 2.2.1 կետի "Վարչության կամ դատարանի կողմից ձեզ՝ երկրից հեռացնելու մասին կամ երկրի տարածք մտնելու արգելքի մասին որոշու՞մ է ընդունվել" խորագիրը):

Նման դեպքերում ապաստան հայցողի ձեր վկայականը կարող են ձեզանից վերցնել, կամ այն կարող է չերկարաձգվել, ու Ֆրանսիայի տարածքը լքելու մասին որոշում կարող է ընդունվել ձեր նկատմամբ (տե՛ս կետ 5):

3.2. Գործի քննումը Ապաստանի Իրավունքի Ազգային Դատարանի (CNDA) կողմից.

■ Բողոքարկման ժամկետը.

Դուք OFPRA--ի կողմից մերժման մասին ծանուցումից հետո մեկ ամիս ժամանակ ունեք՝ այդ որոշումը CNDA-ում բողոքարկելու համար. Դուք կարող եք.

- OFPRA-ի կողմից մերժման կամ անընդունելիության որոշման դեպքում՝ դիմել CNDA՝ OFPRA-ի որոշումն անվավեր ճանաչելու և ձեզ պաշտպանություն շնորհելու նպատակով,
- խնդրել փախստականի կարգավիճակի ճանաչում, եթե ձեզ օժանդակ պաշտպանություն շնորհելու որոշում է ընդունվել: Նման պարագայում դուք կպահպանեք օժանդակ պաշտպանությունն ու դրանից բխող իրավունքները, քանի դեռ CNDA-ն ձեզ փախստականի կարգավիճակ չշնորհի (տե՛ս կետ 6՝ "Պաշտպանություն ստացած անձանց իրավունքները"): Դրանից բացի, եթե CNDA-ն ձեզ չշնորհի փախստականի կարգավիճակ, ապա նա չի կարող ետ վերցնել OFPRA-ի կողմից շնորհած օժանդակ պաշտպանությունը:

Այդ բողոքարկումը պետք է CNDA հասնի մեկ ամսվա վերջնաժամկետի ավարտից առաջ (օրինակ՝ եթե բացասական պատասխանը դուք փոստից վերցրել եք հունվարի 20-ին, ապա բողոքարկումը պետք է գրանցվի CNDA-ում ամենաուշը փետրվարի 21-ի կեսգիշերին): Դուք կարող եք ձեր բողոքարկումն ուղարկել CNDA ցպահանջ նամակով՝ ստացական կտրոնով, սովորական նամակով կամ ֆաքսով: Ապահովության համար, ձեր բողոքարկումը պետք է ուղարկվի մեկ ամսվա վերջնաժամկետից առաջ կամ վերջնաժամկետի օրը՝ կեսգիշերից առաջ, եթե դուք այն ուղարկում եք ֆաքսով: Եթե ձեր բողոքարկումը դատարանը ստանա մեկ ամսվա ժամկետից հետո, ապա ձեր բողոքարկումը կդիտարկվի որպես անընդունելի, այսինքն՝ այն կմերժվի առանց լսման կամ քննման:

■ Փաստաբանի օգնությունը.

Բողոքարկումը կազմելու և CNDA-ում գործի լսման շրջանակներում դուք փաստաբանի օգնությունից օգտվելու հնարավորություն ունեք: Նման պարագայում դուք անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեք: Փաստաբանի ծառայությունների համար ծախսերը լիովին վճարվում են Պետության կողմից, ու փաստաբանը ձեզանից հոնորարներ պահանջելու իրավունք չունի:

Անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դուք պետք է դիմում ներկայացնեք CNDA-ի իրավաբանական օգնության գրասենյակ՝ OFPRA-ի մերժման պատասխանի ծանուցումը ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

<u>CNDA--ի Իրավաբանական Օգնության Գրասենյակի (BAJ) հասցեն՝</u>

Cour nationale du droit d’asile
35, rue Cuvier
93 558 MONTREUIL-SOUS-BOIS

Դուք կարող եք նշել անվճար իրավաբանական օգնության շրջանակներում ձեր շահերը պաշտպանելու համար համաձայնություն տված փաստաբանի անունը, կամ խնդրել, որ CNDA-ն ձեզ համար փաստաբան նշանակի: Եթե դուք օգտվում եք անվճար իրավաբանական ծառայությունից, ապա դուք ոչ մի դեպքում չպետք է վճարեք նշանակած փաստաբանին, նույնիսկ եթե նա պահանջի դա ձեզանից:

Անվճար իրավաբանական օգնության ձեր դիմումը կարող է մերժվել միայն այն դեպքում, եթե ձեր բողոքարկումը ակնհայտորեն անընդունելի է:

Անվճար իրավաբանական օգնության ձեր դիմումի քննության ընթացքում CNDA-ում բողոքարկում ներկայացնելու համար սահմանված ժամկետը կասեցվում է այն դեպքում, եթե դուք իրավաբանական օգնության ձեր դիմումը ներկայացրել եք 15 օրվա ընթացքում: Այդ ժամկետը կրկին սկիզբ կառնի այն ժամանակ, երբ դուք ստանաք իրավաբանական օգնության գրասենյակի պատասխանի ծանուցումը ձեր դիմումին: Նման պարագայում ձեզ կտրամադրվի նոր ժամկետ՝ CNDA-ում ձեր բողոքարկումը ներկայացնելու համար: Այդ ժամկերի տևողությունը սահմանվում է հետևյալ կերպ. մեկ ամսից հանվում է այն ժամանակահատվածը, որն անցել է OFPRA-ի որոշման ծանուցումից մինչև իրավաբանական օգնության համար ձեր դիմումի օրը:

Օրինակ, եթե OFPRA-ն մերժման իր որոշման մասին ձեզ ծանուցել է հունվարի 15-ին, դուք կունենաք 15 օր՝ իրավաբանական օգնության դիմում ներկայացնելու համար: Եթե իրավաբանական օգնության համար դուք դիմեք հունվարի 20-ին, այսինքն՝ OFPRA-ի որոշման ծանուցումը ստանալուց 5 օր անց, ապա իրավաբանական օգնության գրասենյակի որոշումը ստանալուց հետո դուք ձեր տրամադրության տակ կունենաք 26 օր՝ ձեր բողոքարկումը ներկայացնելու համար:

■ Բողոքարկումը.

Պետք է պահպանել հետևյալ պայմանները.

- Նախ և առաջ, ուշադրությամբ կարդացեք OFPRA-ի բացասական որոշման ետևի մասում ներկայացված բոլոր բացատրությունները,
- բողոքարկումը պետք է խմբագրված լինի ֆրանսերեն լեզվով՝ սովորական թղթի վրա (հատուկ ձևաթուղթ գոյություն չունի), որտեղ դուք պետք է նշեք ձեր անունը, ազգանունը, ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը, քաղաքացիությունն ու բնակության վայրը,
- դուք պետք է ստորագրեք ձեր բողոքարկումը, իսկ եթե դուք անչափահաս եք, ապա ձեր օրինական ներկայացուցիչը պետք է այն ստորագրի,
- պարտադիր կերպով դուք ձեր բողոքարկմանը պետք է կցեք OFPRA-ի որոշման մեկ պատճեն,
- եթե ապաստանի համար ձեր դիմումը քննվում է արագացված ընթացակարգով, ապա դուք պետք է կցեք տեղեկատվական գրքույկի մեկ պատճեն, որը ձեզ տրվել է ապաստանի ձեր հայցի գրանցման ժամանակ (տե՛ս "Ապաստան ստանալու ձեր դիմումի որակավորումը" խորագիրը՝ 2.2.1 կետում),
- դուք պետք է պատճառաբանեք ձեր բողոքարկումը, այսինքն՝ բացատրեք, թե դուք ինչու համաձայն չեք OFPRA-ի բացասական որոշման փաստարկների հետ, կամ այն պատճառների հետ, որոնց հիման վրա OFPRA-ն ձեզ շնորհել է օժանդակ պաշտպանություն, այլ ոչ փախստականի կարգավիճակ,
- դուք պետք է կցեք ձեր տրամադրության տակ գտնվող այն բոլոր փաստաթղթերը, որոնք ապացուցում են ձեր ինքնությունն ու քաղաքացիությունը,
- դուք պետք է կցեք նաև ձեր պատմությունը լրացնող փաստաթղթերը,
- եթե դուք ցանկանում եք բողոքարկել այն լեզուն, որով անցկացվել է ձեր հարցազրույցը OFPRA-ում, դուք պետք է այդ մասին նշեք ձեր բողոքարկման մեջ, ինչպես նաև պետք է ընդգծեք այն լեզուն, որով ցանկանում եք, որ տեղի ունենա ձեր գործի լսումը: Եթե դատարանը բավարարի լեզվի ընտրության հետ կապված ձեր բողոքարկումը, ու եթե չնայած այդ հանգամանքին, դատարանը չկարողանա ձեզ տրամադրել ձեր ընտրած լեզվով թարգմանիչ, ապա ձեր գործի լսումը կկատարվի մի լեզվով, որը դուք հավանաբար հասկանում եք,

- դուք պետք է պահպանեք ձեր բողոքակման ուղարկման ու բողոքարկման ներկայացման ապացույցները, ինչպես նաև ձեր բողոքարկման մեկ պատճեն,
- դուք պետք է CNDA-ին տեղեկացնեք ձեր հասցեի ցանկացած փոփոխության մասին,
- դուք կարող եք խնդրել, որ ձեր գործը տրամադրեն ձեզ՝ ձեր բողոքարկումը գրանցելուց հետո :

Ինչ վերաբերում է ձեր քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերին, նախընտրելի է գործին կցել պատճենները ու պահպանել անձնագրի կամ ազգային ինքնության քարտի բնօրինակները: Դա ձեզ թույլ կտա փոստից ստանալ դատարանի կողմից պատվիրված նամակով ուղարկված նամակագրությունը: Դուք կարող եք ներկայացնել բնօրինակները լսման օրը՝ դատարանի անձնակազմի հարցման դեպքում:

Ինչ վերաբերում է ձեր պատմությունն ապացուցող փաստաթղթերին, ապա նախընտրելի է ձեր գործին կցել բնօրինակները՝ ձեզ մոտ պահելով դրանց պատճենները: Այդ փաստաթղթերը կարող են ձեզ ետ վերադարձվել գործի լսման օրը, եթե դուք դա պահանջեք, կամ կարող են ձեզ ավելի ուշ ուղարկվել փոստով: Ձեր պատմությունն ապացուցող փաստաթղթերը պետք է թարգմանված լինել ֆրանսերեն լեզվով: Թարգմանության բացակայության դեպքում CNDA-ն չի կարողանա դրանք օգտագործել: Սակայն պարտադիր չէ, որ թարգմանությունները կատարված լինեն հավատագրված (երդվյալ) թարգմանչի կողմից՝ բացառությամբ քաղաքացիական կացության, ոստիկանության ու իրավական փաստաթղթերի:.

Եթե ձեզ հրավիրեն բաց դատական նիստին, ապա դուք կարող եք գրավոր կերպով լրացուցիչ տեղեկություններ տրամադրել մինչև ձեր ծանուցման մեջ նշված օրը:

■ Բողոքարկման ընդունման մասին անդորրագիրը.

Ձեր բողոքարկումը գրանցելուց հետո՝ CNDA-ն ձեր կողմից նշված հասցեով ձեզ կուղարկի «բողոքարկման ստացման անդորրագիր» կոչվող փաստաթուղթը: Այդ փաստաթուղթն ապացույցն է այն բանի, որ ձեր բողոքարկումը գրանցվել է:

Բացառությամբ որոշ դեպքերի (տե՛ս ստորև "Բողոքարկման հետաձգողական բնույթը" խորագիրը)՝ այս փաստաթուղթը ձեզ թույլ է տալիս ապաստան հայցողի ձեր վկայականը երկարձգելու համար դիմել, քանի որ դուք իրավունք ունեք մնալ Ֆրանսիայի տարածքում՝ մինչև CNDA-ն ձեր դիմումին պատասխան տա:.

■ Բողոքարկման հետաձգողական բնույթը.

Ընդհանուր առմամբ, դուք կարող եք դիմում ներկայացնել CNDA՝ OFPRA-ի մերժման պատասխանը բողոքարկելու համար, ու այդ բողոքարկումն անմիջապես հետաձգողական բնույթ է կրում, այսինքն՝ դուք շարունակում եք օգտվել Ֆրանսիայի տարածքում մնալու իրավունքից՝ մինչև բողոքարկման համար տրամադրվող ժամկետի ավարտը, իսկ բողոքարկում ներկայացրած լինելու դեպքում՝ մինչև Դատարանի կողմից որոշման ընդունումը:.

Սակայն, եթե դուք զրկվեք Ֆրանսիայի տարածքում մնալու իրավունքից ապաստանի ձեր հայցին վերջանական մերժումը ստանալուց առաջ (տե՛ս "Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը՝ OFPRA -ի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո" խորագիրը՝ կետ 3.1), **ապա դուք կշարունակեք ունենալ** OFPRA-ի մերժման կամ անընդունելիության որոշման դեմ **CNDA-ում բողոքարկում ներկայացնելու իրավունքը**, սակայն այդ բողոքարկումն այլևս հետաձգողական բնույթ չի կրի.

- ✓ **կա՛մ բողոքարկումը հետաձգողական բնույթ է կրում** և ձեզ՝ երկրի տարածքից հեռացնելու միջոց կարող է կիրառվել ու ի կատար ածվել, եթե ձեր նկատմամբ ընդունվել է հետևյալ որոշումներից մեկը:

1. OFPRA-ի կողմից հայցի՝ անընդունելի լինելու մասին որոշում, եթե ձեզ արդեն շնորհվել է պաշտպանություն մեկ այլ անդամ երկրում, իսկ եթե այդ երկիրը Եվրոմիության անդամ չէ, ապա այն դեպքում, եթե այնտեղ կարող է իրականացվել ձեր ընդունելությունը (տե՛ս կետ 3.3),
2. OFPRA-ի կողմից գործի փակման մասին որոշում (տե՛ս կետ 3.3),
3. OFPRA-ի կողմից հայցի՝ անընդունելի լինելու մասին որոշումը վերաքննության առաջին դիմումին, որը ներկայացվել է միայն երկրից ձեզ հեռացնելու որոշումը խափանելու համար,

- ✓ **կա՛մ բողոքարկումը հետաձգողական բնույթ չի կրում, և դուք կարող եք վարչական դատարան դիմել՝ երկրից ձեզ հեռացնելու որոշումը հետաձգելու նպատակով՝ մինչև CNDA-ն քննի ձեր բողոքարկումը**, այն դեպքում, եթե ձեր նկատմամբ ընդունվել է հետևյալ որոշումներից մեկը :

1. արագացված ընթացակարգով քննվող ապաստանի հայցը OFPRA-ի կողմից մերժելու մասին որոշում այն հիմքով, որ դուք ապահով երկիր համարվող երկրի քաղաքացի եք,
2. արագացված ընթացակարգով քննվող ապաստանի հայցը OFPRA-ի կողմից մերժելու մասին որոշում այն հիմքով, որ ձեր ներկայությունը պետության տարածքում հասարակական կարգին լուրջ վտանգ է սպառնում,
3. OFPRA-ի կողմից որպես ընդունելի դիտարկված վերաքննության դիմումի մերժման մասին որոշում,
4. Որոշում, համաձայն որի վերաքննության դիմումը համարվում է անընդունելի OFPRA-ի կողմից այն դեպքում, երբ այդ դիմումը չի ներկայացվել երկրից ձեզ հեռացնելու որոշումը խափանելու համար,
5. անընդունելի լինելու մասին կամ մերժման որոշում այն դեպքում, երբ ձեզ երկրից հեռացնելու կամ երկիր մուտք գործելու վարչական կամ իրավական արգելքի մասին որոշում է կայացվել, ու երբ ձեզ արգելվում է լքել տարածքը կամ երբ դուք կալանքի տակ եք (տե՛ս 2.2.1 կետի "Վարչության կամ դատարանի կողմից ձեզ՝ երկրից հեռացնելու մասին կամ երկրի տարածք մտնելու արգելքի մասին որոշու՞մ է ընդունվել" խորագիրը):

Դուք հետաձգման համար դիմումը կարող եք ներկայացնել կամ երկրից ձեզ հեռացնելու որոշման դեմ ձեր բողոքարման շրջանակներում, կամ այն դեպքում, եթե երկրից ձեզ հեռացնելու որոշումը ձեզ ծանուցվել է ապաստանի ձեր հայցը գրանցելուց առաջ, ու եթե այդ որոշման դեմ բողոքարկելն այլևս հնարավոր չէ այն պատճառով, որ դուք տնային կալանքի եք ենթարկվել կամ եթե կալանավորվել եք. նման պարագայում հետաձգման դիմումը պետք է ներկայացնեք այդ արգելքից կամ կալանքից հետո՝ 48 ժամվա ընթացքում:

■ Գործի լսումը CNDA - ում.

CNDA-ն ձեզ ծանուցում կուղարկի՝ ձեր բողոքարկման քննության լսմանը ներկայանալու համար: Այդ ծանուցագիրը ձեզ կհասնի ձեր գործի լսման ամսաթվից առնվազն 1 ամիս առաջ՝ բացառությամբ այն դեպքի, երբ ձեր բողոքարկումը քննվում է արագացված ընթացակարգով: Այդ դեպքում դուք կծանուցվեք գործի լսման օրվանից 15 օր առաջ:

Այնուամենայնիվ, եթե ձեր բողոքարկումը չի պարունակում լուրջ փաստարկներ, որոնք կասկածի կենթարկեին OFPRA-ի որոշումը, ապա CNDA-ն, զեկուցողի կողմից ձեր գործի ուսումնասիրությունից հետո, կարող է կարգադրել ձեր բողոքարկումը մերժելու մասին՝ առանց դեզ գործի լսմանը հրավիրելու:

Հարկ եղած դեպքում, ձեր գործի լսումը տեղի կունենա.

- կամ Մոնտրոյում (Montreuil) գտնվող CNDA-ի շենքում, կամ Արդարադատության Պալատում (Palais de Justice) (Ile de la Cité),
- կամ աուդիովիզուալ (լսողատեսողական) հաղորդակցման միջոցով՝ Արդարատադության նախարարությանը պատկանող տարածքներից մեկում: Նման պարագայում աուդիովիզուալ (լսողատեսողական) հաղորդակցման գաղտնիությունն ու որակը երաշխավորված են լինելու:

✓ **Դատարանի կազմը.**

Ձեր բողոքարկումը քննող CNDA-ի դատական կազմը նախագահում է մեկ դատավոր: Այն բաղկացած է Միացյալ Ազգերի Փախստականների հարցերի Բարձրագույն Հանձնախմբի կողմից նշանակած որակավորված պաշտոնյայից: Դատական կազմը որոշում է կայացնում ձեր գործի վերաբերյալ՝ զեկուցողին լսելուց հետո, որը վերլուծում է ապաստանի ձեր հայցը՝ առանց ազդեցություն գործելու որոշման վրա, ու հիմնվելով ձեր ու ձեր փաստաբանի կողմից տված բացատրությունների վրա, եթե դուք փաստաբան ունեք:

Եթե Գրասենյակը որոշում է կայացրել արագացված ընթացակարգով, կամ եթե նա կարծում է, որ ձեր հայցն անընդունելի է, ապա CNDA-ի միակ դատավորն է որոշում կայացնում ձեր բողոքարկման վերաբերյալ՝ 5 շաբաթվա ժամկետում:

Իր իսկ նախաձեռնությամբ կամ ձեր դիմումի հիման վրա՝ դատարանը կարող է որոշել համախմբել դատական ողջ անձնակազմին՝ վճիռ կայացնելու համար, եթե նա գնահատի, որ հայցը չպետք է քննվի արագացված ընթացակարգով, կամ անընդունելի չէ, կամ լուրջ դժվարություն է ներկայացնում:

✓ **Թարմանությունը.**

CNDA-ն ձեզ համար ապահովում է թարգմանչի ներկայությունն այն լեզվով, որը դուք նշել եք ապաստանի ձեր հայցի գրանցման ժամանակ (տե՛ս "OFPRA-ում հարցազրույցի լեզվի ընտրությունը" խորագիրը), իսկ այդ լեզվով թարգմանչի բացակայության կամ իր ներկայությունն ապահովելու անհնարինության դեպքում, ձեզ կտրամադրվի թարգմանիչ այն լեզվով, որի բավարար իմացություն ունեք դուք: Եթե դուք ցանկանում եք ընդգծել OFPRA-ի հարցազրույցի ժամանակ թարգմանչի թերացումները, ապա դա պետք է անեք CNDA-ի ձեր բողոքարկումը կազմելու ժամանակ: Եթե ձեր գործի լսումը պետք է տեղի ունենա աուդիովիզուալ (լսողատեսողական) հաղորդակցման միջոցով, ապա թարգմանիչը գտնվելու է ձեր կողքին այն նույն դահլիճում, որտեղ ձեզ լսելու են: Եթե անհնար լինի ապահովել թարգմանչի ֆիզիկական ներկայությունը ձեր կողքին, ապա գործի լսումը տեղի կունենա միայն այն դեպքում, եթե դատարանը համոզված լինի, որ նման թարգմանիչ կարող է ներկա գտնվել այն դահլիճում, որտեղ նստում է դատարանը:

✓ **Ձեր ներկայությունը գործի լսմանը.**

Ձեր ներկայությունը գործի լսմանը խիստ ցանկալի է: Խոչընդոտող հանգամանքների կամ ուշացման դեպքում հարկավոր է այդ մասին տեղեկացնել CNDA-ին: Եթե Դուք չեք կարող ներկա գտնվել գործի լսմանը, ապա կարող եք դիմել այն հետաձգելու համար՝ գրավոր կերպով բացատրելով այն հանգամանքները, որոնց պատճառով դուք չեք կարող ներկա գտնվել: Հետաձգումը պարտադիր հանգամանք չէ, և CNDA-ի դատական կազմի նախագահն է որոշելու միայնակ, թե արդյոք պետք է հետաձգել ձեր գործի լսումը մի ավելի ուշ օրվա, թե ոչ:

✓ **Գործի լսման դռնբաց բնույթը.**

Գործի լսումը կատարավում է դռնբաց նիստում, սակայն դուք կարող եք դիմել դատական կազմի նախագահին՝ ձեր գործը դռնփակ նիստում լսելու համար, այսինք՝ որպեսզի ձեր գործը քննվի առանց կողմնակի անձանց ներկայության: Նման դեպքում ձեր դիմումն ինքնաբերաբար բավարարվում է, ու ձեր գործի լսումը կատարվելու է դռնփակ նիստում: Դա կարող է որոշել նաև դատական կազմի նախագահը:.

■ CNDA-ի որոշումը.

Իր որոշումն ընդունելուց անմիջապես հետո CNDA-ն այդ որոշումը ձեզ կուղարկի փոստային ճանապարհով « ցպահանջ նամակով ու ստացական անդորագրով»:

Որոշումը խմբագրված է լինելու ֆրանսերեն լեզվով, ու այն ձեզ է ուղարկվելու որոշման հիմքերը նկարագրող մի փաստաթղթի հետ միասին, որը խմբագրված է լինելու մի լեզվով, որին դուք ամենայն հավանականությամբ տիրապետում եք:

Իր որոշմամբ CNDA-ն կարող է.

- չեղյալ համարել OFPRA-ի մերժման որոշումն ու ձեզ փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտպանություն շնորհել: Նման պարագայում դուք կօգտվեք այն նույն իրավունքներից, որոնք կունենայիք, եթե OFPRA-ն ձեզ շնորհած լիներ երկու կարգավիճակներից մեկը,
- չեղյալ համարել OFPRA-ի որոշումը, որով ձեզ օժանդակ պաշտպանություն է շնորհվել, ու ձեզ փախստականի կարգավիճակ շնորհել;
- հաստատել OFPRA-ի մերժման որոշումը ու մերժել բողոքարկման ձեր հայցը,
- որոշ դեպքերում՝ չեղյալ համարել OFPRA-ի որոշումն ու խնդրել վերաքննել ձեր հայցը:

CNDA-ի որոշումը կարող է Պետական Խորհրդում վճռաբեկ բողոքարկման ենթարկվել: Պետական Խորհուրդը չի վերաքննում ձեր հայցն ամբողջությամբ, այլ միայն քննում է որոշ իրավաբանական հարցեր: Դա երկարատև գործընթաց է, որի համար անհրաժեշտ է մասնագիտացված փաստաբան ունենալ: Դուք կարող եք դիմել՝ անվճար իրավաբանակ օգնություն ստանալու համար: Այս բողոքարկումը չի երկարացնի Ֆրանսիայում կացությունն ու արգելք չի հանդիսանա ձեզ դեպի ձեր երկիր ուղարկելուն: Այս գործընթացի շրջանակներում ցանկալի է խորհրդակցել որևէ կազմակերպության կամ փաստաբանի հետ:

■ Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը՝ CNDA -ի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո.

Երկրի տարածքում ձեր մնալու իրավունքն ավարտվում է.

- CNDA-ում որոշման ընթերցման պահին, եթե այդ որոշումն ընդունվել է դռնբաց նիստում: Ամեն դեպքում, դուք կծանուցվեք այդ որոշման մասին:;

- CNDA-ի որոշման ծանուցման պահին, եթե այդ որոշում ընդունվել է առանց դատական նիստի ու համապատասխան կարգադրությամբ:

Երկրի տարածքում մնալու իրավունքից զրկվելու պահից սկսած՝ դուք պետք է լքեք Ֆրանսիայի տարածքը, ու կարող է տարածքը լքելու պարտադրական որոշում ընդունվել ձեր նկատմամբ (տե՛ս կետ 5):

3.3. Ապաստան ստանալու փակ դիմումի վերաբացումը.

Ձեր հայցի քննության փակման դեպքում ("տե՛ս "OFPRA-ի որոշումը" խորագիրը 3.1 կետում) դուք կարող եք դիմել հայցի վերաբացման համար որոշումը ստանալուց հետո՝ 9 ամսվա ընթացքում: Դրա համար դուք պետք է ներկայանաք առաջին ընդունման համար պատասխանատու կառույցներից մեկին (SPADA) կամ միակ պատուհան՝ ձեզ կրկին գրանցելու համար (տե՛ս կետ 2):

Պրեֆեկտուրայում այդ գրանցումից հետո դուք ձեր տրամադրության տակ կունենաք 8 օր՝ OFPRA-ին ձեր գործի վերաբացման հայցը ներկայացնելու համար: Այնուհետև OFPRA-ն կբացի ձեր գործը ու քննության կառնի ապաստանի համար ձեր դիմումը այն փուլից սկսած, որտեղ ընդհատվել էր ձեր դիմումը:.

9 ամիս ժամկետում գործի վերաբացման հայցը ներկայացնելու դեպքում դուք կրկին կունենաք երկրի արածքում մնալու իրավունք, ու ձեզ կտրվի ապաստան հայցողի վկայական:

9 ամիս ժամկետը լրանալուց հետո գործի վերաբացման ձեր հայցը կդիտարկվի որպես գործի վերաքննության հայց (տե՛ս 3.4 կետը՝ "Վերաքննումը").

3.4. Վերաքննումը.

Եթե CNDA-ն մերժի ապաստանի համար ձեր հայցը, կամ եթե դուք բողոքարկման դիմում ներկայացրած չլինեք OFPRA-ի մերժման պատասխանի ծանուցումը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ապա դուք հնարավորություն կունենաք դիմել OFPRA՝ ձեր հայցը կրկին քննելու համար. սակայն դա հնարավոր կլինի այն դեպքում, եթե դուք ունենաք "նոր փաստեր", այսինքն՝

- եթե այդ փաստերն ի հայտ են եկել CNDA-ի որոշումից հետո, կամ այդ որոշումից առաջ, ու եթե այդ մասին դուք տեղեկացված չեք եղել,
- դրանք այնպիսի բնույթ են կրում, որ արդարացնում են հետապնդումներից կամ լուրջ սպառնալիքներից ձեր անձնական վախերը, որոնք, ըստ ձեզ, արկա են՝ երկիր վերադառնալու դեպքում:

Դուք կարող եք խորհրդակցել որևէ կազմակերպության կամ փաստաբանի հետ:

Վերաքննության դիմում ներկայացնելու համար դուք պետք է ներկայանաք առաջին ընդունման համար պատասխանատու կառույցներից մեկին (SPADA), այնուհետև միակ պատուհան՝ ձեզ կրկին գրանցելու համար (տե՛ս կետ 2):

Այս գրանցումից հետո դուք ձեր տրամադրության տակ կունենաք 8 օր՝ OFPRA-ին ձեր գործի վերաքննության հայցը ներկայացնելու համար: Եթե ձեր հայցը ամբողջական չլինի, OFPRA-ն ձեզ կխնդրի այն լրացնել 4 օր ժամկետում:

Այնուհետև OFPRA –ն կանցնի ձեր գործի նախնական քննությանը, ու գործն ընդունելուց հետո՝ 8 օրվա ընթացքում, դրա ընդունելի բնույթի վերաբերյալ որոշում կկայացնի: Այդ քննության ժամանակ ձեզ հարցազրույցի հրավիրելը պարտադիր չէ:

Այդ քննումից հետո OFPRA–ն կարող է ձեր հայցն անընդունելի համարել, եթե ձեր կողմից ներկայացրած փաստերն ու փաստարկները պաշտպանություն ստանալու համար զգալի փոփոխություններ չեն բերում:

Եթե OFPRA–ն ապաստանի ձեր հայցն ընդունելի է հայտարարում, ապա այն կուսումնասիրվի արագացված ընթացակարգով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրա հակառակ որոշումն է ընդունվել:

OFPRA-ի կողմից վերաքննության հայցի անընդունելի լինելու կամ այդ հայցը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկման առարկա դառնալ CNDA-ում (տե՛ս կետ 3.2):

Դուք երկրի տարածքում մնալու իրավունք ունե՞ք արդյոք ձեր գործի վերաքննության հայցի ընթացքում

Վերաքննության առաջին հայցի դեպքում (տե՛ս "Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը ՝ OFPRA -ի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո" խորագիրը 3.1 կետում).

- եթե պրեֆեկտուրան համարի, որ ձեր հայցը ներկայացրել եք՝ միայն երկրից ձեզ հեռացնելու որոշումը խափանելու համար, կամ եթե OFPRA-ն ձեր հայցը համարի անընդունելի, ապա OFPRA-ի որոշման ծանուցումը ստանալու պահից դուք երկրի տարածքում մնալու իրավունք այլևս չեք ունենալու, ու երկրից ձեզ հեռացնելու մասին որոշում կարող է ընդունվել և ի կատար ածվել,
- եթե OFPRA-ն համարի, որ ձեր հայցն անընդունելի է, սակայն եթե պրեֆեկտուրան համարի, որ ձեր հայցը չի ներկայացվել երկրից ձեզ հեռացնելու որոշումը խափանելու նպատակով, ապա OFPRA-ի որոշման ծանուցումը ստանալու պահից դուք երկրի տարածքում մնալու իրավունք այլևս չեք ունենալու, ու երկրից ձեզ հեռացնելու մասին որոշում կարող է ընդունվել, սակայն դուք կարող եք դիմել վարչական դատարան՝ այդ որոշումը հետաձգելու համար այնքան ժամանակով, մինչև CNDA-ում ուսումնասիրվի ձեր բողոքարկման հայցը;
- Եթե OFPRA-ն համարի, որ ձեր հայցն ընդունելի է ու եթե, չնայած դրան, մերժի այդ հայցը, ապա OFPRA-ի որոշման ծանուցումը ստանալու պահից դուք երկրի տարածքում մնալու իրավունք այլևս չեք ունենալու, ու երկրից ձեզ հեռացնելու մասին որոշում կարող է ընդունվել, սակայն դուք կարող եք դիմել վարչական դատարան՝ այդ որոշումը հետաձգելու համար այնքան ժամանակով, մինչև CNDA-ում ուսումնասիրվի ձեր բողոքարկման հայցը.

Վերաքննության երկրորդ հայցի դեպքում դուք երկրի տարածքում մնալու իրավունք չեք ունենալու: Երկրից ձեզ հեռացնելու մասին որոշում կարող է ընդունվել և ի կատար ածվել՝ առանց սպասելու OFPRA-ի պատասխանը:

4. Ապաստան հայցողի ընդունման նյութական պայմաններն ու իր իրավունքները

Որպես ապաստան հայցող՝ դուք ընդունելության նյութական պայմաններից օգտվելու իրավունք ունեք, որոնք իրենց մեջ ներառում են՝

- բնակեցում Ապստան Հայցողների Ընդունման Կենտրոնում (CADA) կամ շտապ բնակեցման կենտրնում՝ ձեր, և անհրաժեշտության դեպքում, ձեր ընտանիքի անդամների համար (կետ 4.1).
- ապաստան հայցողներին հատկացվող ամենամսյա նմաստ, որի չափը կսահմանվի ձեր ընտանիքի կազմին համապատասխան (կետ 4.2):

Ապաստանի ձեր հայցը գրանցելու նպատակով միակ պատուհանում ձեր հանդիպման ժամանակ OFII-ն ձեր ընդունելության շրջանակներում ձեզ կառաջարկի ընդունելության նյութական պայմանները (տե՛ս կետ 2.2.2):

Ձեզ կտրամադրվի նաև համապատասխան օգնություն ձեր վարչական ու սոցիալական քայլերում, ապաստանի ձեր հայցի շրջանակներում, ինչպես նաև կրթության, առողջապահության ու աշխատանքի ոլորտներում ձեզ հատկացվող սոցիալական իրավունքներից օգտվելու համար: (4.3- ից 4.5 կետեր):

4.1. Ապաստան հայցողի բնակեցումը.

■ Բնակեցման վայրերը.

Ապաստան հայցողների բնակեցման վայրերն են ապաստան հայցողների ընդունման կենտրոններն (CADA) ու ապաստան հայցողների շտապ բնակեցման կառույցները (HUDA): Բնակեցման վայրերը ֆինանսավորվում և համակարգվում են պետության կողմից: Ավելի հաճախ այդ վայրերով տնօրինում են տարբեր ասոցիացիաները:

Ապաստան հայցողների համար նախատեսված մոտ 100 000 բնակեցման վայր գոյություն ունի Ֆրանսիայի ողջ տարածքում: Բնակեցման վայրեր կարող են լինել բնակարանները, համատեղ (կոլեկտիվ) կենտրոններն ու հյուրանոցային սենյակները: Հնարավոր է, որ CADA--ում կամ HUDA-ում դուք բաժանեք որոշ սենյակներ (խոհանոց, լոգարան, զուգարան) այլ անձանց կամ ընտանիքների հետ:.

Բնակություն ստանալու համար դուք պարտադիր պետք է ունենաք ապաստան հայցողի՝ վավերականության մեջ գտնվող վկայական:

CADA-ներում և HUDA-ներում դուք կօգտվեք վարչական ու իրավաբանական աջակցությունից (ապաստանի գործընթացի շրջանակներում) և առողջապահական ու սոցիալական աջակցությունից (սոցիալական իրավունքների բացում, բուժօգնություն ստանալը, երեխաների ուսուցանումը և այլն): Եթե դուք բնակեցվեք հյուրանոցային սենյակում, դուք կկարողանաք այդ ծառայություններից օգտվել առաջին ընդունելության համար պատասխանատու կառույցներից մեկում (SPADA):

■ Ուղղորդումը դեպի բնակեցում.

Բնակեցման ու ապաստան հայցողներին հատկացվող նպաստի (ADA) փաթեթն իրենց մեջ ներառող ընդունելության նյութական պայմանները (CMA) ձեզ են առաջարկվում ապաստանի ձեր հայցն արձանագրող միակ պատուհանում (GUDA) գտնվող OFII-ի կողմից.

- **եթե դուք հրաժարվեք բնակության առաջարկից,** ապա ընդունելության նյութական պայմանները ձեզ այլևս չեն առաջարկվի,
- **եթե դուք համաձայնեք բնակության առաջարկին**, ապա, կախված ապաստանի ձեր հայցի ընթացակարգի տեսակից և ձեր դեպարտամենտում, շրջանում ու պետության տարածքում ազատ տեղերից, OFII-ն ձեզ կառաջարկի բնակության մի տեղ CADA-ում կամ հրատապ բնակեցման կառույցում (HUDA):

Հնարավոր է, որ ձեզ բկանեցման առաջարկ արվի այն դեպարտամենտից կամ շրջանից դուրս, որտեղ գրանցվել է ապաստանի ձեր հայցը: Եթե հրաժարվեք այդ առաջարկից, ապա այլևս չեք ստանա ապաստան հայցողներին հատկացվող նպաստը (ADA), ու բնակեցման ոչ մի նոր առաջարկ ձեզ չի արվի:

Ազատ տեղերի բացակայության պարագայում OFII-ն ձեզ կուղղորդի դեպի առաջին ընդունելության համար պատասխանատու կառույցներից (SPADA) մեկը, որը և ձեզ համար կացարան կփնտրի:

■ Ընդունելությունն ու մեկնումը բնակության վայրից.

Եթե դուք բնակեցվեք CADA-ում կամ HUDA-ում, ապա դուք այնտեղ կարող եք մնալ ապաստանի ձեր հայցի գործընթացի ողջ ընթացքում (OFPRA և CNDA).

Այնուամենայնիվ, որոշ դեպքերում ձեր բնակությունն այնտեղ կավարտվի այն ժամանակ, երբ դուք OFPRA-ից մերժման որոշում ստանաք (տե՛ս "Ո՞ր պահին վերջ կդրվի ձեզ տրամադրվող ընդունելության նյութական պայմաններին" խորագիրը 4.2 կետում):

Եթե դուք ստանաք փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտպանություն (OFPRA-ից կամ CNDA-ից վերջնական դրական պատասխան), ապա ձեզ կտրամադրվի երեք ամիս ժամկետ՝ CADA-ն կամ HUDA-ն լքելու համար, և այդ ժամկետը կարող է նորացվել մեկ անգամ: Եթե դուք շարունակեք զբաղեցնել բնակեցման վայրն այդ ժամկետի ավարտից հետո, ապա դատավորը կարող է դատական կարգով ձեզ բնակեցման վայրից վտարելու որոշում կայացնել:.

Եթե ապաստանի ձեր հայցը մերժվի (OFPRA-ից կամ CNDA-ից վերջնական բացասական պատասխան), ապա դուք պարտադիր կերպով պետք է լքեք CADA-ն կամ HUDA-ն երկրի տարածքում մնալու ձեր իրավունքն ավարտվելուն պես (տե՛ս "Երկրի տարածքում մնալու իրավունքի ավարտը" խորագիրը 3.1 և 3.2 կետերում)՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Եթե դուք շարունակեք զբաղեցնել բնակեցման վայրն այդ ժամկետի ավարտից հետո, ձեզ՝ կացարանից վտարելու որոշում կարող է ընդունվել: Նման պարագայում դեպարտամենտի պրեֆեկտը, CADA-ի ղեկավարը կամ HUDA-ի ղեկավարը ձեզ կարող է վերջնագիր պահանջ ներկայացնել՝ կացարանն ազատելու համար: Այն դեպքում, եթե դուք չկատարեք այդ պահանջը, դեպարտամենտի պրեֆեկտը, CADA-ի ղեկավարը կամ HUDA-ի ղեկավարը կարող են դիմել վարչական դատավորին՝ կացարանը լքելու համար ձեզ հրահանգելու նպատակով:

Անհրաժեշտության դեպքում, ազգային ոստիկանության կամ ժանդարմերիայի աշխատակիցները կարող են ձեզ դուրս հանել կացարանից:.

4.2. Ապաստան հայցողներին տրամադրվող նպաստը (ADA).

Ապաստան հայցողներին տրամադրվող նպաստն ապահովում է OFII-ն, իսկ նպաստի վճարումը կատարում է ծառայությունների ու վճարումների Գործակալությունը:

Այդ նպաստը փոխանցվելու է OFII-ի կողմից ձեզ տրամադրած բանկային քարտին այնքան ժամանակ, մինչև դուք, որպես ապաստան հայցող, երկրի տարածքում մնալու իրավունք ունենաք, կամ մինչև ձեզ տեղափոխեն ապաստանի ձեր հայցի քննության համար պատասխանատու մեկ այլ երկիր:

■ Նպաստից օգտվելու պայմանները.

Ապաստան հայցողների համար սահմանված նպաստից օգտվելու համար դուք պետք է.

1- ունենաք ապաստան հայցողի վկայական,

2- 18 տարին բոլորած լինեք,

3- եթե դուք ապաստան հայցող եք, ապա պետք է համաձայնած լինեք միակ պատուհանում ձեր հանդիպման ժամանակ OFII-ի կողմից առաջարկված ընդունելության նյութական պայմաններին:

Կարո՞ ղ եմ ես արդյոք օգտվել ընդունելության նյութական պայմաններից առանց ապաստան հայցողի վկայականի

Ինչպես արդեն նշվել է, ընդունելության նյութական պայմաններից օգտվելու համար հարկավոր է ունենալ ուժի մեջ գտնվող ապաստան հայցողի վկայական:

Այնուամենայնիվ, ձեզ կարող է մերժվել՝ ընդունելության նյութական պայմաններից օգտվելու հարցում, եթե դուք ապաստանի հայցի վերաքննության դիմում եք ներկայացրել, կամ եթե դուք ապաստանի հայց եք ներկայացրել շատ ուշ՝ առանց որևէ հիմնավոր պատճառի (տե՛ս "Ապաստանի ձեր հայցի որակավորումը" խորագիրը՝ 2.2.1 կետում) այն դեպքում, երբ դուք արդեն իսկ ապաստան հայցողի վկայանակ ունեիք:

Դրանից բացի, այն ապաստան հայցողները, ում ապաստան հայցողի վկայականը չի երգարաձգվել կամ իրենցից ետ է վերցվել որոշ հիմունքներով (ապահով երկրի քաղաքացի, հասարակական կարգին լուրջ վտանգ) արագացված ընթացակարգով ուսումնասիրվող ապաստանի հայցին OFPRA-ի մերժումից հետո, կշարունակեն օգտվել ընդունելության նյութական պայմաններից OFPRA-ի մերժումից ու CNDA-ում բողոքարկում ներկայացնելուց հետո, մինչև դատավորը (վարչական դատավոր կամ ապաստանի հարցերով զբաղվող դատավոր) իրենց կարգավիճակի վերաբերյալ որոշում ընդունի: Հարկ է նշել, որ նման

պարագայում նպաստը կարող է համապատասխանեցվել կամ փոխարինվել նյութական օգնություններով:

■ Հայցի ձևակերպումը.

Եթե դուք ապաստան հայցող եք, ապա ապաստան հայցողի համար նպաստից կկրաողանաք օգտվել միակ պատուհանում ապաստանի ձեր հայցի գրանցումից հետո ու OFII-ի կողմից ձեզ ներկայացրած օգնությունն ընդունած լինելու պայմանով:

Նպաստի վճարումը կսկսվի միայն ապաստանի ձեր հայցը OFPRA ուղարկելուց հետո՝ ապաստանի ձեր այդ հայցի գրանցումից առավելագույնը 21 օր հետո:

■ Նպաստի չափը.

Ապաստան հայցողի համար նպաստից օգտվելու համար դուք պետք է ապացուցեք, որ ձեր ամսական ֆինանսական ռեսուրսները ակտիվ համերաշխության եկամտից (RSA) ցածր են:

Նպաստը հաշվարկվում է ըստ մի սանդղակի, որտեղ հաշվի են առնվում ձեր ընտանեկան կազմը, ձեր ռեսուրսներն ու ձեր բնակեցման տեսակը:

■ Վճարումը.

Ապաստան հայցողներին տրամադրվող նպաստի առաջին վճարումը կատարվում է OFPRA-ում ապաստանի ձեր հայցը ներկայացնելուց հետո: Եթե դուք OFII-ին տրամադրել եք որևէ հեռախասահամար, ապա հաղորդագրություն կստանաք, որով ձեզ կտեղեկացվի, որ ձեր նպաստը փոխանցվել է ձեր բանկային քարտին:.

Նպաստը ձեզ կփոխանցվի մինչև այն ամսվա վերջը, որի ընթացքում կավարտվի Ֆրանսիայի տարածքում մնալու ձեր իրավունքը (տե՛ս "Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը" խորագիրը՝ 3.1 և 3.2 կետերում):

Նպաստը կընդհատվի ապաստանի ձեր հայցին վերջնական պատասխան ստանալու ամսին հաջորդող ամսվա վերջում:

■ Բողոքարկումը.

Դուք պետք է պարտադիր կարգով տեղեկացնեք OFII-ին ձեր կարգավիճակում տեղի ունեցած ցանկացած փոփոխության մասին՝ լինի դա կացության իրավունքի, ընտանեկան կարգավիճակի, ձեր ռեսուրսների կամ ձեր աշխատանքի բնագավառում:

OFII-ի կողմից Ապաստան հայցողներին տրամադրվող նպաստի (ADA) վերաբերյալ որոշումը բողոքարկելու դեպքում դուք ինքներդ պետք է բողոքարկման դիմում-խնդրանք ներկայացնեք OFII- ին, իսկ վարչական դատարանը իրավասու է վիճահարույց հարցերում:

Ե՞րբ է վերջ դրվելու ընդունելության նյութական պայմաններին

Ընդունելության նյութական պայմանները կավարտվեն այն ամսվա վերջում, որի ընթացքում ապաստանի շրջանակներում երկրի տարածքում մնալու ձեր իրավունքն ավարտվել է:

Այն ապաստան հայցողները, ովքեր կորցրել են երկրի տարածքում մնալու իրենց իրավունքը որոշ հիմունքներով (ապահով երկրի քաղաքացի, հասարակական կարգին լուրջ վտանգ) արագացված ընթացակարգով ուսումնասիրվող ապաստանի հայցին OFPRA-ի մերժումից հետո, կշարունակեն օգտվել ընդունելության նյութական պայմաններից, մինչև դատարանը մերժի երկրից հեռացնելու որոշման կատարումը հետաձգելու մասին հայցը, կամ մինչև CNDA-ն կայացնի իր որոշումը (տե՛ս կետ 5.1):

Եթե ձեզ շնորհվի փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտպանություն, ապա ընդունելության նյութական պայմանները կտրամադրվեն մինչև այդ պատասխանը ստանալու ամսին հաջորդող ամսվա վերջը:

Այդուհանդերձ, ընդունելության նյութական պայմաներին կարող է վերջ դրվել, եթե

- դուք լքել եք ձեր կացարանը՝ առանց որևէ հիմնավոր պատճառի,
- դուք չկատարեք պետական մարմինների կողմից ձեզ նշանակված հանդիպումներին ներկայանալու պարտականությունը, եթե դուք չպատասխանեք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ձեզ հասցեագրված դիմումներին, կամ եթե դուք չներկայանաք ապաստանի ձեր հայցի շրջանակներում ձեր անձնական հարցազրույցներին,
- OFII-ն ձեզ ուղղորդել է մեկ այլ շրջանում գտնվող բնակեցման վայր կամ առաջին ընդունելության համար պատասխանատու կառույց (SPADA), ու եթե դուք այնտեղ չեք ներկայացել սահմանված 5 օր ժամկետում,
- OFII-ն ձեզ ուղղորդել է դեպի մեկ այլ շրջան, և դուք այդ շրջանը լքել եք՝ առանց OFII-ի թույլտվության,
- դուք թաքցրել եք ձեր ֆինանսական ռեսուրսները,
- դուք կեղծ տեղեկություններ եք տրամադրել ձեր ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ,
- դուք ապաստանի բազմաթիվ հայցեր եք ներկայացրել՝ տարբեր ինքնությունների ներքո,
- դուք բռնի վերաբերմունք եք ցուցաբերել կամ ձեր բնակության վայրի ներքին կանոնակարգի կոպիտ խախտում եք տույլ տվել:

Որոշումը կընդունվի այն բանից հետո, երբ դուք OFII-ին ներկայացնեք ձեր տեսակետն ու դիտողությունները: Եթե պարզվի, որ դուք թաքցրել եք ձեր ֆինանսական ռեսուրսները, կեղծ տեղեկություններ եք տրամադրել ձեր ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ, եթե դուք ապաստանի բազմաթիվ հայցեր եք ներկայացրել՝ տարբեր ինքնությունների ներքո, ապա այդ որոշմամբ ձեզանից կարող է պահանջվել ձեզ անհարկի վճարված գումարների հատուցումը:

4.3. Հասանելիությունը կրթությանը.

Ապաստան հայցողների երեխաների համար հասանելիությունը կրթության համակարգին նույնն է, ինչ երկրի քաղաքացիների համար:

Համաձայն կրթության Օրենսգրքի (Հոդված L.111-2)՝ «*յուրաքանչյուր երեխա դպրոցական կրթություն ստանալու իրավունք ունի, որը լրացնելով ընտանիքի կողմից կատարած գործողությունները, նպաստում է իր դաստիարակությանը*»: Հարկ է հիշեցնել, որ կրթությունը պարտադիր է 6-ից մինչև 16 տարեկան երկու սեռի բոլոր երեխաների համար՝ լինի նա Ֆրանսիացի, թե օտարերկրացի» (վերը նշած օրենսգրքի L.131-1 հոդված):

Նախադպրոցական տարիքի երեխաների համար գրանցումը կատարվում է քաղաքապետարանում: Դուք պետք է ներկայացնեք երեխայի հետ ունեցած ձեր ազգակցական

կապը հաստատող փաստաթղթերը, բնակության վայրից տեղեկանքն ու երեխայի բոլոր պատվաստումների առկայությունն ապացուցող բոլոր փաստաթղթերը:

Միջնակարգ դպրոցական հաստատություններում (քոլեջ կամ լիցեյ) գրանցումը կատարվում է ամնիջապես ձեր բնակության վայրին ամենամոտ գտնվող հաստատությունում:

Վարչական, իրավաբանական և սոցիալական հարցերով ձեզ աջակցող կազմակերպությունը, լինի դա ձեր բնակեցման համար պատասխանատու կազմակերպություն, թե OFII-ի հովանու ներքո գործող և առաջին ընդունելության համար պատասխանատու կառույց (SPADA), կարող է ձեզ օգնել այս վարչական քայլերը կատարելու գործում:

4.4. Հասանելիությունը բուժօգնությանը.

■ Որտե՞ղ ստանալ բուժօգնություն

- **Առողջապահության մասնագետի (պրոֆեսիոնալի) մոտ (հիվանդանոցից դուրս)**

Առողջական բոլոր խնդիրների համար դուք կարող եք խորհրդակցել բուժագետի (թերապևտի) հետ, ով ձեզ կզննի և ձեզ համար անհրաժեշտ դեղերը կնշանակի: Նա ձեզ կուղղորդի "բժիշկ-մասնագետի" կամ այլ օժանդակ բժշկական օգնականի (բուժքույր, մերսորդ (մասաժիստ) կինեզոլոգ) մոտ, եթե դուք լրացուցիչ հետազոտությունների կամ բուժօգնության կարիք ունենաք:

- **Դեղատանը.** դեղորայք գնելու կամ խորհուրդ հարցնելու համար:

- **Հիվանդանոցում.** շտապօգնություն ստանալու համար, նախապես պլանավորված որոշ հետազոտությունների ու մասնագետների հետ խորհրդակցությունների համար:

Այդ բժշկական ծառայությունները վճարովի են, սակայն հնարավոր է, որ դրանք հոգա ձեր բժշկական ապահովագրությունը (տե՛ս հաջորդ պարագրաֆը):

Մինչև ձեր բժշկական ապահովագրությունը ստանալը դուք կարող եք անվճար բուժօգնություն ստանալ հետևյալ կառույցներում.

- Բուժօգնություն ստանալու համար.
  - դուք կարող եք ներկայանալ մշտապես գործող բուժօգնության կետեր (PASS), որոնք սովորաբար գտնվում են հիվանդանոցում: Ձեզանով կզբաղվեն բժիշկները, և ձեզ անվճար դեղորայք կտրվի:
  - Որոշ մասնագիտացված ասոցիացիաներ (Médecins de Monde, le COMEDE…) անվճար խորհրդակցություններ են առաջարկում ընդհանուր բժշկության, ատամնաբուժության ոլորտում կամ մասնագիտացված խորհրդակցություններ (գինեկոլոգիական, ակնաբուժական, հոգեբանական և այլն):
- Առանձնահատուկ խնդիրների համար.
  - Հղի կանանց հղիությանը և 6 տարեկանից ցածր երեխաների պատվաստումներին հետևում են մոր և մանկան պաշտպանության ծառայությունները (PMI):
  - Տուբերկուլյոզի հայտնաբերման համար պետք է դիմել տուբերկուլյոզի դեմ պայքարի կենտրոն (CLAT):
  - ՄԻԱՎ-ի, հեպատիտների և սեռական ճանապարհով փոխանցվող վարակների պարագայում պետք է դիմել ինֆորմացիայի, հիվանդությունների հայտնաբերման ու ախտորոշման անվճար կենտրոններ (CeGIDD):

- Հակաբեղմնավորիչ միջոցներ ստանալու համար պետք է դիմել ընտանեկան պլանավորման կենտրոն (CPEF):
- Կախվածությունների պարագայում պետք է դիմել կախվածության (նարկոլոգիայի) բուժման, ուղեկցման ու կանխման կենտրոն (CSAPA):

Այդ կազմակերպությունների գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ձեր առաջին ընդունելության համար պատասխանատու կառույց, ձեր բնակեցման կենտրոն, տեղի հիվանդանոց կամ կարող եք ծանոթանալ հետևյալ ինտերնետային կայքով՝ http ://annuairesante.ameli.fr

Շտապ բուժօգնության կարիք ունենալու դեպքում, զանգահարեք 15 կամ 112 հեռախոսահամարով, կամ զանգահարելու հնարավորություն չունենալու դեպքում՝ գնացե՛ք ձեզ ամենամոտ հիվանդանոցի շտապ օգնության բաժանմունք:

■ Ինչպե՞ս ստանալ փոխհատուցումը ձեր բժշկական ծախսերի համար

Ֆրանսիայում բուժսպասարկումը վճարովի է, սակայն դուք կարող եք օգտվել բժշկական ապահովագրությունից, որը կհոգա ձեր բժշկական ծախսերն ամբողջությամբ կամ մասնակիորեն :

Խոսքը համընդհանուր առողջապահական պաշտպանության (PUMa) և լրացուցիչ միասնական առողջապահական պաշտպանության (CSS) մասին է: Վերջինս տրամադրվում է՝ հաշվի առնելով ռեսուրսները:

Այս ծառայությունները հոգում են ձեր բոլոր ընթացիկ բժշկական ծախսերը, այդ թվում՝ ակնոցները, ատամների պրոթեզավորումը և այլն: Ավելին՝ լրացուցիչ միասնական առողջապահական պաշտպանությունը ձեզ թույլ է տալիս օգտվել բժշկական այս ծառայություններից՝ առանց նախնական վճար կատարելու, ինչպես նաև ձեզ ընձեռում է տրանսպորտային միջոցներից օգտվելու համար զեղչեր:

Վերոհիշյալ ծառայություններից օգտվելու համար դուք կարող եք դիմել ձեր բնակության դեպարտամենտի բժշկական ապահովագրական գրասենյակ (CPAM).

- **ձեր անչափահաս երեխաների համար՝ ապաստանի ձեր հայցի գրանցման պահից հետո:** Դրա համար պետք է լրացնել "Բժշկական ապահովագրության" և "Լրացուցիչ միասնական առողջապահական պաշտպանության" իրավունքները բացելու մասին դիմումի ձևաթղթերը և դրանց կցել ապաստան հայցողի վկայականը, որում առկա են երեխաների անունները ;

- **Ձեր (ու ձեր ամուսնու (կնոջ)) համար՝ Ֆրանսիայի տարածքում երեք ամիս բնակվելուց հետո) :** Նման պարագայում դուք կրկին պետք է լրացնեք նույն ձևաթղթերը և դրանց կցեք ոչ միայն ապաստան հայցողի վկայականը, այլև Ֆրանսիայի տարածքում 3 ամսից ավել բնակությունը հաստատող փաստաթուղթ, օրինակ.
  բնակության վայրից տեղեկանք՝ վերջին երեք ամիսների համար, որը կարող է տրամադրել բնակություն տրամադրած կենտրոնը ; 3 ամսից ավել վաղեմություն ունեցող գրանցման մասին տեղեկանք; 3 ամսից ավել վաղեմություն ունեցող ապաստան հայցողի վկայականը; ապաստան հայցողների առաջին ընդունման համար պատասխանատու կառույցի (SPADA) կողմից տրամադրված 3 ամսից ավել վաղեմություն ունեցող գրանցման մասին տեղեկանք; երրորդ անձի կողմից բնակեցված լինելու դեպքում՝ այդ անձի կողմից գրված վկայականը, որում պետք է նշված լինեն բնակեցման սկիզբը՝ իր համապատասխան տեղեկանքներով (բնակվարձի կամ

կոմունալ ծառայությունների անդորրագրեր), որոնք պետք լինեն այդ երրորդ անձի անունով ու ունենան 3 ամսվա վաղեմություն:

Եթե դուք կամ ձեր երեխաները շտապ բուժում ստանալու կարիք ունեք, ապա դուք կարող եք կցել հրատապ բժշկական օգնության անհրաժեշտության վկայականը, որպեսզի ձեր գործն ավելի արագ ուսումնասիրվի, և որպեսզի կարողանաք ավելի շուտ ստանալ բժշկական ապահովագրությունը:

Նման քայլերը ձեռնարկելու հարցում ձեզ կարող է օգնել ձեր առաջին ընդունելության համար պատասխանատու կառույցը (SPADA), ձեր բնակեցման համար պատասխանատու կազմակերպությունը (CADA, HUDA ...), կամ հիվանդանոցի սոցիալական ծառայությունը:

Ձեր բժշկական ապահովագրությունը սկիզբ կառնի այն ժամանակ, երբ դուք ձեր գործը փոխանցեք բժշկական ապահովագրական գրասենյակ (CPAM): Ուստի, դուք պետք է երեխաների համար դիմումը ներկայացնեք հնարավորինս շուտ (ապաստանի ձեր հայցի գրանցումից անմիջապես հետո), իսկ ձեր կամ ձեր ամուսնու (կնոջ) համար դիմումը՝ այն պահից ի վեր, երբ կարողանաք ապացուցել, որ Ֆրանսիայի տարածքում բնակվում եք 3 ամսից ավել:

Դուք կստանաք տեղեկանք, որը պետք է ներկայացնեք բժշկին, հիվանդանոցում, դեղատանը՝ բժշկական օգնություն ստանալու համար: Այդ վկայականը ձեզ ուղարկելու է բժշկական ապահովագրական գրասենյակը այն հասցեին, որը նշված կլինի ձևաթղթերում. դուք ձևաթղթերում պետք է նշեք ձեր գրանցման հասցեն:

Ապաստանի ձեր հայցի ողջ ընթացքում բժշկական ապահովագրությունը հոգալու է ձեր առողջապահական ծախսերը: Դա կշարունակվի նաև հետո, եթե դուք միջազգային պաշտպանություն ստանաք: Քանզի լրացուցիչ միասնական առողջապահական պաշտպանությունը ուժի մեջ է 1 տարի ժամկետով, ուստի դուք ամեն տարի նոր դիմում պետք է ներկայացնեք, որպեսզի շարունակեք դրանից օգտվել: Ցանկալի է, որ դուք այդ դիմումը ներկայացնեք նախկին վկայականում նշված վավերականության ժամկետի ավարտից 2-4 ամիս առաջ:

Մինչ ձեր իրավունքները կբացվեն, դուք կարող եք անվճար ընթացիկ բուժում ստանալ համապատասխան անվճար կառույցներում, որոնք ներկայացված են նախկին կետում՝ "Որտե՞ղ ստանալ բուժօգնություն":

Հիվանդանոցում "շտապ բժշկական օգնությունը" ձեզ նույնպես կտրամադրվի անվճար հիմունքներով: Խոսքն անհետաձգելի բուժօգնության մասին է, օրինակ՝ խորը կտրվածքները (վերքերը), կոտրվածքը, այրվածքը ծանր կամ վարակիչ հիվանդությունները, անչափահասներին ու հղի կանանց տրամադրվող բոլոր բժշկական օգնությունները (մասնավորապես՝ ծննդաբերությունից առաջ ու հետո իրականացվող կանխարգելիչ միջոցները, հղիության ընդհատումը...): **Հիվանդանոց ներկայանալիս դուք պետք է ներկայացնեք ապաստան հայցողի ձեր վկայականը՝ անվճար բուժօգնություն ստանալու համար:**

<u>Հիշե՛ք.</u>
Բժշկական ապահովագրություն ստանալու համար դուք պետք է դիմեք ձեր բնակավայրին մոտ գտնվող բժշկական ապահովագրության գրասենյակ. ձեր երեխաների համար դա պետք է անեք ապաստանի ձեր հայցի գրանցման պահից, իսկ ձեզ (ու ձեր ամուսնու (կնոջ)) համար՝ Ֆրանսիայի տարածքում երեք ամիս բնակվելուց հետո:

Մինչ ձեր իրավունքները կբացվեն, դուք կարող եք անվճար ընթացիկ բուժում ստանալ համապատասխան անվճար կառույցներում, իսկ հրատապ բուժօգնության համար՝ հովանդանոցում: Դուք պետք է ներկայացնեք ապաստան հայցողի ձեր վկայականը:

Դուք պետք է տեղեկացնեք բժշկական ապահովագրության ձեր գրասենյակին (CPAM) կարգավիճակի ցանկացած փոփոխության մասին. ուղարկել ապաստան հայցողի ձեր յուրաքանչյուր նոր վկայականը, բնակության վայրից ձեր յուրաքանչյուր նոր վկայականը, ինչպես նաև կացության իրավունք տվող փաստաթղթի ստացականը, եթե ձեզ միջազգային պաշտպանություն շնորհվի:

4.5. Հասանելիությունը աշխատանքային շուկա.

Որպես ապաստան հայցող՝ դուք կարող եք աշխատելու իրավունք ստանալ, եթե OFPRA--ն՝ անկախ ձեզ չվերագրվող պատճառների, որոշում չի կայացրել ապաստանի ձեր հայցի վերաբերյալ՝ ձեր հայցը ներկայացնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Նման պարագայում դուք կարող եք ներկայացնել ձեր առաջիկա գործատուի կողմից ձեզ տրամադրված աշխատանքի թույլտվության դիմումը ձեր բնակության վայրի դեպարտամենտի՝ տնտեսության, մրցունակության, սպառման, աշխատանքի ու զբաղվածության (DIRECCTE) տարածքային վարչության աշխատուժի ծառայությանը (SMOE)՝ աշխատանքի թույլտվություն ստանալու համար:

Աշխատանքի թույլտվություն շնորհելու հետ կապված որոշումն ընդունում է պրեֆեկտը/DIRECCTE/SMOE, ով, դիմումը ստանալուց հետո, իր տրամադրության տակ կունենա երկու ամիս՝ այն ուսումնասիրելու համար: Եթե դուք այդ ընթացքում պատասխան չստանաք, ապա կարող եք համարել, որ ստացել եք այդ թույլտվությունը: Այդ թույլտվությունը շնորհելու մասին ծանուցումը կուղարկվի ձեր գործատուին ու ձեզ, և այն ուժի մեջ կլինի երկրի տարածքում մնալու համար ձեր ունեցած իրավունքի ողջ ընթացքում:

Իր համաձայնությունը տալու դեպքում պրեֆեկտը OFII-ին կուղարկի երեք ամսից ավել ժամկետով պայմանագրերի կամ սեզոնային աշխատանքի պայմանագրերի հետ կապված աշխատանքային թույլտվությունը:

Այնուամենայնիվ, հնարավոր է, որ ձեզ չտան աշխատանքային թույլտվությունը՝ հաշվի առնելով զբաղվածությունը ձեր շրջանում կամ ձեր ընտրած ոլորտում՝ բացառությամբ այն դեպքերի, եթե դուք ձեր թեկնածությունն եք առաջարկել աշխատանքի ընդունման համար դժվարություններով բնութագրվող մասնագիտությունների ցուցակին դասվող մի աշխատանքի համար:

Եթե դուք ժամանակավոր աշխատանքի թույլտվություն եք ստացել, և ձեզ չվերագրող պատճառներով աշխատանքային պայմանագրի լուծարման դեպքում՝ կամ որոշակի սահմանված ժամկետային աշխատանքային պայմանագրի կամ ինտերիմ պայմանագրի ավարտից հետո, դուք կարող եք դիմել գրանցվելու համար որպես աշխատատեղ հայցող աշխատանքի տեղավորման կենտրոնում (Pôle Emploi):

Եթե դուք միայնակ անչափահաս եք, և եթե դուք ունեք աշխատելու թույլտվություն ուսումնական պայմանագրի կամ սահմանափակ ժամանակով մասնագիտացման պայմանագրի շրջանակներում, ապա դուք կարող եք շարունակել ձեր պայմանագիրն այն դեպքում, եթե դուք ապաստան հայցող եք 2019 թ-ի մարտի 1-ից սկսած:

Վերջապես, եթե ձեզ ընդունեն աշխատանքային շուկա, ապա դուք կարող եք օգտվել մասնագիտական որակավորման համար կազմակերպած դասընթացներից՝ աշխատանքային օրենսգրքում նախատեսած պայմաններին համապատասխան:

5. Ապաստանի հայցի մերժման հետևանքները պետության տարածքում մնալու իրավունքի վրա

5.1. OFPRA-ի կամ CNDA-ի մերժման որոշումը.

- **Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը՝ OFPRA -ի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո.**

✓ **CNDA-ում բողոքարկումը հետաձգողական բնույթ չի կրում.**

Ինչպես նշվել է 3.1 կետում, երկրի տարածքում մնալու ձեր իրավունքը դուք կորցնում եք, եթե OFPRA-ն ձեր նկատմամբ կայացրել է հետևյալ որոշումներից մեկը՝

1. հայցի՝ անընդունելի լինելու մասին որոշում, եթե ձեզ արդեն շնորհվալ է պաշտպանություն մեկ այլ անդամ երկրում, իսկ եթե այդ երկիրը Եվրոմիության անդամ չէ, ապա այն դեպքում, եթե այնտեղ կարող է իրականացվել ձեր ընդունելությունը (տե՛ս կետ 3.3),
2. գործի փակման մասին որոշում (տե՛ս կետ 3.3),
3. որոշում, համաձայն որի վերաքննության առաջին դիմումը համարվում է անընդունելի այն դեպքում, երբ երկրից ձեզ հեռացնելու մասին որոշումն արդեն ընդունվել էր:

Նման դեպքերում ապաստան հայցողի ձեր վկայականը կարող են ձեզանից վերցնել, կամ այն կարող է չերկարաձգվել, ու Ֆրանսիայի տարածքը լքելու մասին որոշում կարող է ընդունվել ձեր նկատմամբ: CNDA-ում բողոքարկումը հետաձգողական բնույթ չի կրում, և երկրից ձեզ հեռացնելու մասին որոշումը կարող է ի կատար ածվել ամեն պահի:

Եթե դուք OFPRA-ին տեղեկացրել եք ձեր հայցը ետ վերցնելու ձեր որոշման մասին, ապա դուք կորցնում եք նաև երկրի տարածքում մնալու ձեր իրավունքը, և CNDA-ում բողոքարկումը հետաձգողական բնույթ չի կրում:

✓ **CNDA-ում բողոքարկումը անմիջապես հետաձգողական բնույթ չի կրում**

Երկրի տարածքում մնալու ձեր իրավունքը դուք կորցնում եք նաև, եթե OFPRA-ն ձեր նկատմամբ կայացրել է հետևյալ որոշումներից մեկը:

1. վերաքննության առաջին հայցի՝ անընդունելի լինելու մասին որոշում այն դեպքում, երբ երկրից ձեզ հեռացնելու մասին որոշում չի ընդունվել,
2. որպես անընդունելի դիտարկվող վերաքննության հայցի մերժման որոշում,
3. արագացված ընթացակարգով քննվող ապաստանի հայցը մերժելու մասին որոշում այն հիմքով, որ դուք ապահով երկիր համարվող երկրի քաղաքացի եք,
4. արագացված ընթացակարգով քննվող ապաստանի հայցը մերժելու մասին որոշում այն հիմքով, որ ձեր ներկայությունը պետության տարածքում հասարակական կարգին լուրջ վտանգ է սպառնում,
5. անընդունելի լինելու մասին կամ մերժման որոշում այն դեպքում, երբ ձեզ երկրից հեռացնելու կամ երկիր մուտք գործելու վարչական կամ իրավական արգելքի մասին որոշում է կայացվել, ու դուք տնային կալանքի եք ենթարկվել կամ եթե կալանավորվել եք (տե՛ս 2.2.1 կետի "Վարչության կամ դատարանի կողմից ձեզ՝ երկրից հեռացնելու

մասին կամ երկրի տարածք մտնելու արգելքի մասին որոշու՞մ է ընդունվել" խորագիրը):

1-ից 4 կետերում նշված դեպքերում ապաստան հայցողի ձեր վկայականը կարող են ձեզանից վերցնել, կամ այն կարող է չերկարաձգվել, ու Ֆրանսիայի տարածքը լքելու մասին որոշում կարող է ընդունվել ձեր նկատմամբ:

Այն պահից սկսած, երբ երկրի տարածքը լքելու մասին պարտավորության (OQTF) որոշում ընդունվի ձեր նկատմամբ, դուք կարող եք տնային կալանքի ենթարկվել՝ ապաստանի ձեր դիմումն արդյունավետ և արագ կերպով քննելու նպատակով, կամ ձեզ կարող են ձերբակալել, եթե դա անհրաժեշտ լինի ապաստանի ձեր հայցը հիմնավորող տարրերը ստուգելու նպատակով, կամ եթե դա պահանջի ազգային անվտանգության կամ հասարակական կարգի պաշտպանությունը:

Եթե բողոքարկումը անմիջապես հետաձգողական բնույթ չի կրում, ապա դուք, երկրի տարածքը լքելու ձեր պարտավորության մասին որոշումը բողոքարկելու շրջանակներում, կարող եք վարչական դատարան դիմել՝ երկրից ձեզ հեռացնելու մասին որոշման կատարումը հետաձգելու նպատակով այնքան ժամանակով, մինչև դուք OFPRA-ի որոշման բողոքարկման հայց ներկայացնեք CNDA, իսկ այն դեպքում, եթե ձեր բողոքարկումն արդեն իսկ գրանցվել է CNDA-ում, ապա մինչև CNDA-ի որոշում կայացնելը:

Հիշեցնում ենք ձեզ, որ ապաստանի հայցին բացասական պատասխան ստանալուց հետո երկրի տարածքը լքելու պարտավորության (OQTF) որոշումը կարող է բողոքարկվել վարչական դատարանում տասնհինգ օր ժամկետում՝ այդ բացասական պատասխանի ծանուցումը ստանալուց սկսած: Դատավորը որոշում է ընդունում տասը շաբաթ ժամկետում: Բողոքարկման ժամկետը նվազում է մինչև 48 ժամ, եթե դուք տնային կալանքի եք ենթարկվել կամ եթե ձերբակալվել եք: Նման պարագայում դատավորը որոշում է ընդունում 72 ժամվա ընթացքում:

Երկրի տարածքը լքելու պարտավորության մասին (OQTF) որոշման դեմ բողոքարկումը կասեցուցիչ բնույթ է կրում. այսինքն՝ ձեզ երկրի տարածքից չեն կարող հեռացնել այնքան ժամանակ, մինչև դուք բողոքարկում ներկայացնեք, իսկ այն դեպքում, եթե դուք վարչական դատարան դիմած լինեք, ապա ձեզ երկրի տարածքից չեն կարող հեռացնել մինչև դատարանի որոշումը:

Եթե ձեր նկատմամբ OQTF որոշում է ընդունվել ապաստանի ձեր հայցը ներկայացնելուց առաջ, և եթե OQTF-ի դեմ բողոքարկումը կասեցուցիչ չէ, ապա ձեզ տնային կալանք նշանակելուց կամ ձեզ ձերբակալալուց հետո 48 ժամվա ընթացքում դուք կարող եք անմիջապես դիմել վարչական դատարան՝ OQTF-ի իրագործումը հետաձգելու նպատակով: Հետաձգելու մասին այդ դիմումը կկասեցնի երկրից ձեզ հեռացնելու որոշումը:

Եթե դուք չեք բողոքարկում OQTF-ի դեմ, կամ եթե OQTF-ի որոշումը բողոքարկման ենթական չէ, ապա երկրից ձեզ հեռացնելու մասին որոշումը հետաձգելու համար դիմում չներկայացնելու դեպքում ձեզ կարող են երկրի տարածքից հեռացնել բողոքարկման կամ որոշումը հետաձգելու դիմում ներկայացնելու համար տրամադրվող ժամկետի ավարտից անմիջապես հետո: Դուք կկրոցնեք նաև ընդունելության նյութական պայմաններից օգտվելու ձեր իրավունքը այն ամսվա վերջին, որի ընթացքում սպառվել է բողոքարկման համար տրամադրվող ժամկետը:

5-րդ դեպքի շրջանակներում, OFPRA-ի պատասխանից հետո 48 ժամվա ընթացքում դուք կարող եք դիմել վարչական դատավորին՝ երկրից հեռացնելու մասին որոշումն ի կատար ածելը հետաձգելու համար այնքան ժամանակով՝ մինչև CNDA-ն ուսումնասիրի ձեր բողոքարկումը

(տե՛ս "Վարչության կամ դատարանի կողմից ձեզ՝ երկրից հեռացնելու մասին կամ երկրի տարածք մտնելու արգելքի մասին որոշու՞մ է ընդունվել" խորագիրը 2.2.1 կետում):).

Երկրից ձեզ հեռացնելու մասին որոշման ի կատար ածելը հետաձգելու մասին ձեր դիմումն ինչպիսի՞ հետևանքներ կարող է ունենալ

Վարչական դատարանը կբավարարի ձեր հայցն այն դեպքում, եթե դուք ներկայացրել եք հիմնավոր փաստեր, որոնք կարդարացնեին ապաստանի հիմունքներով երկրի տարածքում ձեր մնալը՝ CNDA-ի կողմից ձեր բողոքարկումն ուսումնասիրելու ընթացքում:

Նման պարագայում դուք կարող եք մնալ երկրի տարածքում մինչև CNDA-ին բողոքարկում ներկայացնելու ժամկետը, իսկ եթե արդեն դիմած լինեք CNDA-ին, ապա մինչև վերջինիս որոշումը: Անհրաժեշտության դեպքում, դատարանը կարող է որոշել վերջ դնել ձեր տնային կալանքին կամ ձեր ձերբակալմանը՝ բացառությամբ հասարակական կարգի հիմքերով դեպքերի: Վերջ կդրվի նաև ձեզ տրամադրվող ընդունելության նյութական պայմաններին այն ամսվա վերջում, որի ընթացքում կավարտվի CNDA-ում բողոքարկման համար նախատեսված ժամկետը, իսկ եթե դուք արդեն դիմած լինեք դատարան, ապա ընդունելության նյութական պայմաններին վերջ կդրվի այն ամսվա վերջում, որի ընթացքում CNDA-ն կընդունի իր որոշումը:

Եթե վարչական դատարանը մերժի երկրից ձեզ հեռացնելու որոշումը հետաձգելու համար ձեր դիմումը, ապա երկրից ձեզ հեռացնելու մասին որոշումը կարող է ի կատար ածվել, ու նման դեպքում վերջ կդրվի ձեզ տրամադրվող ընդունելության նյութական պայմաններին այն ամսվա վերջում, որի ընթացքում դուք կստանաք դատարանի որոշման ծանուցումը:

Եթե OQTF-ի որոշմանը զուգահեռ ձեզ տրամադրվի կամավոր կերպով երկիրը լքելու ժամկետ, ապա այդ ժամկետը սկիզբ կառնի այն պահից, երբ վարչական դատարանը մերժի երկրից ձեզ հեռացնելու մասին որոշման իրագործումը հետաձգելու դիմումը, կամ այն պահից, երբ CNDA-ն կընդունի իր որոշումը:.

■ Պետության տարածքում մնալու իրավունքի ավարտը՝ CNDA -ի որոշման ընթերցումից կամ դրա ծանուցումը ստանալուց հետո.

Մյուս դեպքերում Ֆրանսիայի տարածքում մնալու ձեր իրավունքին վերջ է դրվում այն ժամանակ, երբ ապաստանի ձեր դիմումի մերժման որոշումը վերջնական է.

- կամ OFPRA-ի որոշման դեմ բողոքարկելու համար նախատեսված ժամկետի վերջում (մեկ ամիս), եթե դուք այդ որոշման դեմ բողոքարկում չեք ներկայացրել CNDA,
- կամ եթե դուք CNDA բողոքարկում ներկայացրած լինեք մեկ ամսվա ընթացկում, ապա բաց դատավարությամբ Դատարանի ընդունած որոշման ընթերցումից հետո, կամ ծանուցումը ստանալուց հետո, եթե CNDA-ն իր որոշումն ընդունել է կարգադրությամբ:.

Նման պարագայում դուք պետք է լքեք Ֆրանսիայի տարաքը, և ձեր նկատմամբ կարող է ընդունվել երկրի տարածքը լքելու պարտավորության մասին որոշում:

Պետական Խորհրդում վճռաբեկ կարգով ներկայացրած բողոքարկումը թու՞յլ է տալիս արդյոք երկրի տարածքում մնալու իրավունքից օգտվել

Դուք CNDA-ի որոշումը Պետական Խորհրդում վճռաբեկ կարգով բողոքարկելու հնարավորություն ունեք. Պետական Խորհրդում բողոքարկում ներկայացնելու համար ժամկետը երկու ամիս է՝ Դատարանի որոշման ծանուցումը ստանալուց հետո:

Պետական Խորհուրդը չի ուսմնասիրելու ձեր գործի բոլոր փաստերը, այլ միայն այն հանգամանքը, թե արդյոք պահպանվել են գործընթացի կանոնները, թե գործընթացի սխալ

տեղի չի ունեցել, և թե արդյոք ապաստանի հարցերով դատավորն իր իրավունքը ճիշտ է կիրառել:.

Այնուամենայնիվ, այս բողոքարկումը երկրի տարածքում մնալու իրավունք չի տալիս ձեզ, և ձեզ կարող են հեռացնել երկրի տարածքից Պետական Խորհրդի կողմից որոշումն ընդունելուց առաջ:

5.2. Սեփական երկիր վերադառնալու համար տրամադրվող օգնությունը.

Պրեֆեկտուրան ձեզ կծանուցի Ֆրանսիայի տարածքը լքելու ձեր պարտավորության (OQTF) մասին, և, եթե դուք համապատասխանում եք պայմաններին, ապա այդ պարտավորությունը կարող է ուղեկցվել երկրից մեկնելու համար տրամադրվող ժամկետով, որը սովորաբար 30 օր է: Այդ ժամկետի ընթացքում դուք կարող եք դիմել՝ սեփական երկիր կամավոր կերպով վերադառնալու համար տրամադրվող օգնությունից: Նման պարագայում դուք պետք է դիմեք Ներգաղթի ու Ինտեգրացիայի Ֆրանսիական Գրասենյակ (OFII):

✓ **Սեփական երկիր վերադառնալու համար օգնությունը**

Սեփական երկիր վերադառնալու համար օգնության նպատակն է հեշտացնել անկանոն կարգավիճակ ունեցող օտարերկրացիների կամավոր վերադարձն իրենց երկիր: Այդ օգնությունից օգտվելու համար հնարավոր է դիմել երկրի տարածքը լքելու մասին պարտավորության ծանուցումը ստանալուց անմիջապես հետո: Սեփական երկիր կամավոր վերադարձի համար տրամադրվող ժամկետից հնարավոր է օգտվել՝ նման պարագայում տրամադրվող օգնության համար դիմելու նպատակով:

Սեփական երկիր վերադարձը սատարելու նպատակով OFII-ն տրամադրում է օգնություն, որը ներառում է.

- սեփական երկիր **վերադարձը կազմակերպելու հարցում վարչական և նյութական օգնություն,** ինչը ենթադրում է վերադարձի համար հատկացվող նյութական օգնություն՝ վերադարձողի ու իր ընտանիքի անդամների համար,

  - օդային տրանսպորտի տոմսերի ամրագրում,

  - օգնություն՝ ճամփորդական փաստաթղթերը ձեռք բերելու համար,

  - Ֆրանսիայում իրենց կացարանից մինչև մեկնման օդանավակայան տեղափոխելը,

  - օդանավակայանում մեկնման փաստաթղթերի ձևակերպման հետ կապված օգնություն,
- իենց բնակության վայրից մինչև սեփական երկիր հասնելու համար **տրանսպորտային բոլոր ծախսերի վճարում,** ինչը ներառում է նաև ուղեբեռի հետ կապված ծախսերը, որի չափը սահմանվում է վերադարձի երկրի համար սահմանված չափանիշների հիման վրա,
- **ֆինանսական օգնություն**, որն ամբողջությամբ կտրամադրվի մեկնող օտարերկրացուն մեկնման պահին.

✓ **Հասարակական կյանքին կրկին ներգրավելու շրջանակներում տրամադրվող օգնություն**

Վերոհիշյալ օգնությանը զուգահեռ կամ դրանից անկախ՝ սեփական երկիր վերադարձած օտարերկրացիներին կարող է տրամադրվել նաև սոցիալական և տնտեսական կյանքին կրկին ներգրավելու համար հատկացվող օգնություն:

Հնարավոր է, որ այդ օգնությունը տրամադրվի ապաստանի հայցում մերժված օտարերկրացիներին ու իրենց ընտանիքի անդամներին՝ որոշ պայմանների առկայության դեպքում:

Կյանքին կրկին ներգրավելու շրջանակներում տրամադրվող օգնությունը երեք մասից է բաղկացած: Կախված այդ օգնությունը ստացող նպաստառուների կարգավիճակից ու պահանջներից՝ երեք մասից բաղկացած այդ օգնությունները կարող են տրամադրվել համատեղ, ինչը պայմանավորված է նպաստառուների շահերով.

- **սոցիալական կյանքին ներգրավելու համար տրամադրվող օգնություն՝ երկիր վերադառնալուց անմիջապես հետո** (մաս 1),
  Բժշկական, նյութական ու ֆինանսական օգնություն. այն կարող է տրամադրվել սեփական կացարանը (բնակարանը) բարեկարգելու համար կամ սահմանափակ ժամանակով բնակեցնելու նպատակով, բժշկական ծախսերի, երեխաների դպրոցական ծախսերի, ինչպես նաև դպրոցական պարագաների գնման հետ կապված ծախսերի վճարում:
  Այդ օգնությունը կարող է տրամադրվել նաև սահմանափակ ժամանակով սոցիալական օգնության շրջանակներում, օրինակ՝ ընտանիքի կարիքները գնահատելու տեսքով:

- **աշխատանքի շնորհիվ կյանքին ներգրավելու համար տրամադրվող օգնություն** (մաս 2):
  Այդ օգնությունը կարող է տրամադրվել հետևյալ տեսքով.
  ○սեփական երկրում աշխատանքի տեղավորելու համար օգնություն,
  ○աշխատանք փնտրելու համար օգնություն,
  ○մասնագիտական վերապատրաստման համար օգնություններ:

- **կյանքին ներգրավելու համար տրամադրվող օգնություն՝ սեփական ձեռնարկությունը ստեղծելու միջոցով** (մաս 3).

5.3. Դեպի սեփական երկիր հարկադրված վերադարձ.

Եթե սեփական երկիր վերադառնալու համար ձեզ ժամանակ է հատկացվել, և եթե այդ ընթացքում դուք չեք լքել երկրի տարածքը, ապա դուք Ֆրանսիայի տարածքում անկանոն կարգավիճակում եք հայտնվում:
Նման պարագայում ոստիկանության աշխատակիցները կարող են ձեզ ետ ուղարկել: Երկրից ձեզ հեռացնելու այդ որոշումից առաջ հնարավոր է, որ դուք տնային կալանքի ենթարկվեք կամ ձերբակալվեք:

Եթե ձեր նկատմամբ OQTF-ի մասին որոշում է ընդունվել՝ առանց կամավոր վերադարձի համար հատկացվող ժամկետի, ապա դուք անկանոն կարգավիճակ կունենաք այդ որոշման ծանուցումը ստանալուց հետո, և կարող են ձեզ ետ ուղարկել ցանկացած պահի:

6. Պաշտպանություն ստացած անձանց իրավունքները

Եթե ձեզ շնորհվել է փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտպանություն, ապա դուք գտնվում եք Ֆրանսիայի իշխանությունների պաշտպանության ներքո: Դուք այլևս չեք կարող դիմել ձեր երկրի իշխանություններին, ո՛չ էլ կարող եք վերադառնալ ձեր երկիր՝ ձեր վախերի պատճառով:

OFPRA-ն է ապահովելու ձեր վարչական ու իրավաբանական պաշտպանությունը: Դա նշանակում է, որ այդ հաստատությունն է ձեզ տալու քաղաքացիական կացության փաստաթղթերն ու վարչական փաստաթղթերը՝ ձեր քաղաքացիական կացությունը վերակազմավորելուց հետո:

6.1. Կացությունը Ֆրանսիայում.

Որպես փախստական՝ դուք իրավունք ունեք ստանալ տաս տարվա վավերականությամբ բնակության քարտ, որի ժամկետն ինքնաբերաբար երկարաձգվելու է, և որը ձեզ իրավունք է տալիս ազատ տեղաշարժվել Ֆրանսիայի տարածքում:.

Փախստականի կարգավիճակը ձեզ շնորհելու վերաբերյալ նամակը ստանալուց անմիջապես հետո դուք պետք է դիմեք ձեր բնակության վայրի պրեֆեկտուրա: Կացության իրավունքի քարտը ստանալու համար ձեր դիմումից հետո՝ 8 օրվա ընթացքում, պրեֆեկտուրան ձեզ 6 ամիս վավերականություն ունեցող, այնուհետն երկարացման իրավունքով, կացության թույլտվության առաջին ստացականը կշնորհի՝ "Ճանաչվել է փախստական" մակագրությամբ:

Այդ ստացականը ձեր ընտրած մասնագիտությամբ զբաղվելու իրավունք է ընձեռում ձեզ: Այն կնորացվի այնքան ժամանակ, մինչև դուք ստանաք բնակության քարտը: Դուք կստանաք բնակության քարտ, երբ OFPRA-ն վերակազմավորած լինի ձեր քաղաքացիական կացությունը:

Եթե ձեզ շնորհվել է օժանդակ պաշտպանություն, ապա դուք իրավունք ունեք ստանալ չորս տարի վավերականությամբ բնակության քարտ, որը ձեզ Ֆրանսիայի տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունք է տալիս:

Ձեզ պաշտպանություն շնորհելու նամակը ստանալուց անմիջապես հետո դուք պետք է դիմեք ձեր բնակության վայրի պրեֆեկտուրա: Կացության իրավունքի քարտը ստանալու համար ձեր դիմումից հետո՝ 8 օրվա ընթացքում, պրեֆեկտուրան ձեզ 6 ամիս վավերականություն ունեցող, այնուհետն երկարացման իրավունքով, կացության թույլտվության առաջին ստացականը կշնորհի՝ "ստացել է օժանդակ պաշտպանություն" մակագրությամբ: Այդ ստացականը ձեր ընտրած մասնագիտությամբ զբաղվելու իրավունք է ընձեռում ձեզ: Դուք կստանաք բնակության քարտ, երբ OFPRA-ն վերակազմավորած լինի ձեր քաղաքացիական կացությունը:

Չորս տարի կանոնավոր բնակությունից հետո ձեզ կշնորհվի տաս տարի վավերականությամբ բնակության քարտ:

6.2. Ընտանիքի կացությունը.

■ Ձեր ընտանիքի անդամների կացության իրավունքը.

Եթե ձեզ շնորհվել է փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտապանություն, ապա ձեր բնակության քարտի նույն քարտից լիիրավ կարող են օգտվել հետևյալ անձինք.

- ձեր ամուսինը կամ ձեր ընկերը, որի հետ դուք կապված եք քաղաքացիական միության կապերով, և որը առնվազն 18 տարեկան է, և որի հետ քաղաքացիական միությունը տեղի է ունեցել ապաստանի ձեր հայցը ներկայացնելուց առաջ՝ այն պայմանով, որ ամուսնությունը կամ միությունը կատարվել է առնվազն մեկ տարի առաջ և եթե այդ ընթացքում համատեղ կյանքը չի դադարել,
- ձեր ամուսինը, ձեր ընկերը, որի հետ դուք կապված եք քաղաքացիական միության կապերով, կամ ձեր կողակիցը, եթե նա Ֆրանսիայում բնակվելու իրավունք է ստացել՝ ընտանիքի վերամիավորման հիմունքներով (տե՛ս "Ընտանիքի վերամիավորման իրավունքը" խորագիրը ստորև),
- ձեր երեխաները՝ 18 տարեկանը լրանալուն հաջորդող տարվա ընթացքում, կամ 16 տարեկան հասակում, եթե նրանք ցանկանում են աշխատել,
- ձեր ծնողները (առաջին աստիճանի ուղիղ կապ ունեցող ծնողը), եթե դուք դեռ անչափահաս եք կամ ամուրի:

Ձեր ընտանիքի անդամները պետք է դիմեն ձեր բնակության վայրի պրեֆեկտուրա՝ բնակության իրենց քարտը ստանալու համար:

■ Ընտանիքի վերամիավորման իրավունքը.

Եթե պաշտպանություն ստանալու պահին ձեր ընտանիքը գտնվում էր Ֆրանսիայից դուրս, ապա դուք կարող եք պաշտպանություն ստանալուց անմիջապես հետո, առանց ռեսուրսների ու բնակեցման պայմանի, նրանց բերել Ֆրանսիա՝ կիրառելով ընտանեկան վերամիավորման ընթացակարգը:

Այս իրավունքը վերաբերում է.

- ձեր ամուսնուն կամ ձեր ընկերոջը, որի հետ դուք կապված եք քաղաքացիական միության կապերով, որը առնվազն 18 տարեկան է, և որի հետ քաղաքացիական միությունը տեղի է ունեցել ապաստանի ձեր հայցը ներկայացնելուց առաջ,
- ձեր կողակցին, որն առնվազն 18 տարեկան է, ու որի հետ ապաստանի ձեր հայցը ներկայացնելուց առաջ դուք բավականին կայուն ու երկար միասնական կյանք եք վարել,
- ձեր միությունից ծնված երեխաներին, եթե նրանք առավելագույնը 19 տարեկան են ու չամուսնացած,
- նախկին միություններից ծնված և 18 տարեկանից ցածր ձեր և ձեր կողակցի երեխաներին: Դա վերաբերում է այն երեխաներին՝
  - ✓ որոնք ողղակի ազգակցական կապով կապված են ձեր կամ ձեր կողակցի հետ, կամ որոնց մյուս ծնողը մահացած է կամ զրկված է իր ծնողական իրավունքներից,
  - ✓ որոնք ծնողական իրավունքի հիմունքներով և օտարերկրյա դատական կարգով ընդունված որոշման համաձայն՝ վստահվել են ձեզ կամ ձեր կողակցին: Անհրաժեշտ է ներկայացնել այդ որոշման մի կրկնօրինակ, ինչպես նաև երեխային՝ Ֆրանսիա բերելու հետ կապված մյուս ծնողի թույլտվությունը,
- ձեր ծնողները (առաջին աստիճանի ուղիղ կապ ունեցող ծնողը), եթե դուք դեռ անչափահաս եք կամ ամուրի: Իրենք կարող են գալ իրենց անչափահաս և ամուրի երեխաների հետ միասին, որոնց խամքն իրենք կրում են օրինական կարգով:

Ֆրանսիա մուտք գործելու համար ձեր ընտանիքի անդամները պետք է 3 ամսից ավել ժամանակահատվածով բնակեցման համար մուտքի վիզա ստանալու նպատակով դիմեն դիվանագիտական կամ հյուպատոսական իշխանություններին, որոնք որոշում կկայացնեն շատ կարճ ժամանակահատվածում: Օտարերկրացիների ընտանիքների հարցերով զբաղվող գրասենյակին նախնական նամակ ուղարկելու ոչ մի անհրաժեշտություն չկա:

Ընտանեկան վերամիավորումը կարող է ձեզ մերժվել, եթե ձեր դեպքը չի համապատասխանում հիմնական սկզբունքներին, որոնք Հանրապետության օրենքների համաձայն՝ կառավարում են ընտանեկան կյանքը Ֆրանսիայում: Նույն կերպ, ընտանեկան վերամիավորումից կարող է զրկվել ձեր ընտանիքի անդամներից մեկը, որի ներկայաությունը Ֆրանսիայում կարող է սպառնալիք ներկայացնել հասարակական կարգ ու կանոնի համար, կամ այն պարագայում, երբ հաստատվել է, որ նա այն հետապնդումների ու սպառնալիքների սադրիչը, հեղինակը կամ մեղսակիցն է, որոնց հիման վրա ձեզ ապաստանի հիմունքներով պաշտպանություն է շնորհվել:

Եթե դուք ամուսնացել եք ապաստանի ձեր հայցը ներկայացնելուց հետո, ապա դուք OFII-ին պետք է ներկայացնեք ընտանեկան վերամիավորման դիմում:

6.3. Ինտեգրացման ուղին.

- **Ընդունման և ինտեգրացման պայմանագրի ստորագրումը Ներգաղթի ու Ինտեգրացիայի Ֆրանսիական Գրասենյակի հետ (OFII).**

Որպես փասխստական կամ օժանդակ պաշտպանություն ստացած անձ՝ դուք պետք է ընդունելության և ինտեգրացիայի պայմանագիր (CAI) ստորագրեք OFII-ում: Ձեր և Պետության միջև ստորագրված այդ պայմանագրի նպատակն է Ֆրանսիայի հասարակության մեջ ձեր ինտեգրացիան հեշտացնելը:

Այդ պայմանագիրը ձեզ իրավունք է տալիս.

- մասնակցել քաղաքացիության քառօրյա դասընթացին, որի շրջանակներում կներկայացվեն պետության հիմնավոր հատկանիշները, սկզբունքներն ու արժեքները, Ֆրասիայում կյանքին վերաբերող իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ֆրանսիական հասարակության կազմակերպումը;
- Լեզվի դասընթացներ՝ կախված ձեր մակարդակից՝ ֆրանսերեն լեզուն սովորելու համար: Այդ դասընթացներից հետո դուք կարող եք ստանալ լեզվի ձեր մակարդակին համապատասխան վկայական;
- մասնագիտական կողմնորոշման հարցում խորհուրդներ ու համապատասխան օգնություն՝ ձեր մասնագիտական ներգրավումը հեշտացնելու նպատակով;
- ձեր կարիքներին համապատասխանող օժանդակություն՝ ընդունելության ու ինտեգրացիայի ձեր պայմանները հեշտացնելու նպատակով:

Լրացուցիչ տեղեկությունների համար դուք կարող եք կապնվել ձեր բնակության վայրի OFII-ի տարածքային վարչության հետ:

6.4. Սոցիալական իրավունքները.

■ Բնակարանի հասանելիությունը.

Եթե ապաստանի ձեր գործընթացի ընթացքում դուք բնակվել եք ապաստան հայցողների ընդունման կենտրոնում (CADA) կամ պետական ընդունելության շրջանակներում որևէ այլ կառույցում, ապա պաշտպանություն ստանալուց հետո դուք իրավունք ունեք շարունակել այնտեղ բնակվել 3 ամիս ժամկետով, որը կարող է նորացվել մեկ անգամ՝ պրեֆեկտի համաձայնությամբ:

Որպես պաշտպանություն ստացած անձ՝ դուք կարող եք դիմել OFII-ին՝ բնակության ժամանակավոր կենտրոնում (CPH) տեղ ստանալու համար: Եթե դուք համապատասխանեք ընդունելության պայմաններին, ու եթե ազատ տեղ լինի այնտեղ, ապա դուք այնտեղ կբնակեցվեք ինն ամիս ժամկետով, որը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ երեք ամսով:

Կենտրոնի աշխատակիցները ձեզ կօգնեն ինտեգրացման հարցերում՝ ձեր անհատական կարգավիճակն ամբողջությամբ ուսումնասիրելուց հետո:

Դրանից բացի, դուք կարող եք օգտվել մասնավոր հատվածում կամ սոցիալական բնագավառում բնակարանից՝ համապատասխան դիմում ներկայացնելով իրավասու կազմակերպություններին կամ հաստատություններին:

■ Հասանելիությունը աշխատանքային շուկա.

Եթե ձեզ ճանաչել են որպես փախստական, ապա դուք աշխատանքային շուկա ազատ մուտք եք ստանում՝ "շնորհված է փախստականի կարգավիճակ" մակագրությամբ կեցության թույլտվության առաջին ստացականը ստանալուց անմիջապես հետո:

Եթե ձեզ օժանդակ օգնություն է շնորհվել, ապա դուք նույնպես կարող եք աշխատել՝ "ստացել է օժանդակ պաշտպանություն" մակագրությամբ առաջին ստացականը ստանալուց անմիջապես հետո:

Դուք կարող եք ստորագրել որոշակի ժամանակով սահմանված աշխատանքային պայմանագիր (CDD), ինչպես նաև անժամկետ աշխատանքային պայմանագիր (CDI): Դուք կարող եք գրանցվել նաև աշխատանք փնտրողների ցուցակում և օգտվել անձնական խորհրդատվությունից: Դուք կարող եք մասնագիտական վերապատրաստման դասընթացներ սկսել:

Փախաստականի կարգավիճակ ունեցող անձի ընտանիքի անդամների բնակության քարտերը և օժանդակ պաշտպանություն ստացած անձի ընտանիքի անդամների բազմամյա բնակության քարտերն աշխատելու իրավունք են տալիս:

Որոշ մասնագիտություններ կանոնակարգված են ու ենթակա են դիպլոմների կամ քաղաքացիության պայմանների առկայությանը: Ֆրանսիայի Անդրծովյան դեպարտամենտում կամ համայնքում ձեռք բերած բնակության քարտը Ֆրանսիայի Մետրոպոլում աշխատելու իրավունք չի տալիս:

■ Բուժօգնության հասանելիությունը.

Որտե՞ղ ստանալ բուժօգնություն, տե՛ս պարագրաֆ 4.4 "Հասանելիությունը բուժօգնությանը/ Ինչպե՞ս ստանալ փոխհատուցումը ձեր բժշկական ծախսերի համար ":

Ինչպե՞ս ձեռք բերել բժշկական ապահովագրություն՝ առողջապահական ծախսերը վճարելու համար:

- **Եթե դուք դեռ չեք դիմել SPAM-ին՝ ձեր բժշկական ապահովագրությունը ստանալու համար (բժշկական ապահովագրություն և լրացուցիչ SMU).**

Կատարվող քայլերին տեղեկանալու համար՝ տե՛ս 4.4 պարագրաֆը՝ "Հասանելիությունը բուժօգնությանը" և "Ինչպե՞ս ձեռք բերել բժշկական ապահովագրություն՝ ձեզ տրամադրվող բժշկական ծառայությունները հոգալու համար".

Բժշկական ապահովագրություն ստանալու ձեր դիմումին դուք պետք է կցեք հետևյալ փաստաթղթերը՝

- պրեֆեկտուրայի կողմից տրված և "ճանաչվել է փախստական" կամ "ստացել է օժանդակ պաշտպանություն" մակագրությամբ ստացականը (ռեսեպիսեն),
- ժամանակավոր ընտանեկան տեղեկանքը, եթե դուք ձեր խնամքին երեխաներ ունեք,
- բնակության/գրանցման վայրից տեղեկանք, եթե ունեք այդպիսին:.

- **Եթե դուք արդեն դիմել եք CPAM՝ ձեր բժշկական ապահովագրության համար, ապա**

Դուք արդեն ստացել եք վկայական CPAM-ից: Դուք շարունակում եք օգտվել բժշկական ապահովագրությունից և հավելյալ համապարփակ բժշկական ապահովագրությունից (CMU), եթե դուք դրանց համար դիմել եք: Ամեն դեպքում, հիշե՛ք, որ լրացուցիչ CMU-ի ժամկետը երկարաձգելու համար դուք պետք է դիմեք դրա ընթացիկ վավերականության ժամկետը սպառվելուց երկու ամիս առաջ (լրացուցիչ CMU-ի վավերականության ժամկետը նշված է ձեր վկայականում):

Դուք պետք է CPAM ուղարկեք կացության թույլտվության համար դիմումի ստացականի մեկ կրկնօրինակ, ինչպես նաև OFPRA-ի կողմից ձեզ տրված փաստաթղթերի կրկնօրինակները:

Նման պարագայում դուք կստանաք նոր վկայական՝ սոցիալական ապահովագրության նոր համարով:

Այդ ժամանակ դուք կարող եք ձեր CPAM դիմել՝ Carte Vitale (բժշկական ապահովագրության քարտ) ստանալու համար: Այդ քարտն անվճար է, այն փոխարինում է իրավունքների տեղեկանքը, և դուք այն պետք է ներկայացնեք ձեր բոլոր բժշկական ծառայությունների ժամանակ:

■ Սոցիալական ու ընտանեկան նպաստները.

Եթե դուք համապատասխանում եք անհրաժեշտ պայմաններին, ապա կկարողանաք օգտվել տարբեր սոցիալական ծառայություններից (ինչպիսիք են՝ ակտիվ համերաշխության եկամուտը (RSA), գործունեության համար նպաստը, բնակության համար անձնական նպաստը կամ չափահաս հաշմանդամներին տրամադրվող նպաստը), ինչպես նաև ընտանեկան նպաստից, եթե դուք երեխաներ ունեք ձեր խնամքի տակ:

Սոցիալական նպաստը ձեզ մինիմալ ռեսուրսներով ապահովող ֆինանսական օգնություններն են կամ աշխատավարձի լրացումը, որը ձեզ տրամադրվում է՝ հատկապես կացարանի հետ կապված ծախսերում ձեզ օգնելու համար: Այդ սոցիալական նպաստները ձեզ տրամադրվում են նաև երեխայի ծնունդի հետ կապված, դայակի մոտ երեխային պահելու հետ կապված, ուսումնական տարվա վերսկսման հետ կապված, հաշմանդամության հետ կապված, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, երեխաների դաստիարակության ու երեխաներին պահելու հետ կապված ծախսերում ձեզ օգնելու համար:

Սոցիալական ու ընտանեկան նպաստները տրամադրվում են միայն սահմանափակ ռեսուրսներ ունեցող անձանց: Նպաստները փոխանցվում են Ֆրանսիայի ողջ տարածքում հարյուրավոր վայրերում տեղակայված ընտանեկան նպաստների գրասենյակների (CAF) և գյուղատնտեսական սոցիալական փոխօգնության հիմնադրամների կողմից:

Այդ նպաստների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու և համապատասխան դիմում ներկայացնելու համար դուք կարող եք դիմել ձեր բնակության վայրի ընտանեկան նպաստների գրասենյակ (CAF) կամ կարող եք ձեր դիմումը ներկայացնել օնլայն տարբերակով (www.caf.fr ; www.msa.fr կայքերում):

Ուշադրություն, RSA-ից ու գործունեության համար տրամադրվող պարգևից օգտվելու համար դուք պետք է դիմում ներկայացնեք: Ձեր իրավունքները կուսումնասիրվեն միայն այն ժամանակ, երբ ձեզ շնորհվի փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտպանություն:

6.5. Ճանապարհորդությունը դեպի արտասահման.

Եթե ձեզ պաշտպանություն է շնորհվել, ու եթե դուք ցանկանում եք ճանապարհորդել Ֆրանսիայի սահմաններից դուրս, ապա դուք կարող եք ստանալ ձեր բնակության վայրի պրեֆեկտուրայի կողմից տրամադրվող ճամփորդական փաստաթուղթ:

Եթե դուք ճանաչվել եք փախստական, ապա կստանաք 5 տարի վավերականության ժամետով ճամփորդական փաստաթուղթ: Դրա դիմաց պետք է տուրք վճարվի, որի արժեքն է 45 եվրո:

Եթե ձեզ շնորհվել է օժանդակ պաշտպանություն, ապա դուք կստանաք չորս տարի վավերականության ժամկետով անձը հաստատող ու ճամփորդական փաստաթուղթ: Դրա դիմաց պետք է տուրք վճարվի, որի արժեքն է 40 եվրո:

Այս ճամփորդական փաստաթղթերը չեն կարող նորացվել (երկարաձգվել) Ֆրանսիայի դիվանագիտական և հյուպատոսական հաստատություններում: Դա նշանակում է, որ ճանապարհորդության մեկնելուց առաջ դուք պետք է վստահ լինեք, որ ձեր ճամփորդական փաստաթուղթը ուժի մեջ է ձեր ճամփորդության ողջ ընթացքում:

Եթե ձեր ճամփորդական փաստաթղթի վավերականության ժամկետն ավարտվի այն ժամանակ, երբ դուք Ֆրանսիայի սահմաններից դուրս գտնվեք (կամ եթե դուք այն կորցնեք, կամ եթե ձեզանից այն գողանան), ապա դուք պետք է դիմեք Ֆրանսիայի դիվանագիտական ու հյուպատոսական հաստատություններին այն երկրում, որտեղ դուք գտնվում եք, որպեսզի ձեզ տրամադրեն հյուպատոսական անցագիր, որը, ուժի մեջ գտնվող ձեր կացության քարտի հետ միասին, ձեզ թույլ կտա վերադառնալ Ֆրանսիա:

Եթե ձեզ շնորհվել է փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտպանություն, ապա Ֆրանսիայի տարածքում գտնվող ու ապաստանի հիմունքներով պաշտպանություն ստանալուն չհավակնող ձեր անչափահաս երեխային կարող է տրվել մեկ տարի վավերականության ժամկետով անձը հաստատող և ճամփորդական փաստաթուղթ: Դրա դիմաց պետք է տուրք վճարվի, որի արժեքն է 15 եվրո:

Կարո՞ղ եք արդյոք ճամփորդել ձեր երկիր

Ճամփորդական այս փաստաթղթերը ձեզ իրավունք չեն տալիս մեկնել ձեր երկիր: Եթե դուք վերադառնաք ձեր երկիր, ապա OFPRA-ն կարող է դիտարկել, որ ձեզ այնտեղ այլևս վտանգ չի սպառնում, ու կարող է վերջ դրվել ձեզ շնորհված պաշտպանությանը (տե՛ս 6.7):

Այնուամենայնիվ, խիստ բացառիկ դեպքերում (օրինակ՝ մոտիկ բարեկամի մահվան կամ լուրջ հիվանդության դեպքում), և եթե դուք դրա համար դիմեք պրեֆեկտուրա, ապա կարող եք ստանալ առավելագույնը 3 ամիս վավերականության ժամկետով անցագիր, որը ձեզ թույլ կտա մեկնել ձեր երկիր:

6.6. Քաղաքացիության ստացումը (Նատուռալիզացիա).

Եթե դուք ճանաչվել եք փախստական, ապա դուք կարող եք դիմել Ֆրանսիայի քաղաքացիության համար՝ փախստականի կարգավիճակը ստանալուց անմիջապես հետո:

Եթե ձեզ շնորհվել է օժանդակ պաշտպանություն, ապա քաղաքացիություն ստանալու նպատակով հայց ներկայացնելուց առաջ դուք պետք է ապացուցեք, որ օրինական կերպով Ֆրասիայում եք բնակվում առնվազն 5 տարի շարունակ:

Դուք պետք է համապատասխանեք որոշ պայմանների (օրինակ՝ ֆրանսերեն լեզվի իմացություն)՝ քաղաքացիություն ստանալու համար ձեր թեկնածությունը ներկայացնելուց առաջ:

Դուք ձեր գործը պետք է ներկայացնեք քաղաքացիության հարցերով զբաղվող որևէ կենտրոն:

6.7. Պաշտպանության ավարտը.

- ✓ **Խարդախություն.** Եթե պարզվի, որ ձեզ պաշտպանություն շնորհելու որոշումը խարդախության (կեղծարարության) արդյունք է, ապա OFPRA-ն կարող է վերջ դնել ձեզ շնորհված այդ պաշտպանությանը:

- ✓ **Դուք նոր քաղաքացիություն եք ձեռք բերել, որն ապահովում է ձեր պաշտպանությունը,** և **ինչի արդյունքում Ֆրանսիայի կողմից ձեզ շնորհած պաշտպանությունն անօգուտ է դառնում:**

- ✓ **Ձեզ ձեր երկրում այլևս վտանգ չի սպառնում.** OFPRA-ն կարող է դիտարկել, որ ձեզ այլևս վտանգ չի սպառնում ձեր երկրում և վերջ դնել ձեզ շնորհված պաշտպանությանը, եթե
  - դուք կամավոր կերպով մեկնել եք ձեր երկիր հանգրվանելու,
  - դուք դիմել եք ձեր երկրի իշխանություններին,
  - հաստատվի, որ ձեզ պաշտպանություն շնորհելու հիմքում ընկած հանգամանքների զգալի ու երկարատև փոփոխություն է տեղի ունեցել:

- ✓ **Բացառիկ նախապայմաններ.** OFPRA-ն վերջ կդնի ձեր պաշտպանությանը, եթե պարզվի, որ դուք խաղաղության դեմ, պատերազմական կամ մարդկության դեմ հանցանք եք գործել, կամ որևէ լուրջ հանցանք, որը ՄԱԿ-ի գործունեության նպատակներին ու սկզբունքներին հակասում է:

- ✓ **Ձեր ներկայությունը երկրի տարածքում հասարակական կարգին, հասարակական անվտանգությանը կամ պետական անվտանգությանը լուրջ վտանգ է սպառնում.**

- եթե դուք փախստական եք, ապա ձեզ շնորհված պաշտպանությանը վերջ կդրվի,

- եթե լուրջ հիմքեր կան դիտարկելու, որ ձեր ներկայությունը Ֆրանսիայում պետական անվտանգությանը իրական վտանգ է ներկայացնում;
- Ֆրանսիայում, Եվրոմիության անդամ որևէ երկրում, Լիխտենշտեյնում, Շվեյցարիայում, Նորվեգիայում կամ Իսլանդիայում ձեզ վերջանական դատավճռով դատապարտել են տասը տարի ազատազրկման կամ որպես տերորիստական գործողություններ համարվող հանցանքի համար, և եթե ձեր ներկայությունը ֆրանսիական հասարակությանը լուրջ վտանգ է սպառնում:

- եթե ձեզ շնորհվել է օժանդակ պաշտպանություն, ապա ձեզ շնորհված պաշտպանությանը վերջ կդրվի, երբ ձեր ներկայությունը երկրի տարածքում հասարակական կարգին, հասարակական անվտանգությանը կամ պետական անվտանգությանը լուրջ վտանգ է սպառնում:

ՀԱՎԵԼՎԱԾ. Օգտակար հասցեներ

Այս ցուցակը վերջնական չէ

1. Հասցեներ պետության ողջ տարածքի համար

■ Հաստատություններ

Փախստականների ու հայրենազուրկների ֆրանսիական գրասենյակ (OFPRA)
201, rue Carnot
94 136 FONTENAY-SOUS-BOIS CEDEX
tél : 01 58 68 10 10
fax : 01 58 68 18 99
http://www.ofpra.gouv.fr/

Ապաստանի իրավունքի ազգային դատարան (CNDA)
35, rue Cuvier
93 558 MONTREUIL-SOUS-BOIS Cedex
tél : 01 48 10 40 00
fax : 01 48 18 41 97
http://www.commission-refugies.fr/

Ինտեգրացիայի ու Ներգաղթի ֆրանսիական գրասենյակ (OFII)
44, rue Bargue
75 015 PARIS
tél : 01 53 69 53 70
fax : 01 53 69 53 69
http://www.ofii.fr

■ Միջազգային կազմակերպություններ

Փախստականների հարցերով զբաղվող ՄԱԿ-ի Գերագույն կոմիսար (HCR) Représentation en France
7, rue Henri Rochefort
75017 PARIS
Tél. : +33 (0)1 44 43 48 58
Fax : +33(0)1 44 43 48 61
www.unhcr.fr/fr-fr

■ Ասոցիացիաներ

Խոշտանգումների դեմ պայքարող քրիստոնյաների ասոցիացիա (ACAT)
7, rue Georges Lardennois
75 019 PARIS
tél : 01 40 40 42 43 / fax : 01 40 40 42 44
http://www.acatfrance.fr/

Act'up
9, rue des Dunes
75 019 PARIS
tél : 01 75 42 81 25
http://www.actupparis.org/

ARDHIS
Centre LGBT Paris-Île-de-France,

63, rue Beaubourg, 75003 Paris
tél : 01 43 57 21 47
https://ardhis.org/WP3/

Միջազգային ամնիստիա - Ֆրանսիական Մասնաճյուղ
72-76, boulevard de la Villette
75 019 PARIS
tél : 01 53 38 65 65 / fax : 01 53 38 55 00
http://www.amnesty.fr/

Association Primo Lévi
107, avenue Parmentier
75 011 PARIS
tél : 01 43 14 88 50 / fax : 01 43 14 08 28
http://www.primolevi.asso.fr/

Ֆրանսիայում փախստական բժիշկների ու բուժանձնակազմի ընդունման ասոցիացիա (APSR)
Hôpital Sainte Anne
1, rue Cabanis
75 014 PARIS
tél : 01 45 65 87 50 / fax : 01 53 80 28 19
http://www.apsr.asso.fr

Փախստական մտավորականների բացառիկ օգնության կոմիտե (CAEIR)
43, rue Cambronne
75 015 PARIStél : 01 43 06 93 02 / fax : 01 43 06 57 04

Պրոտեստանտական սոցիալական կենտրոն (CASP)
20, rue Santerre
75 012 PARIS
tél : 01 53 33 87 50 / fax : 01 43 44 95 33
http://www.casp.asso.fr

CIMADE - Էկումենյան փոխօգնության ծառայություն
91 rue Oberkampf
75011 PARIS tél : 01 44 18 60 50 / fax : 01 45 56 08 59
http://www.cimade.org

Աքսորյալների համար բժշկական կոմիտե (COMEDE)
Hôpital de Bicêtre
78, rue du Général Leclerc
BP 31
94 272 LE KREMLIN BICÊTRE
tél : 01 45 21 39 32 / fax : 01 45 21 38 41
http://www.comede.org

Ֆրանսիական Կարմիր Խաչ
98 rue Didot,
75694 Paris Cedex 14 tél : 01 44 43 11 00
fax : 01 44 43 11 01
http://www.croix-rouge.fr

Ներգաղթած աշխատողներին սատարող ասոցիացիաների դաշնություն (FASTI)
58, rue des Amandiers
75 020 PARIS
tél : 01 58 53 58 53 / fax : 01 58 53 58 43
http://www.fasti.org

Forum réfugiés
28, rue de la Baïsse - BP 1054
69 612 VILLEURBANNE CEDEX
tél : 04 78 03 74 45/ fax : 04 72 97 05 81
http://www.forumrefugies.org

France Terre d'Asile (FTDA)
24, rue Marc Seguin
75 018 PARIS
tél : 01 53 04 39 99 / fax : 01 53 04 02 40
http://www.france-terre-asile.org

Ընդունելության համերաշխության խումբ (GAS)
17, place Maurice Thorez
94 800 VILLEJUIF
tél : 01 42 11 07 95 / fax : 01 42 11 09 91
http://www.gas.asso.fr/

Ներգաղթածներին օգնության ու տեղեկատվության խումբ (GISTI)
3, villa Marcès
75 011 PARIS
tél : 01 43 14 60 66 / fax : 01 43 14 60 69
http://www.gisti.org

Մարդու իրավունքների Լիգա (LDH)
138, rue Marcadet
75 018 PARIS
tél : 01 56 55 50 10 / fax : 01 56 55 51 21
http://www.ldh-france.org

Ռասիզմի դեմ պայքարի ու ժողովուրդների համերաշխության համար շարժում (MRAP)
43, boulevard Magenta
75 010 PARIS
tél : 01 53 38 99 99 / fax : 01 40 40 90 98
https://www.mrap.fr/

Կաթոլիկ օգնություն CEDRE
23, boulevard de la Commanderie
75 019 PARIS
tél : 01 48 39 10 92 / fax : 01 48 33 79 70
http://www.secours-catholique.asso.fr

Գաղթածների հովվերգության ազգային ծառայություն (SNPM)
58, avenue de Breteuil
75007 PARIS tél : 01 73 36 69 47

https://migrations.catholique.fr/

2. Տեղական հասցեներ

■ Միակ պատուհաններ

AUVERGE-RHONE-ALPES

- Isère
  12 Place de Verdun, 38000 Grenoble
- Puy-de-Dôme

18 Boulevard Desaix, 63000 Clermont-Ferrand

- Rhône

106 rue Pierre Corneille, 69003 Lyon

BOURGOGNE-FRANCHE-COMTE

- Côte-d'Or

51 rue de la Préfecture, 21041 Dijon

- Doubs

8 bis rue Charles Nodier, 25035 Besançon

- Saône-et-Loire

196 rue de Strasbourg, 71000 Mâcon

BRETAGNE

- Ille-et-Vilaine

3 av. de la Préfecture, 35026 Rennes

CENTRE

- Loiret

181 rue de Bourgogne, 45042 Orléans

GRAND-EST

- Marne

38 rue Carnot, 51036 Châlons-en-Champagne

- Moselle

9 rue de la Préfecture, 57000 Metz

- Bas-Rhin

5 place de la République, 67073 Strasbourg

- Haut-Rhin

7 rue Bruat 68020 Colmar

HAUTS DE FRANCE

- Nord

12/14 rue Jean Sans Peur, 59039 Lille

- Oise

1 place de la Préfecture, 60000 Beauvais

ILE-DE-FRANCE

- Paris

92 boulevard Ney, 75018 Paris

- Seine-et-Marne

12 rue des Saints Pères, 77000 Melun

- Yvelines

1 rue Jean Houdon, 78000 Versailles

- Essonne

Boulevard de France, 91000 Evry

- Hauts-de-Seine

167-177 avenue Joliot Curie, 92000 Nanterre

- Seine-Saint-Denis

13 rue Marguerite Yourcenar, 93000 Bobigny

- Val-de-Marne

13/15 rue Claude Nicolas Ledoux, 94000 Créteil

- Val-d'Oise

5 avenue Bernard Hirsch, 95010 Cergy-Pontoise

NORMANDIE

- Calvados

Rue Daniel Huet, 14038 Caen

- Seine-Maritime

7 place de la Madeleine, 76000 Rouen

NOUVELLE-AQUITAINE

- Gironde

2 esplanade Charles de Gaulle, 33000 Bordeaux

- Vienne

Bâtiment Haussmann, Impasse des Ecossais, 86000 Poitiers

- Haute-Vienne

19 rue Cruveilhier, 87000 Limoges

OCCITANIE

- Haute-Garonne

1 place Saint-Etienne, 31038 Toulouse

- Hérault

34 place des Martyrs de la résistance, 34000 Montpellier

PROVENCE-ALPES-COTE D'AZUR

- Alpes-Maritimes

17 bd du Mercantour 06200 Nice

- Bouches-du-Rhône

66 bis Rue Saint-Sébastien, 13006

PAYS-DE-LA-LOIRE

- Loire-Atlantique

6 quai Ceineray, 44035 Nantes

- Maine-et-Loire

Place Michel Debré, 49934 Angers

OUTRE-MER (services « asile » des préfectures)

- Martinique

Rue Victor Sévère, 972000 Fort-de-France

- Guadeloupe

Grand camp, Immeuble situé à côté de la SIG, 97139 Abymes

- Guyane

23 rue Arago, 97300 Cayenne

- La Réunion

6 rue des Messageries, CS 51079 97404 Saint Denis Cedex

- Mayotte

BP 979 97600 Mamoudzou.

■ Պրեֆեկտուրաներ

ALSACE

- Haut-Rhin
  7, rue Bruat, 68 020 Colmar
- Bas-Rhin
  5, place de la République, 67 073 Strasbourg

AQUITAINE

- Gironde
  2, esplanade Charles de Gaulle,
  33 000 Bordeaux
- Dordogne
  2, rue Paul Louis Courier, 24 000 Périgueux
- Landes
  24, rue Victor Hugo, 40 021 Mont-de-Marsan
- Lot-et-Garonne
  Place de Verdun, 47 920 Agen
- Pyrénées-Atlantiques
  2, rue du maréchal Joffre, 64 021 Pau

AUVERGNE

- Puy-de-Dôme
  18, boulevard Desaix,
  63 000 Clermont-Ferrand
- Allier
  2, rue Michel de l'Hospital, 03 000 Moulins
- Cantal
  2, cours Monthyon, 15 000 Aurillac
- Haute-Loire
  6, avenue du Général de Gaulle
  43 000 Le Puy-en-Velay

BOURGOGNE

- Saône-et-Loire
  196, rue de Strasbourg, 71 000 Mâcon
- Nièvre
  40, rue de la Préfecture, 58 000 Nevers
- Yonne
  Place de la Préfecture, 89 000 Auxerre

- Côte d'Or
  53, rue de la Préfecture, 21 041 Dijon

BRETAGNE
- Ille-et-Vilaine
  3, avenue de la Préfecture, 35 026 Rennes
- Côtes d'Armor
  1, place Général de Gaulle, 22 000 Saint-Brieuc
- Finistère
  42, boulevard Dupleix, 29 000 Quimper
- Morbihan
  24, place de la République, 56 000 Vannes

CENTRE
- Loiret
  181, rue de Bourgogne, 45 042 Orléans
- Cher
  Place Marcel Plaisant, 18 000 Bourges
- Eure-et-Loir
  Place de la République, 28 000 Chartres
- Indre
  Place de la Victoire et des Alliés,
  36 000 Châteauroux
- Indre-et-Loire
  15, rue Bernard Palissy, 37 925 Tours
- Loir-et-Cher
  Place de la république, 41 000 Blois

CHAMPAGNE-ARDENNE
- Ardennes
  Esplanade du Palais de Justice,
  08 000 Charleville-Mézières
- Aube
  2, rue Pierre Labonde, 10 000 Troyes
- Haute-Marne
  89, rue Victoire de la Marne,
  52 011 Chaumont

- Marne
  38, rue Carnot,
  51 036 Châlons-en-Champagne

FRANCHE-COMTE
- Doubs
  8, bis Rue Charles Nodier, 2 5035 Besançon
- Jura
  8, rue de la Préfecture, 3 9000 Lons-le-Saunier
- Haute-Saône
  1, rue de la Préfecture, 70 013 Vesoul

- Territoire de Belfort
  Place de la République, 90 000 Belfort

GUADELOUPE
- Palais d'Orléans, Rue Lardenoy,
  97 109 Basse-Terre 97109, Guadeloupe

ILE-DE-FRANCE
- Paris : 92, boulevard Ney, 75 018 Paris
- Seine-et-Marne
  12, rue des Saints Pères, 77 000 Melun
- Yvelines
  1, rue Jean Houdon, 78 000 Versailles
- Essonne
  Boulevard de France, 91 000 Evry
- Hauts-de-Seine
  167-177, avenue Frédéric et Irène Joliot Curie, 92 000 Nanterre
- Seine-Saint-Denis
  1, esplanade Jean Moulin, 93 007 Bobigny
- Val-de-Marne
  21-29, avenue du Général De Gaulle,
  94 038 Créteil cedex
- Val d'Oise
  5, avenue Bernard Hirsch, 95 010 Cergy-Pontoise

LANGUEDOC-ROUSSILLON
- Hérault : 34, place des Martyrs de la résistance, 34 000 Montpellier
- Aude : 52, rue Jean Bringer,
  11 000 Carcassonne
- Gard : 10, avenue Feuchères, 30 000 Nîmes
- Lozère : rue du faubourg Montbel,
  48 005 Mende
- Pyrénées-Orientales : 120, avenue Emile Roudayre, 66 000 Perpignan

LIMOUSIN
- Corrèze : 1, rue Souham, 19 000 Tulle
- Creuse : 4, place Louis Lacrocq, 23 000 Guéret
- Haute-Vienne : 1, rue de la Préfecture,
  87 000 Limoges

LORRAINE
- Moselle : 9, place de la Préfecture
  570 00 Metz
- Meuse
  40, rue du Bourg, 55 000 Bar-le-Duc
- Meurthe-et-Moselle
  1, rue Préfet Claude Erignac, 54 000 Nancy
- Vosges : Place Foch, 88 026 Epinal

MIDI-PYRENEES

- Haute-Garonne
  1, place Saint-Étienne, 31 038 Toulouse
- Ariège
  2, rue de la préfecture Préfet Claude Erignac, 09 000 Foix
- Aveyron
  7, place Général de Gaulle, 12 000 Rodez
- Gers
  7, rue Arnaud de Moles, 32 000 Auch
- Lot
  Cité Bessières, Rue Pierre Mendes France, 46000 Cahors
- Hautes-Pyrénées
  Place du Général de Gaulle, 65 000 Tarbes
- Tarn
  Place de la Préfecture, 81 013 Albi
- Tarn-et-Garonne
  2, allée de l'Empereur, 82 013 Montauban

NORD-PAS-DE-CALAIS
- Nord
  12/14, rue Jean sans Peur, 59 039 Lille
- Pas-de-Calais
  9, esplanade Jacques Vendroux, 62 100 Calais

BASSE-NORMANDIE
- Calvados
  Rue Daniel Huet, 14 038 Caen cedex 09
- Manche
  Place de la Préfecture, 50 002 Saint-Lô
- Orne
  39, rue Saint-Blaise, 61 018 Alençon

HAUTE-NORMANDIE
- Seine-Maritime
  7, place de la Madeleine, 76 000 Rouen
- Eure
  Boulevard Georges Chauvin, 27 000 Evreux

PAYS DE LOIRE
- Loire-Atlantique
  6, quai Ceineray, 44 035 Nantes
- Vendée
  29, rue Dellile, 85 009 La Roche-sur-Yon
- Maine-et-Loire
  Place Michel Debré, 49 934 Angers
- Mayenne
  46, rue Mazagran, 53 015 Laval
- Sarthe
  Place Aristide Briand, 72 041 Le Mans

PICARDIE

- Oise
  1, place de la Préfecture, 60 000 Beauvais
- Aisne
  27, rue Paul Doumer, 02 000 Laon
- Somme
  51, rue de la République, 80 000 Amiens

POITOU-CHARENTES
- Charente
  7-9, rue de la Préfecture, 16 023 Angoulême
- Charente-Maritime
  38, rue Réaumur, 17 000 La Rochelle
- Deux-Sèvres
  4, rue Duguesclin, 79 099 Niort
- Vienne
  7, place Aristide Briand, 86 000 Poitiers

PROVENCE-ALPES-COTE-D'AZUR
- Bouches-du-Rhône
  66 bis, rue Saint-Sébastien, 13 006 Marseille
- Vaucluse :
  28, boulevard Limbert, 84 000 Avignon
- Alpes-Maritimes
  147, boulevard du Mercantour, 06 200 Nice
- Alpes-de-Haute-Provence
  Avenue Demontzey, 04 002 Digne les Bains
- Hautes-Alpes
  28, rue Saint-Arey, 05 000 Gap
- Var
  Boulevard du 112e régiment d'infanterie,
  83 070 Toulon

RHONE-ALPES
- Isère
  12, place de Verdun, 38 000 Grenoble
- Savoie
  Château des Ducs de Savoie,
  73 018 Chambéry
- Haute-Savoie
  Rue Louis Revon, 74 000 Annecy
- Rhône
  106, rue Pierre Corneille, 69 003 Lyon
- Ain
  4,5 avenue Alsace Lorraine, 01 012 Bourg en Bresse
- Ardèche
  5, rue pierre Filliat, 07 000 Privas
- Drôme
  3, boulevard Vauban, 26 000 Valence
- Loire
  2, rue Charles de Gaulle, 42 022 Saint-Etienne

■ Ներգաղթի ու Ինտեգրացիայի ֆրանսիական գրասենյակի(OFII) տարածքային վարչություններ

Կենտրոնական Վարչություն
44, rue Bargue
75 732 Paris Cedex 15
tél : 01 53 69 53 70

Ամեին (02, 60, 80)
275, rue Jules Barni – Bât. D
80 000 Amiens
tél : 03 22 91 28 99 / amiens@ofii.fr

Բըզանսոն (25, 70, 39, 90)
3, avenue de la Gare d'Eau
25 000 Besançon
tél : 03 81 25 14 39 / besancon@ofii.fr

Բոբինի (93)
13, rue Marguerite Yourcenar
93 000 Bobigny
tél : 01 49 72 54 00 / Seine-saint-denis@ofii.fr

Բորդո (24, 33, 40, 47,6 4)
55, rue Saint Sernin,
33 002 Bordeaux Cedex
tél : 05 57 14 23 00 / bordeaux@ofii.fr
Կան (14, 50, 61)
Rue Daniel Huet
14 038 Caen Cedex 9
tél : 02 31 86 57 98 / Caen@ofii.fr

Կայեն (973
17/19, rue Lalouette BP 245
97 325 Cayenne
tél : 05 94 37 87 00 / cayenne@ofii.fr

Սերժի (95)
Immeuble « Ordinal » Rue des Chauffours,
95 002 Cergy Pontoise Cedex
tél : 01 34 20 20 30 / cergy@ofii.fr

Կլերմոն-Ֆերան (03, 15, 63, 43)
1, rue Assas
63 033 Clermont Ferrand
tél : 04 73 98 61 34 / Clermont-ferrand@ofii.fr

Կրետեյ (91, 94)

13/15, rue Claude Nicolas Ledoux
94 000 Créteil
tél : 01 41 94 69 30 / creteil@ofii.fr

Դիժոն (21, 58, 71, 89)
Cité administrative Dampierre
6, rue du Chancelier de l'Hospital
21 000 Dijon
tél : 03 80 30 32 30 / dijon@ofii.fr

Գրենոբլ (74, 38, 73
Parc Alliance - 76, rue des Alliés
38 100 Grenoble
tél : 04 76 40 95 45 / grenoble@ofii.fr

Լիլ (59, 62)
2, rue de Tenremonde
59 000 Lille
tél : 03 20 99 98 60 / lille@ofii.fr

Լիմոժ (23, 19, 87)
19, rue Cruveihier
87 000 Limoges
tél : 05 55 11 01 10 / limoges@ofii.fr

Լիոն (01, 07, 26, 42, 69)
7, rue Quivogne
69 286 Lyon Cedex 02
Tél : 04 72 77 15 40 / Lyon@ofii.fr
Մարսել (13, 20, 04, 05, 83, 84)
61, boulevard Rabatau
13 295 Marseille Cedex 08
tél : 04 91 32 53 60 / Marseille@ofii.fr

Antenne Mayotte OFII (976)
N15 Espace Coralium, RN1 – CS 80058 Kaweni, 97 600 Mamoudzou
tél : 02 069 62 23 54 / mayotte@ofii.fr

Մլոն (77)
2 bis, avenue Jean Jaurès
77 000 Melun
tél : 01 78 49 20 00 / Melun@ofii.fr

Մեց (54, 55, 57, 88)
2, rue Lafayette
57 000 Metz
tél : 03 87 66 64 98 / metz@ofii.fr

Մոնպելիե (30, 34, 48, 66)
Le Régent - 4, rue Jules Ferry
34 000 Montpellier

tél : 04 99 77 25 50 / montpellier@ofii.fr

Մոնռուժ (92, 78)
221, avenue Pierre Brossolette
92 120 Montrouge
tél : 01 41 17 73 00 / montrouge@ofii.fr

Նանտ (44, 53, 49, 72, 85)
93 bis, rue de la Commune de 1871
44 400 Rezé
tél : 02 51 72 79 39 / nantes@ofii.fr

Նիցցա (06)
Immeuble SPACE- Bât. B
11, rue des Grenouillères
06 200 Nice
tél : 04 92 29 49 00 / nice@ofii.fr

Օռլեան (18, 28, 36, 37, 45, 41)
4, rue de Patay
45 000 Orléans
tél : 02 38 52 00 34 / orleans@ofii.fr

Փարիզ (75)
48, rue de la Roquette
75 11 Paris
tél : 01 55 28 19 40 / paris@ofii.fr

Պուենտ-ա-Պիտրը (971, 972)
Immeuble Plazza - Boulevard Chanzy
97 110 Pointe à Pitre
tél : 05 90 90 01 83 / guadeloupe@ofii.fr

Պուատիե (16, 17, 79, 86)
86, avenue du 8 Mai 1945
86 000 POITIERS
tél : 05 49 62 65 70 / reims@ofii.fr

Ռեմս (08, 10, 51, 52)
26/28, rue Buirette
51 100 Reims
tél : 03 26 36 97 29 / reims@ofii.fr

Ռեն (22, 29, 35, 56)
8, rue Jean Julien Lemordant
35 000 Rennes
tél : 02 99 22 98 60 / rennes@ofii.fr

Լա Ռեունիոն (974)
Préfecture de la Réunion, Place du Barachois
97 405 Saint Denis Cedex
tél : 02 62 40 75 69 / ofii-reunion@ofii.fr

Ռուան (27,76)
Immeuble Montmorency 1
15, place de la Verrerie
76 100 Rouen
tél : 02 32 18 09 94 / rouen@ofii.fr

Ստրասբուրգ (67,68)
4, rue Gustave Doré - CS 80115
67 069 Strasbourg Cedex
tél : 03 88 23 30 20 / strasbourg@ofii.fr

Թուլուզ (09, 12, 19, 23, 32, 31, 65, 87, 46, 81, 82)
7, rue Arthur Rimbaud, CS 40310
31 203 Toulouse Cedex2
tél : 05 34 41 72 20 / toulouse@ofii.fr